


Ա. Զելյակովսկի
ինչպէս պէս և հիմար
պարզէ

1941/0-



MAY 2010

EOS FR. FRI

199 (044)

9-65



370

2253-96

Ա. Ա.



ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է

ՀԵՖԻԱԹ ՊԱՏՄՈՒՅ

Գործնական ձեռնարկ ստորին դասարանների, կրօնի, հա-

յուց լեզվի ուսուցիչների և ծնողների համար.

ՈՒԹԸ ՔՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

1004
15639

Մշակեց

ԱՐԵԱԿ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ

ԱԼՔԲՈԱՆԴՐԱԳՈՒ

Տպարան 6, Սանահին 69ի

1911

17.07.2013



ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ազգային
Գրադարան

ՕՀ
ՁԵ-ՀՀՀՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՈՐԻՆ ՑԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆ

ՎԱՂԱԹԱՆԱԴՐ

ԵՐԱՆՈՒՅԻՆ ԲԱՐԱՑԵԱՆԻ

ՑԻԿԱՏԱԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ*)

Հէքիաթը գրաւիչ և դուրեկան է ոչ միայն փոքրերի,
այլ և հասակաւորների համար:

Հէքիաթը ներկայացնում է նախնական մարդու ազատ
ստեղծագործութեան, վառ երևակայութեան, ողբների,
կախարդական աշխարհի և առհասարակ անբնական եր-
եռյթների հետ կապւած մի պատմութիւն, որը սերտ կեր-
պով առնչութիւն ունի մարդկային կեանքի ելեջների
հետ: Հէքիաթը ներկայացնում է կեանքը իր առաւել և
պակաս կողմերով: Հէքիաթի մէջ ամեն ինչ աւելի խոշոր,
աւելի գրաւիչ և կենդանի կերպով է երևան գալիս: Այս-
տեղ անշունչ առարկաները կենդանանում, խօսում և դոր-
ծում են. այստեղ ամեն ինչ գեղեցիկ և վառ օրինակնե-
րով է դուրս բերած: Այստեղ, մարդկային սիրտ թրթռաց-
նող յոյզեր, մարդկանց ազնւացնող պէս-պէս առարինու-
թիւններ, ինչպէս-ընկերսիրութիւն, բաջութիւն, բարե-
սրտութիւն, հաւատարմութիւն, աշխատասիրութիւն, և
այլն երեան են զալիս և վերջ ի վերջոյ յաղթանակ են
տանում: Հէքիաթի մէջ հերոսները տեսակ տեսակ հնա-
րազիտութիւններով հրաշքներով արգելքներին յաղթելով՝
յաջող կերպով գուրս են զալիս: Այս բաների մէջ մասնակ-
ցում են ոչ միայն հէքիաթում գործող անձնաւորութիւն-
ներն, այլև կենդանիները և անշունչ առարկաները: Միւս
կողմից, մարդկային արժանապատութիւն ստորացնող
անբարոյական երեսյթներն, ինչպէս-չարութիւն, մարդա-
սպանութիւն, խարդախութիւն, գողութիւն, ծովութիւն և
այլն վերջ ի վերջոյ իրանց արժանի պատիժն են ստանում:
Այսպիսով, հէքիաթը մի կողմից մարդկային յատկութիւն-
ներն ազնւացնում, բարձրացնում է, միւս կողմից մտա-
ծելու առատ նիւթ է տալիս և հոգեկան կեանքին բաւա-
կանութիւն պատճառում: Հէքիաթների մէջ իրանց բոլոր
յատկութիւններով երևան են զալիս ընտանի կենդանի-

*) Մանրամասն բացարութիւն տես «Նոր գպլոց» 1908
Հ 2 1909 № 5 և 6 իմ յօդւածները:

ները, վայրենի զաղանները, թոշտնները, անշունչ առարկաները:

Յայտնի է, որ մանուկներն անշունչ առարկաներին շարժող, կենդանի արարածների տեղ են դնում. իսկ կենդանիներին և թոշուններին՝ իբանց նման և հաւասար էակների փոխարէն ընդունում. ահա այս պատճառով մանուկները նրանց հետ սիրով ասում, խօսում են և միծ բաւականութեամբ խաղում են: Նոյնպէս էլ մանուկների համար զժւար դորձ, անկարելի բան չկայ-ամեն ինչ նրանց համար հնարաւոր է և ամեն ինչ հէքիաթական է: Ճիշտ այսպէս է հէքիաթների մէջ. այստեղ էլ անշունչ առարկաներն ապրում են և կենդանիների հետ գործելով ձգտում են այն ամենին՝ ինչ մարդիկ աշխատում են հասնել և ձեռք բերել. Այսպիսով մենք հէքիաթի մէջ գտնում ենք մանուկների հոգու համար սիրելի և զրաւիչ աշխարհը: Մանուկը, նախնիքների ժառանգական այդ տրամադրութիւնը իր հետ աշխարհ բերելով, շրջապատող միջավայրի ազգեցութեան տակ՝ գարզացնում և ուժեղացնում է: Նայարաբերութեան մէջ է մտնում նախնիքների կեանքի, մտածողութեան, զբաղմունքների և այլ հոգեկան յատկութիւնների հետ. նա դառնում է շրջապատող բնութեան, կենդանիների, տիրապետող սովորութիւնների և աշխարհայեցողութեան կենդանի զաւակը:

Հոգեբանական նվանողութեան եւ ժամանակի հապակցութեան օբէնքների հիման վրայ, մանուկը հէքիաթի մէջ զեր խաղացող լեռն ու լիճը, ձորն ու անտառը, թոշունն ու կենդանին պատկերաւոր կերպով փոխազրում և միացնում է իր շրջապատող բնութեան, նրա երեսովների, կենդանական աշխարհի հետ և այլն: Այս պատճառով հայրենական հէքիաթին պէտք է նախապատութիւն տալ, այստեղ արտացոլում է մանկան ժառանգական և շրջապատող կեանքի բոլոր սովորութիւնները, հոգեկան կեանքի առաւել և պակաս կողմերը: Այստեղ բոլոր գործողութիւնները մայրենի երկրի, բնութեան երեսովների, կեն-

դանական և բուսական աշխարհների հետ կապւած՝ մի ամբողջութիւն են կազմում: Այստեղ, մանկան համար ոչ մի օտար, ոչ մի խորթ բան չկայ, որ նրա հոգեկան աշխարհի գործողութիւնները խանգարէ: Այստեղ, հայրենի երկրի սովորութիւնները, նիստ ու կացն, ընտանեկան կեանքը, բարոյականութիւնը, լաւի, վատի զաղափարները և այլն՝ նրա հետ որոշ շափով կապւած են. այդ ամենը հէքիաթի մէջ գործողների բարոյական յաղթանակով մաքրուում, զտուում, բիւրեղանում են և մատաղ հոգիների բարոյական աշխարհի հիմարարելը կազմուում:

Մի բանի խօսք ևս հէքիաթների աւանդման ձևի մասին:

Հէքիաթ կամ պատմութիւն անցնելիս, ընդունւած ձեզ պատմողականն է՝ այսինքն դասաւուն պատմում է, մանուկներն էլ կրկնում են: Այստեղ մանուկներն ինքնուրոյն ոշինչ չեն անում, նրանց գործունէութիւնը կը աւորական է: Հէքիաթ աւանդելու մի ուրիշ ձեն էլ յորինողականըն է: Սա հոգեբանական օբէնքներով մշակւած, մանկավարժութեան մէջ ընդունւած և գործադրած մի ձեն է, որը պատմելով անցնելուց շատ առաւելութիւններ ունի: Դասաւանդութեան այս ձեւը զասարանին կենդանի հետարքը բարութեան մէջ է պահում. իւրաքանչիւր աշակերտ փայլուն աշքերով, գլաւթ զէմքով, հետեւում է զասատուի իւրաքանչիւր հարցին և մասնակցելու ցանկութիւն է յայտնուում:

Յորինողական ձևով պարապելը մանուկների երեակայութիւնը և հետարքը բարութիւնը զրգակով նրանց մտածելու ընդունակութիւնը զարգացնում է: Այստեղ իւրաքանչիւր գլուխ գործում է, իւրաքանչիւրի մտածողութիւնը հրապարակ է բերում, և նրանք ինքնազործունէութեան մէջ զրւելով՝ հետզհետէ սրւում և վարժուում են: Այս ձեռվ պարապելիս հէքիաթների մէջ կատարւածները մանուկներն այնպէս կենդանի կերպով պատկերացնուում են, սրպէս թէ այդ բոլորն իրանց մասնակցութեամբ է կատարւում:

Անշուշտ, յօրինողական ձեռվ պարապողներն աչքի առաջ պէտք է ունենան իրանց մանուկների զարգացումն, ընդունակութիւնը և մտաւոր պաշարի չափն ու սահմանը։ Նրանք հարկաւոր դէպքում պէտք է դիւրութիւններ տան և նպաստող հարցերով հեշտացնեն մանուկների պատասխանները։ Չատ ցանկալի է, որ դասաւուն իր հարցերին պատրաստականութիւն յայտնող բոլոր մանուկների կարծիքներն իմանալուց յետոյ՝ ճշդերն անփոփէր և իր եղբացութեան հետ որպէս վերջնական մշակւութ նիւթ' նըանց տար։ Աւելի պատրաստի մանուկների հետ պարապելիս, դասաւուն համեմատաբար բիշ պէտք է օգնէ։ Դասաւուն իր նպատակայարմար հարցերով մանուկների հոգու մէջ ամբարւած այդ նիւթին վերաբերեալ բոլոր պատկերացումները պէտք է վերաբարդրել տայ, որ նրանք հեշտութեամբ կարողանան նիւթը լրացնել։ Կարծ խօսքով, յօրինողական դասաւանդման ձեզ մանուկների նըքնազոքունէութիւնը, մտածելու ընդունակութիւնը եւ երեւակայութեան զարգացումն գորեղացնում և յառաջ է տանում։

Որովհետեւ հէրիաթը նախնական ժողովրդի ստեղծագործութեան, նրանց երեակայութեան ազատ արտադրութիւնն է, դրա համար չպէտք է աշակերտներից պահանջել, որ նրանք ճիշտ բնագրի խօսքերով պատասխանեն—պէտք է բաւականանալ նրանով, երբ նրանց ասածները հէրիաթի ոգուն համապատասխան են։ Դիւրութեան համար, յօրինողական ձեռվ կազմածս իւրաքանչիւր հէրիաթ բովանդակութեան համաձայն բաժանած է մի բանի մասերի, իւրաքանչիւր մաս վերջանալուց յետոյ՝ դրւած է վերնագիր։ Պարապողն այդ վերնագրի համաձայն նախ հարցերով, ապա ամփոփ կերպով պէտք է պատմել տայ և բաւարար համարելուց յետոյ՝ անցնի միւս մասին։ Այսպէս իւրաքանչիւր մաս մշակելուց յետոյ բոլորը միացնել և միանգամից կրկնել տալ։ Պրկնողութիւնն աւելի հետաքրքիր և կենդանի դարձնելու համար, պէտք է մա-

նուկներն իրանը ներկայացնեն այդ պատմութիւնը, իրանք պէտք է հէրիաթի գործող անձնաւորութիւններ դառնան և ապա կրկնեն։ Սուածնորդի ցուցմունքով մէկը լինելու է, օրինակ, Անտառի մանուկի մէջ, Պախրա, մէկը հորթուկը, մի բանիսը թշնամիները, մէկը պախրատուրը, մէկը մայրը, մէկը թագաւորը և մէկն էլ պատմողը։ Եպահերթով իւրաքանչիւրն իր դերը պէտք է կատարէ։ Չատ ցանկալի է; որ իւրաքանչիւր մանուկ ոչ միայն իր դերը պատմէր այլև որոշ զործողութիւններ կատարելով ներկայացնէր։ Մանուկներն այս ամենը շատ հասարակ կերպով կարող են գլուխ բերել այս բանը նրանց չափազանց հետաքրքրում և կենդանի զործի մասնակցողներ է զարձնում։ Այս կերպ կրկնած և սրվորած հէրիաթը մանուկների համար անմոռանալի է լինում։ Պատահում են մտնուկներ, որ կրկնողութեան և խաղի ժամանակ, իրանց երեակայութիւնն էլ պատմութեան և խաղի մէջ խոռնում են—այս բանը չպէտք է արգելել, միայն չափազանցութիւններից պէտք է խուսափել։ Պէտք է նոյնպէս լաւ հետեւ, որ իւրաքանչիւրն իր դերը լրիւ և կանոնաւոր կատարէ։ Որոշ հէրիաթների մէջ, առաջնորդի իր հայեցողութեան համաձայն կարող է կրճատումներ մտցնել։ Կրկնողութիւնից յետոյ գալիս է խորասուզումն։ Այստեղ բոլոր զործողների արածներն իրանց էական մասերով մէկ մէկու հետ համեմատելով, մանուկների յիշողութեան մէջ մի անգամ էլ վերաբարդրում է և նրանց բարոյական արժէքը գնահատութեան է դրւում։ Այստեղ մանուկներն իրանց սովորած պատմութիւնները կամ կեանքի մէջ տեսած դէպքերը վերաբարդրելով, նրանց բարոյական արժէքը համեմատութեան մէջ են դնում նոր սովորածի հետ և այսպէս հների միջոցով ձեռք բերւած ճշշմարտութիւններն աւելի ամրապնդում, սեփինականութիւնն են դառնում։ Այդ ամենն առածներով կամ ընդհանրացած ասացւածքներով եզրափակում են։*) Այս միջոցով մենք *) ԾՍՆՕԹՈՒԹԻՒՆ. Մանուկներն ազատ կարող են իրանց

մանուկների մէջ սարոյականութեան ճանապարհն ենք բաց անում եւ այսպէս բազալազան նման ըրինակներով զարգացնում, ճոխացնում ենք նրանց բարոյական աշխարհանյեցողութիւնը ու բարոյականութիւնը: Սրանով միանգամայն վերացւում է մինչև այժմ ընդունւած այն չորս ու ցամաք խրատներ կարգալու դաստիարակութեան սրբխալ ուղղութիւնը:

Գործադրութիւն. Մի բան դիտենալ և հասկանալը միայն այն ժամանակ որոշ արժէք կունենայ, եթէ նա կեանքի մէջ գործադրուում է, զրա համար հէքիաթի վերջում, վարժութեան կամ զործադրութեան մէջ կան մի բանի հարցեր, որոնցով մանուկներն իրանց սովորած ճշմարտութիւններն անմիջապէս կեանքի հետ կապում են և իրանց մէջ պատահած զէպշերն, այդշափով զնահատում են: Սրանով նրանց սովորածները, տեսածները գործադրութեան մէջ են զրւում - իսկ այդ բաները ժամանակի ընթացքում հետզհատէ կեանքի մէջ փոխազրելով՝ վարժուում են զրանց մէջ և իրանց համար սովորութիւն են դարձնում: Գործադրութիւնն էլ սովորածի բովանդակութեան համաձայն հանելուկներով, յարմարաւոր փոքրիկ ոտանաւորներով եզրափակում են:

Սուաշին հէքիաթը «Անտառի մանուկը» համեմատաբար աւելի ընդարձակ մանուկների լրիւ պատասխաններով և մակաբերութիւններով է առաջ բերած՝ որպէսզի առաջնորդողները միւս հէքիաթներն էլ այդ կերպ անցնեն. բնականաբար, մանուկների պատրաստի զէպշում, կարելի է բաւականանալ եղած հարցերով.

Յորինողական ձեռվ պարապելն առաջնորդից երկար ժամանակ, ոյժ և համբելութիւն է պահանջում այնպէս որ, մի հէքիաթ մի բանի ժամանակ մէջ հազիւ լրացւի, բայց

ընտանիքներում և գաւառում գործածող առածներն ու ասացւածքները գործածել: Սրանը նրանց համար աւելի հասկանալի և գիւրըմբոնելի են՝ քան ուրիշ գաւառներում գործածող առածներն ու հանելուկները:

զրա փոխարէն նա շուտով կ'զգայ, որ իր աշակերտների հոգեկան զըութիւնը բարձրացած է, նրանց ստեղծագործական ոյժը լարւած է և այս ամենը ծառայում են նրանց ինքնուրոյն գործունէութեանը և զարգացմանը – ահա այն մխիթարական կետը, որով ուսուցիչը շատ զոհ պէտք է լինի:

Ա. 2,

||



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

Այսօր պէտք է սովորենք, թէ ի՞նչպէս թագաւորն անտառում մի մանուկ է գտնում:

— Ի՞նչ պէտք է սովորենք, ով կարող է ասել... ապա դու ասա, չայկ. զու էլ կրկնիք Արփիկ և այլն:

— Այժմ ասացէք. միթէ անտառում մանուկ լինում է. «Անտառում մանուկ չի լինում». — Ինչու անտառում մանուկ չի լինում. «Անտառում մանուկ չի լինում, որովհետեւ անտառում մարդիկ չեն ապրում» — Էլ ինչու. «Որովհետեւ անտառում տներ չկան». — Ապա ինչ կայ անտառում. «Անտառում կան ծառեր, գայլ, արջ, աղւէս» — Էլ ինչ կայ անտառում. — «Անտառում կայ նապաստակ, խոզ, ոզնի» — Դու էլ ասա Սրամ — «Անտառում կայ ծիտ, ագռաւ, կաշաղակ, սոխակ, բազէ և այլն»:

— Ուրեմն անտառում մարդիկ չեն ապրում, անտառում կան տեսակ տեսակ ծառեր, կենդանիներ և թըռչուններ:

— Իսկ ինչպէս էր պատահել, որ այդ մանուկն անտառում էր, ով կասէ. «Այդ մանուկն անտառում կորել էր» — զու էլ ասա Սրմիկ — «Գայլը նրան փախցրել տարել էր»: Դրանցից ոչ մէկն էլ չէր. այ այդ մասին ես ձեզ հիմա կըպատմեմ: Ապա ով կարող է մի անգամ էլ կրկնել, ինչ պիտի սովորենք:

— Լինում է չի լինում, մի մանուկ է լինում. — այդ մանկան անունն ինչ էր, ով կասէ. «Այդ մանկան անունը Տիգրան էր, «Այդ մանկան անունն Արտաշէս էր» և այլն. — Ոչ, դրանցից ոչ մէկն էլ չէր. բայց իհարկէ զուք ձեր անունը գիտէք. ապա զու ասա քո անունն ինչ է. — «Իմ անունն ու ազգանունն է Արփիկ Սրամեան» — զու էլ ասա «Իմ անունն ու ազգանունն է Ցոլակ Ցակորեան» և այլն. Թէ ինչ էր մեր փոքրիկ մանկան անունը մենք շուտով կիմանանք: Սուած մեր մանուկն անտառում չէր ապրում. ապա որտեղ էր ապրում. «Սուած նա տալրում էր քաղա-

բում». զու էլ ասա նարդոս. «Նա ապրում էր գիւղում». «Նա ապրում էր իրանց տանը» և այլն:

— Դուք այդ չիմացաք, բայց իհարկէ կարող էք ասել, թէ դուք որտեղ էք ապրում. ապա զու ասա Գիսակ. «Ես ապրում եմ քաղաքում» — Ա՞ր վողոցում. «Ես ապրում եմ քաղաքում, Միքայէլեան վողոցում № 2 տանը».

— Դու էլ ասա Արաքսէ. «Ես ապրում եմ քաղաքում Անանուն վողոցում № 32 տանը» — Դու էլ ասա Գագիկ. «Ես ապրում եմ գիւղում» — Ա՞ր թաղում «Ես ապրում եմ գիւղում Կօնտի թաղում» և այլն: — Ճատ լաւ, թէ մեր փոքրիկ մանուկը որտեղ էք ապրում, այդ ես էլ շղիսկիմ, միայն նա շատ լաւ, ուրախ և բազգաւոր ապրում էք. — Ինչո՞ւ նա ուրախ և լաւ էք ապրում. «Նա ուրախ և լաւ էք ապրում, որո՞նք հայր ու մայր ունեք»: Հայր ու մայրը մանկանի ինչ են անում. «Հայր ու մայրը նրան կերակրում, խաղացնում, օրօրում, քուն են գնում և այլն»: Այս. ասածներդ ճիշտ են. մեր մանուկը թէն հայր չունէք, բայց մայրը նրան շատ սիրում էք և նրա բոլոր պէտքերը հոգում էք:

Ամփոփել կը կնել. Ի՞նչպէս մանուկը ուրախ ապրում էք: — Մա՛սկը մօր մօտ երկար ժամանակ այդպէս ուրախ շապրեց. ինչո՞ւ ուրախ շապրեց. ինչ պատահեց նըրան, ով կասէ. «Նա մօր մօտ երկար ժամանակ ուրախ շապրեց նրա համար, որովհետեւ նրա մայրն ազքատացաւ» — Էլ ինչու. «Որովհետեւ նրա մայրը տկարացաւ» — Էլ ինչու. «Որովհետեւ նրա մայրը մեռաւ» և այլն: — Ա՞չ, ձեր ասածներից ոչ մէկն էլ չէք. թշնամիները գիշերով նըրանց տան վրայ յարձակւեցին, տունը թալանեցին, ամեն ինչ տարան, մօրն էլ ուզում էին բռնել և սպանել. մայրը յաջողեցրեց մանկանը օրօրոցից հանել և ծածուկ փախաւ անտառ: — Ինչո՞ւ մայրն այդպէս արեց. որովհետեւ նա ուզում էր իր մանկանն ազգատելք — ճիշտ է. մայրը մանկանը զրկած արագ արագ փախչում էր. մայրը ճանապարհին շատ վախենում էր,

նա յետեկից բարձր բարձր ձայներ էր լսում. — Ինչու էք մայրը վախենում, ապա ասա Վահան. «Նա վախենում էր, որովհետեւ անտառի գազանների ձայները լսում էր». — Էլ ով կասէ — «Նա վախենում էր, որովհետեւ գիտէր, որ թշնամիները յետեկից գալիս էին և կարող էին իրան ու որդուն բռնել». — Ճիշտ է. թէն մայրն անտառի գազաններից երկիւղ կրում էր, բայց զլխաւոր պատճառն այն էր, որ նա իր յետեկից ընկած թշնամիների ձայները լըսում էր, մանաւանդ թշնամիները քանի գնում, մօտենում էին. Միւս կողմից, մայրը թուլացել էր, չէր կարող արագ վազել, այ հէնց դրա համար էլ նա շատ վախենում էր. Զեյելով այդ ամենին, մայրը իր բոլոր ուժը հաւաքած վազում էր. — Ինչ էր կարծում կարողացաւ մայրն ազատել. «Այս, մայրը կարողացաւ ազատել, նա թագնւեց ծառերի տակ և թշնամիները նրան չտեսան». Պու էլ ասա համեստ — «Նա ազատեց, որովհետեւ քարերի արանքում թագ կացաւ». «Նա ազատեց, որովհետեւ անտառի խիտ թփերի մէջ պահեց». — Պու ինչ ես առում Արամ. «Նա շկարողացաւ ազատել, որովհետեւ որդուն զրկած չէր կարող արագ փախչել»: — Ճիշտ է թէն մայրը բոլոր ոյժով փախչում էր, բայց զժքախտաբար շկարողացաւ ազատել. մի բան մօրը շատ շատ խանգարում էր. Ի՞նչ բան, էր մօրը խանգարում. «Մօր երկար շորերն էին խանգարում, և նա չէր կարող լաւ վազել» — Էլ ով կասէ, «Մութ գիշեր էր, մայրը ճանապարհը լաւ չէր տեսնում, զա էր խանգարում». — Պու էլ ասա Արշակ. «Երեխան ծանր էր, մայրը չէր կարող լաւ վազել» և այլն: — Ձեր ասածները մօրը բաւական խանգարում էին, բայց զլխաւորն այն էր, որ մանուկը բարձր ձայնով լալիս էր, մայրը չէր կարող նրա ձայնը կտրել, այ զա էր մօրը շատ խանգարում. Մանկան լացը ինչո՞ւ էր մօրը խանգարում — «Մանկան լացը մօրը խանգարում էր նրա համար, որովհետեւ թշնամիները մանկան ձայնը լսելով, ձայնի յետեկից դնում էին, իսկ մայրը չէր կարող թագ-

նելք — ճիշտ է. — բայց ինչու էր մանուկը լաց լինում. «Նա լալիս էր, որովհետև քնել էր ուզում, նա անհանգիստ էր». — ճիշտ է, նա քնել էր ուզում, մօր վազելուց էլ շատ անհանգիստ էր և ուզում էր հանգստանալ: — Մանկան ձայնը կտրելու համար ինչ պէտք է անէր մայրը — «Մանկան ձայնը կտրելու համար մայրը պէտք է նրան քուն դնէր» — էլ ինչ — «պէտք է նրան օրօրէր, նանիկ ասէր»: — Այս, մայրը մտածում էր մանկանը քուն դնել, բայց որտեղ պէտք է քուն դնէր — «Նա պէտք է քուն դնէր կանաչների մէջ». — էլ որտեղ Արտաշէս. «Նա պէտք է քուն դնէր ծառերի մէջ». էլ որտեղ — «Նա պէտք է քուն դնէր մեծ քաղերի արանքում և այն: — Գիտէր մայրը ձեր ասած տեղերից ոչ մէկն էլ չդրեց. նա վախենում էր, թէ ներքնում գաղանները նրան կարող էին վնասել. գետնի վրայ, կանաչների մէջն էլ խոնաւ էր և մանուկը կարող էր հիւանդանալ. մէկ էլ գետնի վրայ չէր կարող օրօրէր, իսկ օրօրոց էլ չկար: — Ուրեմն մայրը մանկանը որտեղ պէտք է դնէր... տանը, բացի օրօրոցից, մանուկներին էլ ինչ բանի մէջ քուն են դնում և օրօրում: «Երբեմն մանուկներին ճօճի մէջ են դնում օրօրում»: — Այս, հէնց այդպէս էլ արեց մայրը. նա իր զոգնոցը երկու ծառի մէջ կապեց ճօճ շինեց, յետոյ դէս ու դէն ընկած չոր խոտ հաւարեց, որ շուտով մանկանը քուն դնէ ձայնը կտրէ: Երբ մայրը չոր խոտով ճօճը լցրեց, մանկանը մէջը դըեց: — Մայրն ինչով պէտք է մանկանը ծածկէր, որ նա շմզը սէր. «Մայրը շորերով պէտք է ծածկէր, որ մանուկը շըմը սէր». — բայց նա շոր շունէր, ուրեմն ինչ պէտք է անէր. զու Աստղիկ, զու էլ Տիգրան և այն. — ոչ, այդպէս չէ մայրը մեծ միծ տերեններ քաղեց ոտաշորի տեղ մանկան ոտքերը փաթաթեց, մանր տերեններն էլ թաթաշոր արաւ, ձեռքերը փաթաթեց — յետոյ կապեց, կապկապեց և ցածը ձայնով նանիկ ասեց, երեխին քնեցրեց: Մայրը, մէկ էլ յանկարծ ծառերի միջից թշնամու ձայները լսեց. — ինչ արեց մայրը. «Մայրը ձայնը կտրեց, այստեղ թագ կա-



ցաւ « էլ ինչ արեց. — «մայրը, փաթաւ հեռացաւ». — Այս, մայրն այսպէս մտածեց. աւելի լաւ է ես մենակ այստեղից հեռանամ, որ թշնամիները որդուս չտեսնեն. — Եթէ թշնամիներն ինձ հասնեն, զոնէ միայն ինձ կը բռնին և որդիս կազատուի. այսպէս մտածելով՝ նա ճօճի մօտից փախաւ հեռացաւ:

— Ինչ էր կարծում, աղատուեց մայրը. «Այս, նա աղատուեց, որովհետև մի տեղում թագ կացաւ». — Դու ինչ ես կարծում վահագն — «Նա աղատուեց, որովհետև հանգստացել էր, արագ փախաւ պըծաւ». — Դու էլ ասա Հոփիսիկ. — «Մայրը չկարողացաւ աղատուել, որովհետև թշնամիները մի քանի հոգի էին, նրանք շատ ման եկան, ամեն կողմ նայեցին և մօրը բռնեցին»: — Հոփիսիկը ճիշտ է նկատում — թէն մայրը հանգստացած էր և շատ արագ փազում էր, բայց թշնամիների ձեռքից չկարողացաւ աղատուել, որոնք վերջը մօրը բռնեցին, ձեռքերը կապեցին և զերի տարան. Թշնամիները մանկանն էլ բռնեցին, — «Ոչ, թշնամիները մանկանը չբռնեցին, որովհետև նրանք մանկան տեղը չգիտէին». — Ապա ինչ եղաւ մանուկը. «Մանուկը ճօճի մէջ քնած մնաց». ճիշտ է:

Ամփոփել և կրկնել հնչպէս մայրը մանկանը փախցրեց: — Մանուկը ճօճի մէջ հանգիստ քնից. նա առաւտեան զարթեց, այս ու այն կողմն նայեց և ինքն իրան խաղաց, իսկ երբ քաղց զգաց՝ լաց եղաւ. — Ո՞վ լսեց մանկան լացը. «Մանկան լացը թշնամիները լսեցին». — Ոչ Սրփիկ, թշնամիները գեշերով էին այնտեղ. երբ նրանք մօրը բռնեցին, այստեղից հեռացան. Ապա դու ասա Արշակ. — «Մանկան լացն անտառի գաղանները և թոշունները լսեցին». Այս, անտառի կենդանիները և թոշունները լսեցին և ով է իմանում, զուցէ գայլը կամ արջը գային նրան վնասէին՝ եթէ բարեբաղդաբար մօտիկ ծառերի տակից մի սիրուն պախրակով իր հորթուկի հետ մանկան մօտ զար: Գիտէր, այդ պախրակովը գեշերը լսել և տեսել էր թէ ինչպէս մանկան մայրը լալիս էր, ճօճ էր կապում,

նանիկ ասում. նա տեսաւ նոյնպէս, որ թշնամին նրան բռնեց և գերի տարաւ. դրա համար պալսիրան երբ մանկան լացն ու աղաղակը լսեց՝ խղճաց նրա վրայ, մօտեցաւ ճօճին և նրան օգնեց. — «Պախրան մանկանն ինչով ոգնեց. «Պախրան մանկանն օրօրեց» — էլ ինչ արեց. — «Պախրան մանկանը ծիծ տւեց» էլ — «Պախրան մանկանը նանիկ ասեց և քնացրեց». Այս, Պախրան մանկանը ծիծ տւեց, օրօրեց և տխուր ձայնով այսպէս նանիկ ասեց.

Միրուն երեխայ, որբ իս մնացիլ.

Քո անրախտ մօըը գերի են տարել.

Նա քեզ փաթաթեց լայն տերեներով,
Ճօճի մէջ կապեց նանիկ ասելով.

Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր վերջին բարեն, ասում էր լալով,

Նանա բալիկս նա նա.

Մեծատերեւ թաթաշոր

Մանրատերի ոտաշոր,

Քամին կանէ ժաժ կըտայ.

Պախրէն կըգայ ծիծ կըտայ.

Նա նա, գառնուկս, նա—նա...

— Երբ երեխան հանգստացաւ, պախրան ասաց. ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ, պահեմ պահպանեմ իմ հորթուկի պէս:

— Ծիծ ուտելուց յետոյ ինչ արեց մանուկը. «Ծիծ ուտելուց յետոյ, մանուկը կշտացաւ և քնեց». — ինչ կըլինէր մանուկը, եթէ Պախրան նրան ծիծ շտար. «Եթէ Պախրան նրան ծիծ շտար, մանուկը լաց կըլինէր». — էլ ինչ կըլինէր Գոհարիկ. — «Եթէ Պախրան ծիծ շտար, մանուկը կըտլրէր». — էլ. «Մանուկը քաղցածութիւնից կարող էր մեռնել». Ճիշտ էք ասում. իհարկէ, մանուկը կը տխրէր, լաց կըլինէր և քաղցածութիւնից կը մեռնէր:

— Երբ երեխան կշտացաւ, քնեց. Պախրան զնաց արածելու, որ կաթը շատացնի, գայ երեխին էլ, հորթին էլ ծիծ տայ. Ամեն անգամ, երբ մայրը արածելու

էր գնում, հորթին հետն էր տանսւմ, բայց այս անգամ շտարաւ. ինչո՞ւ շտարաւ. «Նա. հորթին շտարաւ, որովհետեւ թողեց քնած մանկան մօտ». — ինչո՞ւ մայրը հորթին թողեց քնած մանկան մօտ, որ երբ նա լաց լինի՝ օրօրէ, հետը խաղա և պահէ», Այդպէս է. Հորթը միաց մանկան մօտ և երբ նա զարթեց, մօտեցաւ նրան, օրօրեց և այսպէս նանիկ ասեց.

Նա նա. մանկիկ նա նա,

Իմ մէրը ամեն խոտից կծիլ չի.

Ամեն զրից խմիլ չի,

Նա սարէ սար ման կը գայ,

Որբ կըգտնի ծիծ կըտայ.

Նա նա, մանկիկ, նա նա...

Ամփոփել և կըկնել. Է՞նչպէս պախրակովը մանկանը . օգնեց.

Մենք իմացանք, որ Պախրան մանկանը խօսք տւեց իր հորթուկի պէս պահել տահպանել. — ինչ արեց պախրան, որ իր խօսքին հաստատ մնաց. «Նա ամեն օր մանկանը ծիծ էր տալիս». — էլ ինչ արեց Հրանուշ. «Նա ամեն օր հորթուկին երեխի մօտն էր թողնում, որ նրան պահէր և օրօրէր». Ճիշտ ասացիք. պախրակովն ամեն օր գնում էր արածելու, հորթին թողնում էր մանկան մօտ, իսկ ինքն էլ կուրծքը լիքը յետ էր դառնում արօտատեղից. Նա միշտ երեխին էլ, հորթին էլ ծիծ էր տալիս:

— Ով տարսվ էր մեծանում, մեր երեխան օրով միծացաւ, նա շուտով զուրու եկաւ ճօճիցը. մէկ օր չորեքթաթտւաւ, միւս օրը ոտքի կանգնեց. մի քանի անգամ սահեց վայր ընկաւ, բայց շուտով ամրացաւ և սկսեց պախրի յետնից վազգել ու հորթուկի հետ խաղալ:

Ամփոփել և կըկնել. Է՞նչպէս մեռնուկը մնացաւ:

— Մի թագաւոր որդի շոնէր, երազումն ասացին. թագաւոր, Աստած քեզ մի որդի պիտի տայ անտառի խորթումը. — Երբ այս երազը տեսաւ, ինչ արեց թագա-

ւորը. «Եթի այդ երազը տեսաւ, թագաւորը ուրախացաւ». — ինչու ուրախացաւ. «Նա ուրախացաւ, որովհետև որդի շունէր և ուզում էր ունենալ». — ճիշտ է, զբա համար էլ թագաւորը ուրախացաւ և շատ ցանկանում էր որդի ունենալ. Մի քանի ժամանակից յետոյ, թագաւորն իր որսորդների հետ որսի գնաց, շատ ման եկան, ոչ մի որս չդժան, միայն գետնի վրայ մի բան տեսան և գարմացան. — ինչ տեսան որսորդները — «Որսորդները գետնի վրայ տեսան թռչնիկներ». Նրանք տեսան թիթեռնիկներ, որդեր եայլն. — Ո՞չ, նրանք կենդանի բան չտեսան, այլ հողի վրայ ոտնատեղիր տեսան. — ում ոտնատեղերն էին. «Եթի խայի և պախրի ոտնատեղերն էին». — ինչու որսորդները զարմացան. «Նրանք զարմացան, որովհետև անտառի մէջ երեխայ չէր կարող լինել». Այս, զբա համար էլ նրանք զարմացան և իրանց տեսածին չէին հաւատում: Որսորդներն այս բանը պատմեցին թագաւորին. ինչ էր կարծում, թագաւորն էլ զարմացաւ. «Սյո, թագաւորն էլ զարմացաւ». — Դու ինչ ես ասում Վարդան. «Ոչ, թագաւորը չզարմացաւ»: Գիտէք, թագաւորն իսկոյն մի բան յիշեց. — ինչ յիշեց թագաւորը, «Թագաւորն իսկոյն յիշեց իր երազը և շատ ուրախացաւ». — Ինչու թագաւորը ուրախացաւ. «Թագաւորն ուրախացաւ, որովհետև ասում էր, երազս կատարում է և ես մի որդի կունենամ»: Այս տեսաք Վարդանը միտն էր պահել և նա ճիշտ ասաց, որ թագաւորը չզարմացաւ. — Մանկանը գտնելու համար, թագաւորը ինչ արեց. «Մանկանը գտնելու համար, թագաւորը հրամայեց որսորդներին, որ գնան մանկանը բերին»: Սյովէս է. Որսորդները երեխի ոտնատեղերի հետքով գնացին, շատ ման եկան, վերջապէս մանկանը տեսան պախրի ծիծը ծծելիս: Երկու ժամ չէր անցել, որ ման կանը բերին թագաւորի մօտ:

Ամփոփել և կրկնել. ի՞նչպէս որսորդները մանկան գտան:

Թագաւորն երբ մանկանը տեսաւ, շատ ուրախացաւ

թագաւորը զըկեց նրան, համբուրեց և ուզեց անուն գնել: — Ի՞նչ անուն զըկեց թագաւորը. «Թագաւորը երեխայի անունը զըկեց Հայկ, Արամ, Արմենակ ևայլն «Ոչ, այդ անուններից ոչ մէկն էլ չզըկեց. — Եպա ասացէք, ովք պահեց, մեծացրեց մանկանը. «Մանկանը պահեց — մեծացրեց Պախրան»: — Եթէ Պախրան չլինէր մանուկը կարող էր ապրել «Ոչ, եթէ Պախրան չլինէր, մանուկը չէր կարող ապրել». — Ուրիմն ովք տւեց մանկանը որսորդներին. «Մանկանը որսորդներին դարձեալ Պախրան տւեց». լաւ, եթէ պախրան մանկանը մեծացրեց, պախրան էլ որսորդներին տւեց, ուրեմն թագաւորն ինչ անուն պէտք է գնէր, որ ամեքն էլ հասկանային. թէ պախրան է տւել. «Որպէսզի ամեքն էլ հասկանան որ պախրան է մանկանը պահել մեծացրել և պախրան է թագաւորին տւել, պէտք մանկան անունը պախրի տւած գնէին». Այս, պախրի տւած կամ Պախրառուր. ուրիմն թագաւորը մանկան անունը Պախրատուր զըկեց:

Պախրատուրը թագաւորի պալատում մեծացաւ, լաւ ուսում առաւ և խելօք մարդ զարձաւ. ամեքը նրան սիրում էին. — Ինչու ամեքը նրան սիրում էին. — «ամեքը նրան սիրում էին, որովհետև նա խելօք և լաւ տղայ էր». — Էլ ինչու. «ամենքը նրան սիրում էին, որովհետև նա մարդկանց օգնում էր, հօր գործերը լաւ կառավարում էր» — Այս, նա բարի էր, նա խելօք էր, նա հօրն էլ, ուրիշներին էլ օգնում էր, զբա համար ամեքն էլ նրան սիրում էին: Եթի հայրը ծերացաւ, Պախրատուրին զարձրեց թագաւոր. Պախրատուրը շատ լաւ կառավարում էր, ամեքը ուրախանում էին, որ այդպիսի լաւ թագաւոր ունեն. Պախրատուրն էլ ուրախ էր. բայց զիտէք, մէկ մէկ անգամ Պախրատուրը շատ տիրում և մտածում էր: Ում համար էր տիրում և մտածում — «Նա իր մօր մասին էր մտածում, մօր համար էր տիրում». ճիշտ է. — ինչ էր մտածում Պախրատուրը — «Նա մտածում էր մօրն աղատել». — զբա համար Պախրատուրն ինչ պէտք է անէր, «զբա համար

Պախրատուրը գօրքով պէտքէ պնար մօրն ազատէր». Այս, բայց նա մօր տեղը չգիտէր, այ, դըա համար էր շատ մտածում: — Մօրն ազատելու համար, Պախրատուրն ինչ պիտի անէր. «մօրն ազատելու համար, Պախրատուրը պէտքէ մօր տեղն իմանար». — ինչպէս պէտքէ մօր տեղն իմանար. — «Նա պէտքէ ուրիշներին հարցնէր և իմանար», ճիշտ է. դրա համար Պախրատուրը շատ հարց ու փորձ արաւ, շատ մարդիկ դէս ու դէն ուղարկեց և վերջը մօր տեղն իմտցաւ. — Այժմ ինչ պէտքէ անէր. «Այժմ պէտքէ պնար և մօրն ազատէր». — Այս, դրա համար նա մեծ զօրը հաւաքեց, թշնամիների հետ կռւեց, նրանց յաղթեց և մօրը գերութիւնից ազատեց:

Ամփոփել և կրկնել. ի՞նչպէս Պախրատուրը մօրը գերութիւնից ազատեց:

Ընդհանուր կրկնութեան համար այժմ խաղալ*). դրա համար ինչ պէտքէ անենք. «զրա համար մէկը պէտքէ լինի Պախրատուրի մայրը, մէկը Պախրատուրը, մէկը Պախրան, մէկը հօրթուկը, մի քանիսը թշնամիները, մէկը թագաւորը, մի քանիսը որսորդները, մի քանիսը զօրը և մէկն էլ պատմողը». Այս, այդպէս է. — ուրեմն բռուրը քանիս էն:

Խորասուզումն.

— Երկար ժամանակ Պախրատուրը ծնողների մօտ ուրախ ու գւարթ ապրում էր. «Ո՛չ, նա երկար ժամանակ ուրախ ու գւարթ չապրեց» — «նա շուտով դրանից զրկւեց». — ինչու նա դրանից զրկւեց — «նա դրանից զրկւեց, որովհեակ թշնամիները նրանց տան վրայ յարձակւեցին, տունը թալանեցին, Պ-ի մօրն էլ ուզում էին բռնել, բայց մայրը Պախրատուրին օրօրոցի միջից հանեց և ծածուկ փախաւ անտառ». — ինչու թշնամիները Պախրատուրնց տունը թալանեցին». «Նրանք Պախրատուրենց առւնը թալանեցին, որ ապրանք շատ ունենան և հարստանան» — թշնամիները լաւ բան չարին, նրանք գէշ

*) ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ, Բացատրութիւնը տես յառաջարանում:

բան արին. — ինչու նրանք գէշվատ բան արին. «Նրանք վատ արին, որովհետեւ ուրիշի աշխատածը ուժով խլեցին, տարան». — ինչու թշնամիները ուզեցին մօրը բռնել». — «Նրանք ուզեցին մօրը բռնել, որ նա ուրիշներին օգնութեան չկանչէր և յետոյ իրանց պատժել չտար». — իմացանիք, որ թշնամիները վատ բան արին — Ուրեմն թլշնամիներն ուղիսի մարդիկ էին». «թշնամիները շար և վատ մարդիկ էին». իմացանք, որ մայրը որդուն առած անտառ փախաւ. — Կարողացաւ մայրն ազատւել. «Ո՛չ, մայրը չկարողացաւ ազատ ել.» — ինչու մայրը չկարողացաւ ազատւել. «Մայրը չկարողացաւ ազատւել նրա համար, որովհետեւ Պախրատուրը շատ անհանգիստ էր, նա բարձր ձայնով լալիս էր, թշնամիները ձայնի յետելից գնում էին, դրա համար էլ մայրը չկարողացաւ թագնելի կտմ փախչել: — Ուրեմն թշնամիներն երկուսին էլ բռնեցին. — «Ո՛չ, թշնամիներն երկուսին էլ չբռնեցին, որովհետեւ մայրը Պախրատուրին ազատեց»: — Մայրը Պախրատուրին ինչպէս ազատեց. «Մայրն երբ տեսաւ, որ թշնամիները Պախրատուրի ձայնը լսելով կարող են իրան հասնել և բռնել, այդ պատճառով Պ-ի ձայնը կտրելու համար մի ճօճ կապեց, մանկանն այնտեղ քուն դրեց՝ որ թշնամիներն իրանց տեղը չիմանան». — Ուրեմն կարողացաւ մայրն ազատւել. «Ո՛չ, մայրը չկարողացաւ ազատւել» — ինչու մայրը չկարողացաւ ազատւել. — «Որովհետեւ երբ մայր լսեց, որ թշնամիներն իրանց մօտեցել են և կարող են իրան էլ, որդուն էլ բռնել՝ դրա համար նա ճօճի մօտից փախաւ, որ եթէ իրան բռնեն, գոնէ որդին ազատւի». — Թշնամիները բռնեցին մօրը. «Այս, թշնամիները մօր յետելից հասան, բռնեցին և զերի տարան». Այսպէս անհետով թշնամին ինչպիսի գործ կատարեց. «թշնամին վատ և շար գործ կատարեց». — Անպատճ մնացին շար և վատ թշնամիները. «Ո՛չ, շար և վատ թլշնամիները անպատճ չմնացին». — Ո՞վ նրանց պատժեց. «Պախրատուրը երբ թագաւոր դարձաւ, իմացաւ որ մայրը

կենդանի է և թշնամիների ձեռքում գերի է, մեծ զօրքով գնաց թշնամիներին յաղթեց և մօրն էլ գերութիւնից ազատեց։ — Այս, այսպիսով տեսահր, որ շաբ և վատ թշնամիները պատժի արժանացան։ — Մենք իմացանք, որ մայրը Պ-ին ճօճի մէջ դըեց և ինքը վախաւ։ — Ո՞վ Պախրատուրին կերտկը և պահեց. «Պախրան Պախրատուրին կերտկը և իր հորթուկի պէս պահեց մեծացրեց։ — Պախրան ինչպէս իմացաւ, որ ճօճի մէջ մանուկ կար «Երբ առաւտեսան մանուկը զարթնեց, լաց եղաւ Պախրան լսեց նրա ձայնը, իր հորթուկի հետ եկաւ նրա մօտ, ծիծ տւեց օրօրեց և նանիկ ասելով քնացրեց։ — Ո՞վ կարող է պախրի նանիկը կըկնել…»

— Նանիկ ասելուց յետոյ, Պախրան մանկանը ինչ խոստացաւ. «Նա խոստացաւ մանկանը իր հորթուկի պէս պահել, մեծացնել»։ — Կատարեց պախրան իր խոստումը. «Այս, պախրան իր խոստումը կատարեց։ — Ինչ արեց Պախրան. «Նա ամեն օր հորթին թողնում էր մանկան մօտ, որ նրան օրօրէ, նանիկ ասէ. ինքն էլ գնում էր արածելու, կաթը շատացնելով զալիս էր երկուսին էլ ծիծ էր տալիս»։ Ճիշտ է, պախրան մանկան այդպէս պահեց և մեծացրեց։ — Ինչու պախրան մանկան այդպէս օգնեց և պահեց. «Պախրան մանկանն այդպէս օգնեց, որովհետեւ նա բարի էր, նա յաւ էր»։ — Եթէ Պախրան չօգնէր մանկանն, ինչ կըլինէր նա. «Եթէ Պախրան նրան չօգնէր նա բաղցած կըմնար, լաց կլինէր և վերջը բաղցածութիւնից կմեռնէր»։ — Ուրեմն ով ազատեց մանկանը. «Մանկանը Պախրան ազատեց»։ Ուրեմն մենք տեսանք, որ Պախրան բարի էր և Պախրան իր տւած խօսքը հաստատ պահեց և մանկան կեանքն ազատեց։

— Էլ ով օկնեց Պախրատուրին. «Թագաւորն էլ օկնեց Պախրատուրին»։ — Թագաւորը Պախրատուրին ինչպէս գտաւ. «Երբ թագաւորը որսորդներից իմացաւ, որ անտառի խորքում մանկան ոտնատեղեր կան՝ հրամայեց, որ ատնատեղերի յետեից գնան, անպատճառ զտնին և իրան

բերեն. որսորդներն էլ զնացին, զտան և բերին։ — Ինչու թագաւորը նրան լաւ պահեց, լաւ ուսում տւեց և վերջն էլ թագաւոր դարձրեց. «Որովհետեւ Պախրատուրը խելօք էր, բարի էր, լաւ սովորում էր և ամեքը նրան սիրում էին»։ — Ո՞րտեղից երեաց, որ Պախրատուրը բարի և խելօք էր. «Նա բարի էր, որովհետեւ չար թշնամուն յաղթեց և մօքը գերութիւնից ազատեց, նա ժողովրդին օգնեց և թագաւորի դորձերը լաւ կառավարեց»։ — Ուրամն էր թագաւորը, որ Պախրատուրն այդպէս լաւ մարդ դարձաւ. «Այս, նա շատ ուրախ էր, որ Պախրատուրը լաւ և օգտակար մարդ դարձաւ»։ այ հէնց դըա համար էլ ասում են—արած լատութիւնը չի կորչիլ։

Մի առած ասում է — Աշխարհը խելքով են կերել, ում համար յարմար է այս առածը… — Ինչու Պախրատուրի համար յարմար է. — Ո՞վ կարող է մեր պատմութեանյարմար առածներ ասել Ասում են. — Ով կարդա, նա մարդ ա.

Տաշած քարը գետին չի մնայ.

Յարմար են այս առածները մեր պատմութեանը. ում համար է յարմար. Մի ուրիշ առած ասում է. — Ինչ որ ցանես, այն կըհնձես. — Սա ում համար է ասած. ինչու թշնամիների համար է յարմար։

Գործառքութիւն կամ վարժեցնելու հարցեր։

— Այս պատմութեան մէջ ում հաւանեցիք. «Այս պատմութեան մէջ մենք հաւանեցինք Պախրին, Պախրատուրին, Պախրատուրի մօքը». լաւ, ապա ասացէր, ինչու Պախրատուրի մօքը հաւանեցիք նրա համար, որովհետեւ նա իր ռրդուն շատ սիրում էր։ Էլ ինչու Արշակ. «Պ-ի մօքը հաւանեցինք, որովհետեւ նա շատ նեղութիւններ քաշեց, որդուն փախցեց։ — Էլ ինչու Արտաշէս. «Պ-ի մօքը հաւանում ենք նրա համար, որովհետեւ նա ինքը գերի ընկաւ և որդուն ազատեց»։ Ճիշտ է. վերջը Պախրատուրն այդ բանը իմացաւ. «Այս, նա այդ բանը իմացաւ, դըա համար զնաց մօքը գերութիւնից ազատեց»։

Պախրապուրը սիրում էր իր մօրը և նրան գերութիւնից ազատեց. — Ապա ասացէք դուք ինչո՞ւ էք սիրում ձեր ծնողներին. «Մենք սիրում ենք նրա համար, որովհետեւ նրանք մեզ համար շարշարւում են և մեզ լաւ բաներ են պատմում». Էլ ինչու ենք սիրում Յըշանոյշ. «Մենք սիրում ենք միը ծնողներին, որովհետեւ նրանք մեզ համար շոր են առնում, կերպակուր են պատրաստում, ուսումնարան են ուղարկում».— Էլ ինչու ենք սիրում. «Մենք նրանց սիրում ենք, որովհետեւ նրանք մեզ սիրում են և ամեն տեսակ նեղութիւններից ազատում են»: ճիշտ տսացիք, այ հինգ դրա համար էլ մեր ծնողներին պէտք է սիրենք և Պախրապուրի նման ամեն տեսակ նեղութիւններից ազատենք. դրա համար էլ ասում են. Պատվիք քո հօրն ու մօրը, որ աշխարհի վրայ բաղդաւոր կեանք ունենա, նոյնպէս ասում են. Պատվիք ծերին, որ ծերանաս, ծերէ պատին իմանաս. — Պախրապուրին և թագաւորին ինչո՞ւ հաւանեցիք. «Մենք Պ-ին և թագաւորին հաւանեցինք, որովհետեւ երկուսն էլ բարի և լաւ էին. — Ի՞նչ արեց Պախրապուրը. «Պախրապուրը թշնամուն յաղթեց և մօրը գերութիւնից ազատեց».— Էլ ինչ արեց. «Նա ժողովին օգնեց»: Թագաւորն ինչ արեց. «Թագաւորն էլ Պ-ին լաւ պահեց, ուսում տւեց, մեծացրեց և Պ-ը դարձաւ լու և օգտակար մարդ».— Դուք ձեր որ ընկերին էք սիրում. «Եմինք սիրում ենք այն ընկերին, որը մեզ դաս է սովորեցնում, չար ընկերներից պաշտպանում է, խեղճերին օգնում է և այլն».— Ինչո՞ւ Պախրին և հորթուկին հաւանեցիք. «Պախրին և հորթուկին հաւանեցինք, որովհետեւ նրանք էլ բարի էին, լաւ էին».— Ո՞րտեղից իմացանք, որ նրանք բարի էին. «Եմինք իմացանք, որ պախրան գնաց մանկանը ծիծ տւեց, օրօրեց, նանիկ առեց և ամեն օր նրան իր հորթուկի հետ կերպակում էր».— Իսկ եթէ պախրան այդ շանէք. ինչ կըլինէք մանկանը. — «Եթէ պախրան չինէք, մանուկը քաղցից կմեռնէք».— Ի՞նչ արեց հորթուկը, որ դուք հաւանեցիք. «Հորթուկին հաւանեցինք, որովհետեւ

տեսա մօր խօսքը լսեց. Նա ամեն օր մանկան մօտ էր միում, նրան օրօրում էր, նանիկ էր ասում և հետը խաղում էր»: — Եթէ հորթուկը մօր խօսքը լսէր և մանկան մօտ չմնար, ի՞նչ կըպատահէք մանկանը. «Եթէ հորթուկը մօր խօսքը լսէր և մանկան մօտ չմնար, այն ժամանակ մանուկը լաց կըլինէք. Նա կտխրէր և ուրիշ գազանները նրա ձայնը լսելով, կարող էին գալ և մանուկին վնասել».
ճիշտ է. Ուրեմն լաւ բան է, երբ մէկը իր մօր, իր հօր և մեծերի խօսքը լսում է: «Այս, դա լաւ բան է».— Ինչո՞ւ լաւ է. «Որովհետեւ մեծերը մեզ լաւ և օգտակար բաներ են ասում. Եթէ մենք լսենք և նրանց խօսքը կատարենք, մենք էլ հորթուկի նման լաւ գործ կանենք».
ճիշտ է. այն ժամանակ ձեր ծնողները, ձեր մեծերը և ուսուցիչները կուրախանան և ձեզ կըսիրեն».

Այժմ ասացէք. Կթէ Պախրան մանկանը մի քանի օր ծիծ տար և յետոյ էլ շնչար, ինչ կըլինէք մանուկը. «Եթէ Պախրան այդպէս անէք, այն ժամանակ նա կը մեռնէք».
Ուրեմն Պախրան իր տւած խօսքը հաստատ պահեց. «Այս, Պախրան իր տւած խօսքը հաստատ պահեց», ինչ էք կարծում, լաւ բան է, երբ մէկն իր տւած խօսքը պահում է. — Այս, լաւ բան է, երբ մէկը տւած խօսքը հաստատ պահում է:

— Ի՞նչ կասէք ձեր այն ընկերին, որ խօսք է տալիս մէկին օգնել չի օգնում. Խօսք է տալիս մէկին դաս սովորեցնել, իր խօսքը չի կատարում. Խօսք է տալիս, որ ծուլութիւն չանի, չար չինի՝ խօսքը չի կատարում կայլն»: «Մենք այդպիսի ընկերին կասենք, որ նա վատ է, որ նա խաբեբայ է, որ նրա խօսքին չպիտի հաւատալ կայլն».— Կը սիրէք այդպիսի ընկերին. «Ոչ, մենք այդպիսի ընկերին չենք սիրէ»:

Մի առած ասում է. Տասը չափիք, մէկ կտրիք. Ի՞նչ է նշանակում այդ բանը. Այս, ճիշտ էք ասում, այդ նշանակում է առաջ պէտք է լաւ մտածել, յետոյ գործ կատարել. Այդպէս էլ առաջ պէտք է մտածել, ապա խօսք տալ, իսկ տւած խօսքը հաստատ պահել. — ճիշտ այնպէս՝ ինչպէս Պախրան արեց».

Մեր պատմութեան յարմար ի՞նչ հանելուկներ գիտէք.
Ապա գիտէք. 1) Էն ի՞նչն է, ում դժին կպաւ.

(անուն)

2) Թէ որ խօսես, կը խօսի,
Եթէ թողնիս, կը ընի,
Թէկազ ինչ էլ որ լինի՝
Նա յաւիտեան չի մեռնի
(գիրք)

Ապա սովորեցէք այս փոքրիկ ոտանաւորը.

Կարդա, այ իմ խելօք մանուկ,
Կարդա, գըիը դու ամեն օր.
Դիր կարդողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր։



ԶԱՆԿՈ-ՊԱՆԿՈ

Եյօք ես ձեզ պէտք է սլատմեմ՝ Զանկո-Պանկո ու-
լիկների պատմութիւնը:

— Ո՞վ կարող է կրկնել... — Ո՞վ է տեսել ուլիկ.
— Իհարկէ ամերգ էլ տեսել էք. Ի՞նչպիսի կենդանի է ու-
լիկը. «Ուլիկը փոքրիկ, ժիր և սիրուն այծիկ է»... — Ո՞վ է
սիրում ուլիկին. «մանուկները սիրում են»... — Ինչու մա-
նուկները ուլիկներին սիրում են. «Որովհետև մանուկները
նրանց հետ խաղում են»... — Ճիշտ է. Այդ գեղեցիկ ուլիկ-
ները շատ լաւ պատմութիւններ ունեն. Խսցէք ես ձեզ
մէկը պատմեմ:

— Լինում է շի լինում, մի այծ է լինում. այդ այծն
անտառի խորքում մի տնակ է շինում և նրա մէջը ապ-
րում է. Եյծը ունէք երկու փոքրիկ և սիրուն ուլիկ. — Ի՞նչ
էք նրանց անունը. „մէկի անունը Զանկո էք, միւսինը
Պանկո”... — ճիշտ է. Ուլիկների մայրն ամեն օր անտառ
էք գնում. — Ինչու համար էք անտառ գնում. „Նա
գնում էք անտառ արածելու, ուլիկների համար կերա-
կուր բերելու». — Այդպէս է. ի՞նչ է ուտում այծը. «Եյծը
ուտում է խոտ, ծաղիկ, ծառերի տերեներ և այլն»:
— Մայրը Զանկո-Պանկո-ի համար ի՞նչ էք բերում. „Նա
ծծերով Զ-Պ-ի համար կաթ էք բերում»... — Երբ ուլիկ-
ները մի փոքր մեծացան, մօքն ասացին. — մայրիկ, մեզ
էլ տար անտառ, մենք էլ ուզում ենք խոտ արածել. ծա-
ղիկներ ուտել, սառը ջուր խմել:

Ո՞չ, սիրելի ուլիկներ, ասաց մայրը. — Դուք դեռ
փոքր էք, մի քիչ էլ տանը մնացէք, մի փոքր էլ մեծա-
ցէք, յետոյ կըտանեմ:

Որ այդպէս է, ասացին Զանկո-Պանկոն, մեզ համար
փափուկ խոտ և սառը ջուր բեր անտառից:

Մայրը խոստացաւ և ամեն օր Զ-Պ-ի համար փա-
փուկ խոտ և սառը ջուր էք բերում:

— Մայրը ինչով էր սառը ջուր և փափուկ խոտ բերում... — Ոչ զրի համար նա աման չունէր, պարան էլ, չունէր, որ խոտ բերէր. — Ապա ինչով էր բերում. „Խոտը նա պողերով էր բերում, ջուրն էլ բերանով“. — ճիշտ է. — Ամեն անգամ, երբ մայրն անտառ էր զնում, ձագերի համար շատ վախենում էր. — Ո՞ւմնից էր վախենում մայրը. „Մայրը վախենում էր անտառի գազաններից“. — Ինչու էր մայրը զրանցից վախենում. „Որովհետեւ նրանք կարող էին ձագերին պատառել և ուտել“. — Ի՞նչ էր կարծում, մայրն ամենից շատ որ կենդանուցն էր վախենում. «Պայման էր մայրը շատ վախենում», ճիշտ է դրա համար էլ ամեն օր տանից դուրս գալիք ուլիկներին զգուշացնում էր. — Ի՞նչ էր ասում մայրը, երբ նրանց զգուշացնում էր. «Նա ասում էր, Զանկլո Պանկլո դուռը փոկ պահեցէր, ոչոքի համար շրանաք, թէ չէ շաբ դայլը կըդայ և ձեզ կըտանի»:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս Զանկլո-Պանկլոի մայլն անտառ էր գնում:

Ամեն օր մայրը զնում էր անտառ, վափուկ խոտ արածում, սառը ջուր խմում և ուլիկների համար համեղ կաթ պատրաստում. — Տուն վերապառնալիս, մայրն ի՞նչ պէս էր ուլիկներին կանչում, որ դուռը բանան. «Նա պողերով դուռը ծեծում էր. Այս, նա դուռը ծեծում էր, բացի դրանից նա բարակ ձայնով երգում էր և այսպէս ասում.

Զանկլո, Պանկլո ուլիկներ,
Իմ սիրունիկ բալիկներ,
Եկէք, դուռը բաց արէք,
Կերէք, խմէք, կշտացէք:

Ես ձեզ համար լի ու լի
ծծերովս կաթ եմ բերել իւզալի,
Պողերովս խոտ եմ բերել հիւթալի.
Բերանովս ջուր եմ բերել աղբիւրի:

— Ինչու մայրը երգելով էր կանչում իր ուլիկներին.

«Որպէսզի գայլը չկարողանար ուլիկներին խաբել», ճիշտ է. Զ. Պ. երբ մօր երգը լսում էին, ի՞նչ էին անում. — «Նրանք ուրախ-ուրախ վագում գուռը բաց էին անում». — յետոյ ինչ էին անում. «Կաթը ծծում, խոտը ուտում, ջուրը խմում կշատանում էին. այդպէս է»:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս էին ովկիկները զուր բաց անում:

— Ենտառի մէջ բնակւում էր մի գայլ նա տեսնում էր, որ այծն ամնն օք ուլիկներին տանը մենակ թողնում զնում էր. նա մի չար բան մտածեց. — Ի՞նչ մտածեց գայլը. «Գայլը մտածեց Զանկլո Պանկլօին ուտել». — իր նպատակին հասնելու համար գայլն ի՞նչ պէտք է անէր. «Նա պէտք է դուռը ծեծէր». — Էլ Ի՞նչ. «Նա պէտք է մօր նման երգէր». ճիշտ է. դրա համար գայլը մի բանի օր շարունակ այծի երգը լսեց և սովորեց. մի օր էլ երբ շատ քաղցած էր, մօտեցաւ այծիկի տնակին, դուռը ծեծէց և երգելով ասաց:

Զանկլո, Պանկլո ուլիկներ,

Իմ սիրունիկ բալիկներ,

Եկէք, դուռը բաց արէք,

Կերէք, խմէք, կշտացէք:

Ես ձեզ համար լի ու լի

ծծերովս կաթ եմ բերել իւզալի,

Պողերովս խոտ եմ բերել հիւթալի.

Բերանովս ջուր եմ բերել աղբիւրի:

— Ճանաշեցին ուլիկները գայլի ձայնը. «Այս, նրանք ճանաշեցին». — Ի՞նչպէսի ձայն ունէր գայլը, որ ուլիկները ճանաշեցին. «Գայլը հաստ ձայն ունէր». — իսկ ի՞նչ պէս էր ուլիկների մօր ձայնը. «Երա ձայնը բարակ էր». Եթէ ուլիկները գայլի ձայնը ճանաշեցին, ուրեմն դուռը բաց արին. «Ոչ, նրանք դուռը բաց շարին». — Ի՞նչ ասացին, որ դուռը բաց շարին. «Նրանք ասացին, մեր մայրը բարակ ձայն ունի, իսկ քո ձայնը հաստ է». — Էլ Ի՞նչ ա-

սացին. «ասացին դու մեր մայրը չես». — է՞լ, «գու չար գայլն ես». — Այս, այդպէս է:

Գայլը հասկացաւ, որ ինքը սխալւել է, նա մտածեց իր սխալն ուղղել և զնաց նորից փորձելու. — Ի՞նչ պէտք է անէր զայլը, որ ուլիկներին կաշողանար խարել. «Նա պէտք է բարակ ձանով երգէր». — Այս, նա էլ այդպէս մտածեց և նորից զնաց ուլիկների տան դուռը ծեծեց և երգելով ասաց. ի՞նչ երգեց..

Գիտէր զայլն այս անդամ հաստ ու կոշտ ձայնով շերգեց. — ապա ի՞նչպէս նա երգեց «նա բարակ և դուրեկան ձանով երգեց». Այդպէս է — ուրեմն բացի՞ն ուլիկները տան դուռը... — Ոչ, դուք սխալւում էք, նրանք այս անդամն էլ դուռը չբացին. Զանկլօ Պանկլօն դռան ճեղքից տեսան սկս սկս ոտներ, այն ինչ իրանց մօր ոտները սպիտակ էին. — Ի՞նչ ասացին ուլիկները զայլին. «Նրանք ասացին դու մեր մայրը չես» է՞լ ինչ. «մեր մօր ոտները սպիտակ են, քո ոտները սկս են» — էլ «դու չար զայլն ես:

— Գայլը նորից հեռացաւ և շատ մտածեց. — Ինչո՞ւ մասին նա մտածեց — «Նա մտածեց ոտքերն սպիտակացնել». — Ճիշտ է, նա զրա մասին մտածեց և մէկ էլ վազեց. դէպի ջրաղաց. — ինչո՞ւ նա ջրաղաց վազեց — «Նա ջրաղաց վազեց, որպէսզի ոտքերին ալիւր քսէր, սպիտակացնէր և ուլիկներին խարէր». — Այդպէս է, նա ոտքերն սպիտակացրեց, զնաց ուլիկների տան դուռը թագեց և շատ բարակ ձայնով երգեց և առաջայ նման ասաց.

— Ճանաչեցին ուլիկները զայլին. «Ոչ, այս անդամ նրանք չկարողացան ճանաչել». — Ինչո՞ւ «որովհետեւ իրանց մօր նման բարակ երգում էր, ոտքերն էլ մօր պէս սպիտակ էին». — Ճիշտ է. այս անդամ նրանք խարւեցին և ուրախ-սւրախ դուռը բաց արին. — Ո՞ւմ տեսան Զանկլօ Պանկլօն. «Նրանք տեսան չար զայլին», — Ի՞նչ արին խիզճ ուլիկները. «Նրանք շատ վախեցան» — էլ ինչ արին. «Նրանք ներս փախան» ճիշտ է, բայց կարողացան զայլի ձեռքից ազատուն. «ո՞չ, չկարողացան». — ինարկէ չկարո-

ացան. Եթք զայլը նրանց մօտեցաւ, Զանկլօն և Զանկլօն նրան շատ աղաչեցին, շատ խնդրեցին, բայց զայլ չլսեց նրանց և երկուսին էլ կուլ տւեց զնաց:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս զայլը ուլիկներին կուլ տւեց:

— Քիչ յետոյ, Զանկլօ — Պանկլօի մայրը տուն վերադառւ, ինչ տեսաւ նա. «Նա տեսաւ դուռը բաց, ձագերն էլ չկար». — Ինչ մտածեց մայրը. «Նա մտածեց, Զ. Պ. դուրս են եկել». — Այս, նա էլ այդպէս կարծեց, զրա համար դէս ու դէն ընկաւ, շատ որոնեց. — Գտա՞ւ մայրը ուլիկներին. «ոչ չգտաւ». — Մայրը հասկացաւ, որ ուլիկներին դժբախտութիւն է պատահել և չար զայլը կուլ է տւել. Մայրը շատ տխրեց, բայց մտածեց նրանց ազատել. — Ինչ պէտք է անէր, որ ազատէր, ով կարող է ասել. — Գուք չիմացաք, այ Արփիկը գտաւ. «այծը պէտք է զայլի փորը պատուի և ուլիկներին դուրս բերէր». — Այծը ինչո՞վ պէտք է զայլի փորը պատուի. «Նա իր պողիըով պէտք է պատուի». — Ճիշտ է. զրա համար նա առաւ մի աման սեր, մի աման մածուն, զնաց դարբնի մօտ, ընծայեց նրան և ասաց. — Ինչ ասաց. «Նա առաց պողերս սրիր». — Այս, նա ասաց. «Դարբին, դարբին, պողերս սրիր, զնամ չար զայլի փորը պատուի, Զանկլօ — Պանկլօիս պատեմ»...

— Համաձայնեց դարբինը. «Այս, նա համաձայնեց». Ճիշտ է նա համաձայնեց և այծի պողերը դանակի նման լաւ սրեց:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս այծը պողերը սրել տւեց:

— Այծը զնաց զայլի տան կտուրը, ոտներով հողը բանդեց, երդկից զայլի զլխին ածեց. Գայլը բարկացած գոռաց — ով է քանդում իմ կտուրը. «Ես եմ բանդում քո կտուրն ասաց այծը. ասա տեսնեմ, դու ես կերել իմ Զանկլօին, զու ես կերել իմ Պանկլօյին — թէ որ բաց ես դուրս եկ կուենք:

— Վախեցաւ Գայլը. «Ոչ, նա չվախեցաւ» — Գայլը ինչ

պատասխանեց այծին. «Նա այծին ասաց, ես եմ կերել քո Զանկլօին, ես եմ կերել քո Պանկլօին, ես դուքս կը գամ կուելու». — Այս:

Նրանք կուեցին. — Ինչ արեց այծը կուի ժամանակ. «Նա սուր պողերով խփեց գայլի փորին, փորը պատառեց»; — ինչ եղաւ գայլը. «Գայլը վայր ընկաւ». — իսկ Զանկլօ — Պանկլօն. «Զանկլօ Պանկլօն գայլի փորից դռւրս թռան». — Այս. Սյապէս այծն ազատեց իր ուլիկներին:

Ամփոփման կրկնել. Ի՞նչպէս այծը իր ուլիկներին ազատեց:

Այժմ պէտք է խաղալ. — Ինչ պէտք է անձնիք. «Մէկը լինելու է գայլ, մէկն այծ, երկուսը Զ. Պ., մէկը պատմողը». — Բոլորը քանիմ*).

Խորասուզումն...

Ոլիկները ուրախ, գւարթ իրանց համար ապրում էին. Նրանք կարծում էին, թէ ամերն էլ մօր պէս, իրանց սիրումն է չարբան չեն մտածում. ուղիղ էին նրանք մտածում. «Ո՛չ, նրանք սխալ էին մտածում». — Ինչո՞ւ. «Որովհետև գայլը նրանց համար շար էր մտածում: — Այս բանի համար, ով նրանց զգուշացրեց. «Մայրը նրանց զգուշացրեց». — Այս, նա Զանկլօ — Պանկլօից աւելի խելացի և փորձած էր. — Անտառ գնալիս, ինչ էր ասում մայրը նրանց. «Նա ասում էր, զգոյշ կացէք, զուռը փակ պահեցէք, չար գայլին չլսէք, եթէ ոչ նա ձեզ կվհասէ». — Լսեցին Զ. Պ. մօրը. — Այս, նրանք լսեցին». — Ուրեմն ուլիկները զուռը բաց չարին. «Ոչ, նրանք դուռը բացին». — Ինչո՞ւ բաց արին. «Որովհետև շար գայլը նրանց խարեց». — Ինչպէս խարեց. «Նա մօր նման բարակ ձայնով երգեց, ոտքերն ալիւրով սպիտակացրեց, ձագերը չկարողացան ճանաչել և դուռը բաց արին: — Ի՞նչ արեց գայլը նրանց. «Նա երկուսին էլ կուլ տւեց». — Ո՞վ ազատեց Զ. Պ.-ին. «Մայրն ազատեց», — Զէր վախենում մայրը շար գայլից. «Թէ նա վախենում էր, բայց նա իր ուլիկներին

*.) Համարեցէք:

այնչափ էր սիրում, որ իր կեանըը պատրաստ էր նրանց ազատելու համար զոհել: — Անպատիժ մնաց շար գայլը. «Ոչ նա անպատիժ շմաց, նա պատժւեցաւ» — Ո՞վ պատժեց. «Այծը նրան պատժեց». — Այծը ինչպէս պատժեց. — «Կուի ժամանակ, նա իր սուր պողերով խփեց գայլի փորին, փորը պատառեց, գայլն էլ սատակեց: — Ուրեմն մենք ի՞նչ տեսանք. — «Ճեսանք, որ շարը, վատը պատժի արժանի եղաւ»:

Մեր սովորած պատմութիւնների մէջ էլ ով իր որդուն ազատեց. — «Անտառի Մանուկ». ի մէջ Պախրատուրի մայրը իր որդուն ազատեց. Ճիշտ է:

— Մեր պատմութեանը յարմար ինչ առածներ գիտէք:

Մի առած ասում է. 1) Դրսից հայելի ներսէց ածելի. ի՞նչ է նշանակում այս առածը. — Այս, կան մարդիկ, որոնք խօսքերով լաւ, բարի են երեսում, իսկ իրանց մտքի մէջ շար և վատ բաներ են մտածում, անմեղներին վնասում են. — Ո՞վ այդպէս արեց. «Գայլը». — Ճիշտ է.

2) Անուշ լեզուն օծը ծակից կը հանէ.

— Մա ի՞նչ է նշանակում...

3) Ի՞նչ որ ցանես այն կը հսձես.

4) Ուրիշին հօր փորողն ինքը մէջը կ'ընկնի.

5) Ամեն բանի վերջն է զովելի.

Ճիշտ են ասում այս առածները. Ասում են նոյնպէս

6) Ամեն փորձանքին մի խրատ.

Ո՞ւմ համար յարմար է այս առածը. ինչո՞ւ ուլիկների համար.

Գործադրութիւն կառ վարժեցնելու հարցեր:

1) Եմեքդ էլ հայր ու մայր ունէք, նրանք ձեզ ի՞նչ են անում.

2) Եթէ ձեր մեծերը կամ ծնողները ձեզ մի բան ասեն, զուր ի՞նչ պէտք է անէք.

3) Կարող է ձեր ընկերներից մէկը դժւար զըութեան մէջ լնկնել.

4) Այծը մտածեց, հար գտաւ և ուլիկներին ազատեց

— Դուք ի՞նչ պիտի անէք, որ ձեզ ընկերներին կարողանաք ազատել:

Մեր պատմութեան յարմար ով կարող է մի հանելուկ ասել. ապա ասեցէք - ին ի՞նչն է - ինքը շինած է քարից և երկաթից, կերածն է ալիւր, խմածը ջուր, կը կշտացնէ ամբաղջ երկցին՝ բայց ինքն ամենեին չի կշտանայ:

(Չըաղաց.)



ԹՌՉՆԱՏՈՒՐ

Եյսօր պէտք է սովորենք, - ի՞նչպէս որսորդն անտառում մի մանուկ գտաւ.

— Ո՞վ կարող է կրկնել. ով է յիշում, անտառում էլ' ով մանուկ գտաւ. «Ընտառի Մանուկ»-ի պատմութեան մէջ, թագաւորի որսորդները գտան. — Ի՞նչ զրեց թագաւորը նրա անունը. «Պախրատուր զրեց». — Ինչու համար Պախրատուր զրեց. «որովհետեւ պախրան էր նրան պահել և մեծացրել. — Այժմ տեսնենք, թէ մեր որսորդն անտառում ինչպէս մի մանուկ գտաւ, ինչ զրեց նրա անունը և ինչ պատահեց այդ մանկան հետ:

— Կինում է չի լինում, մի որսորդ է լինում. նա ամեն օր գնում էր անտառ որսի. — Ի՞նչ կարող էր այստեղ որսալ. «աղէս, նապաստակ, թռչուններ և այլն»: Մի օր էլ նա որսի գնաց և ոչինչ չգտաւ. մէկ էլ յանկարծ հեռուից մի ձայն լսեց. ականջ զրեց, չկարողացաւ հաւկանալ, ոչ կենդանու ձայնի էր նման և ոչ էլ թռչնի. — Ի՞նչ ձայն նա լսեց. „Նա երեխայի ձայն լսեց. — Ի՞նչ արեց որսորդը. «Նա գնաց դէպի այն կողմը, որ երեխային գտնէ». — Ճիշտ է. նա շուտ շուտ գնաց մի մանուկ տեսաւ, մանուկը բարձր ձայնով լալիս էր. Գիտէք, մանուկը գետնի վրայ չէր. — ապա որտեղ էր. — ոչ, չիմացաք, նա մի բարձր ծառի վրայ էր: — Ի՞նչպէս էր նա այնտեղ բարձրացել. ոչ, նա այնտեղ չեր կարող բարձրանալ, նա գեռ շատ փոքր էր. — Ի՞նչպէս էր պատահել. որ նա ծառի վրայ էր... Գիտէք, մանուկը նստած էր մի մեծ թռչնի բնի մէջ, ուրեմն ով էր նրան այնտեղ տարել. — Ճիշտ է, թռոշունն էր նրան այնտեղ տարել. Թռչունը որտեղ էր մանկանը գտել. „Անտառում էր գտել» — Այո, նա մանկանը տեսաւ անտառի իրոտերի մէջ չորեքթաթ տալիս. — Ի՞նչ արեց թռչունը մանկանը. «Նա մանկանը կտցովը բռնեց և բռնը տարաւ».

— Ինչու թռչունը մանկանը տարաւ... ոչ, սխալում էր, նա մանկանը ուտելու շտարաւ, նա բարի թռչուն էր. պալա ինչու տարաւ. «Խղճաց նրա վրայ, զրա համար տարաւ». — Այս, նա մանկանը իր բունը տարաւ, որ անտառի գաղանները նրան շվնասեն, նա մանկանն ազատեց. — Ո՞վ էր մանկանն անտառ բերել. «Մայրն էր նրան բերել» — Այս, նրա մայրը իսեղճ կին էր, նա մանկանը զրկած անտառում բանջար էր հաւաքում, երբ շատ յոզնեց, մի ծառի տակ նստեց հանգստահալու և քնեց. — Ի՞նչ եղաւ մանուկը. «Նա չորեքժամ տալով մօր մօտից հեռացաւ». — ո՞վ բռնեց նրան. «Թռչունը բռնեց և իր բռնը տարաւ».

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս թռչունը մանկանը գտաւ:

— Ի՞նչ արեց որսորդը, երբ մանկանը թռչնի բնի մէջ տեսաւ. «Նա ծառը բարձրացաւ և մանկանը ներքե բերեց». Ճիշտ է. որսորդը մանկանը գրկեց, համբուրեց և նրա ձայնը կտրեց. — Որսորդը ուր տարաւ մանկանը. «Ի՞ր տունը տարաւ». — Այս, նա անտառում շատ ման եկաւ, երբ նրա մօրը զգտաւ, իր հետ տուն տարաւ. Նա ճանապարհին մտածում և ինքն իրան ասում էր. Այս լաւ եղու, իմ փոքրիկ Մարօն տանը մննալ է, այսուհետև խաղընկեր կունենայ: — Ի՞նչ արեց որսորդի աղջիկ փոքրիկ Մարօն, երբ մանկանը տեսաւ. «Նա շատ ուրախացաւ». — Ել ինչ արեց. «Գրկեց, համբուրեց և հետը խաղաց». — Ի՞նչ զրեց որսորդը գտած մանկան անունը... Սպա մտաբերեցէր, ինչ զրեց թագաւորին անտառում գտած մանկան անունը. «Պախրատուր». — իսկ այս մանկան անունը ի՞նչ պիտի դնէր. «Թռչնատուր»: — Ինչու Թռչնատուր զրեց. «Որովհետեւ թռչնունն էր նրան ազատել, թռչունն էր նրան պահել»: Ճիշտ է:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս Մարօն իր առ ընկերին ընդունեց:

Մարօն Թռչնատուրին շատ սիրեց. միշտ նրա հետ խաղում, ուրախանում և զւարմանում էր. Թռչնատուրն էլ նրան սիրեց. երկուսն էլ իրարուց չին բաժանում,

միշտ միտանին էին. Որսորդը մի աղախին ունէր, նա շատ զժգոհ էր, որ Թռչնատուրին բերին: Նա Թռչնատուրին չէր սիրում և ուզում էր տանից հեռացնել: Մէկ անգամ աղախինը Թռչնատուրի վրայ խիստ բարկացաւ և մի չար բան մտածեց. երեկոյեան, նա ամաններով շատ ջուր կրեց և մեծ պղնձի մէջն ածեց: Մարօն այս բանը տեսաւ. նա շատ զարմացաւ, մօտեցաւ աղախնուն և հարցրեց.

— Ի՞նչ հարցրեց. «Նա հարցրեց, ինչու ես այդշափ ջուր հաւաքում». — Այս, թէ Մարօն այզպէս հարցրեց, բայց աղախինը նրան չպատասխանեց: Մարօն նորից հարցրեց և շատ խնդրեց, որ ասէ. Վերջապէս աղախինն ասաց. «Թռչնատուրը վատ երեխայ է, նա իմ ասածները չի լուս, նա քեզ էլ, հայրիկիդ էլ չի սիրում». — Հաւատաց Մարօն. «Ոչ, չհաւատաց», Աղախինը յետոյ ասաց, որովհետեւ Թռչնատուրը վատ տղայ է, ես մտածել եմ առաւտեան այս պղնձի ջուրը նուացնել և նրան մէջը ձգել: — Երբ Մարօն այս բանը լսեց, ինչ արեց. «Մարօն սարսափեց և տիրեց». — Ինչու. «Որովհետեւ Թռչնատուրը կըմեռնէր». — Ուզում էր Մարօն Թռչնատուրից զրկւել. «Ոչ, չը ուզում». — Այս, չինց զրա համար ոչ միայն շատ տիրեց, այլ և մտածում էր, թէ ինչ անեմ, որ Թռչնատուրին ազատեմ:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս աղախինը ուզում էր Թռչնատուրին եռացւած ջրի մէջ ձգել:

Առաւտեան Մարօնի հայրը որսի զնաց. Մանուկները անկողնում պարկած էին. Մարօն տիբուր մտածում էր. — Ո՞ւմ մասին էր մտածում. «Թռչնատուրին աղատելու մասին էր մտածում». Այժմ աղախինը պղնձով ջուրը տաքացնում է, ասում էր Մարօն ինքն իրան, թիշ յետոյ էլ կըգայ Թռչնատուրին կըտանի, ես առանց Թռչնատուրի ինչպէս ապրեմ. ինչպէս աղատեմ նրան: Վերջապէս նա Թռչնատուրին ամեն ինչ պատմեց: — Ի՞նչ պատմեց Մարօն. «Մարօն պատմեց. աղախինը երեկոյեան պղնձով ջուր հաւաքեց. ես որշափ հարցրի, նա շատեց. երբ շատ խնդրեցի այսպէս ասաց.

—ինչ ասաց. «Նա ասաց, առաւտօտեան այս ջուրը պէտք է եռացնեմ և Թոշնատուրին մէջը ձգեմ»: — Երբ այս բանը Թոշնատուրը լսեց, ինչ արեց. «Նա սաստիկ վախեցաւ և լաց եղաւ»:

Մարօն նրան ասաց. սիրելի Թոշնատուր ես քեզանից շեմ կարող բաժանւել, եկ միասին այստեղից վախչենք, հեռանանք. — Համաձայնեց Թոշնատուրը. «Այո՛, նա համաձայնւեց»: Ճիշտ է: Մանսուկները շորերը հազան, ծածուկ վախան:

— Երբ պղնձով ջուրը եռ եկաւ, աղախինը ներս մտաւ մանուկների սենեակը, որ Թոշնատուրին տանէք. — Գտաւ աղախինը մանուկներին. «Ո՛չ, նա մանուկներին չգտաւ, նրանք այնտեղ չէին. — Այո՛, նա այդ տեսաւն իսկոյն հասկացաւ, որ Մարօն ամեն ինչ Թոշնատուրին պատմել է և միասին վախել են: Ողախինը մի քիչ մտածեց և շատ վախեցաւ. — Ինչո՞ւ նա վախեցաւ. «Նա վախեցաւ, որ որսորդը կարող է իմանալ»: — Այո՛, նա որսորդից վախեցաւ, թէ ինչ պատասխան պետք է տայնրան. — «Հէ որ իմ չար միտքը նա կիմանայ և ինձ կպատժէ»: մտածեց նա. դրա համար նա վախեցաւ և դրա վրայ էր մտածում:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս մանուկները տանից փախան:

Աղախինը որոշեց, մինչև որսորդի գալը, մանուկներին պէտքէ գտնել. — Դրա համար նա ինչ արեց. «Նա զնաց նրանց որոնելու»: — Ոչ, ինքը շգնաց նա կանչեց ծառաներին և ասաց. — Ի՞նչ ասաց. «Նա ծառաներին ասաց, մանուկները տանից վախել են, գնացէք բերէք»: — Այո՛, նա խիստ պատւիրեց, որ շուտ զնան լաւ ման գան և անպատճառ գտնեն բերեն»: ծառաները զնացին:

Մանուկները արագ արագ վախչում էին, նրանք շատ վախենում էին և շուտ շուտ յետ էին նայում. — Ինչո՞ւ այդպէս էին անում. «Որովհետեւ նրանք գիտէին, որ աղախինը մարդ կուղարկէ և բռնել կտայ: — Այո՛, նրանք դեռ անտառին չէին հասել, երբ իրանց յիտեից ուղարկած

ծառաներին տեսան: Թոշնատուրը շատ վախեցաւ և Մարօն ասաց — սիրելի Մարօն, այժմ ինչ անենք, ինչպէս աղատուենք դրանց ձեռքից: Մարօն ասաց. հանգիստ կաց Թոշնատուր, դու դարձիր վարդի թուփ, ես էլ կդառնամ վարդ. Ինչպէս ասաց, այնպէս էլ եղաւ. — Ուրեմն նրանք ինչ եղան. «Թոշնատուրը դարձաւ վարդի թուփ, Մարօն էլ նրա վրայ վարդ»: Ծառաները եկան շատ որոնեցին. — գտան նրանք մանուկներին. «Ո՛չ, չգտան»: — Ինչո՞ւ չգտան, «Որովհետեւ նրանք չգիտէին, թէ Թոշնատուրը վարդի թուփ է դարձել, Մարօն էլ վարդ»: Եյդպէս է, դրա համար նրանք որչափ դէս ու դէն ընկան, շարչարւեցին, ոչինչ չգտան և տուն վերադարձան: Սղախինը երբ այդ տեսաւ, բարկացած հարցուց. — Ինչ հարցրեց. «Ինչո՞ւ մանուկներին չէք դտել». — Էլ ի՞նչ. — «Ինչո՞ւ լաւ չէք որոնել»: — Ի՞նչ պատասխանեցին ծառաները. «Նրանք պատասխանեցին, ամեն տեղ նայել ենք, շատ ման ենք եկել, բայց չենք գտել»: Ճանապարհին ոչինչ շտեսաք, հարցրեց շարացած աղախինը. — Ինչ պատասխանեցին ծառաները. «Նրանք ասացին վարդի թուփ տեսանք, վրան էլ մի վարդ. Սղախինը հասկացաւ, որ նրանք մանուկներն են, դրա համար բարկացած ասաց նրանց. «Դուք ոչինչ չէք հասկացել, դուք պէտք է վարդի թուփը կոտրէիր, ոչնչացնէիր իսկ վրայի վարդը տուն բերէիր»:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս աղախինը ծառաներին մանուկների յնտեւից ուղարկեց:

— Ծառաների գալուց յետոյ, աղախինը մտածում էր, — Իմա մանուկները շատ հեռացած կըլինին, պէտք է շուտ անել և քանի որսորդը չէ վերադարձել, մանուկներին գտնել: Դրա համար նա կանչեց ծառաներին, այս անգամ խիստ պատւիրեց և ասաց. «շուտ զնացէք, լաւ որոնեցէք և մանուկներին անպատճառ գտէք բերէք»: Ծառաները զնացին. Թոշնատուրը երբ հեռւից ծառաներին տեսաւ, շատ վախեցաւ, բայց Մարօն նրան հանգտացրեց և աղատուելու հնարը գտաւ. — Ի՞նչ հնար գտաւ...»

Ոչ, այս անգամ նա ասաց. դու դարձիր եկեղեցի, ես էլ նրա խաչը. այդպէս էլ եղաւ. — ի՞նչ եղաւ. «Թոշնատուրը դարձաւ եկեղեցի, Մարօն էլ նրա զլիսի խաչը»: — Հասկացան ծառաները — իհարկէ ոչ. — Ասպա ի՞նչ արին նրանք. «Նրանք շատ ման եկան, շատ որոնեցին և ոչինչ շգտան, վիրջը տուն դարձան»: — Ի՞նչ ասացին նրանք աղախնուն. «Նրանք ասացին, շատ ման եկանք ոչինչ շգտանք: ճանապարհին տեսանք մի եկեղեցի, խաչն էլ զլիսին, — Հասկացաւ աղախնը. «Այս, նա հասկացաւ». — Դրա համար տռաջւայ նման ծառաներին յանդիմանեց և ասաց. — Ի՞նչ ասաց. «Ասպա ի՞նչու եկեղեցին չբանդեցիր և խաչը տուն շրերիք»:

Ամփոփել և կը կնել. Ի՞նչպէս աղախնը ծառաներին երկրորդ անգամ ուղարկեց:

Աղախնը շատ անհանգիսա էր, քանի գնում աւելի ու աւելի վախենում էր տիրոջից. — Ի՞նչու. «Որովհետե նա շուտով տուն կրվերադառնար և ամեն ինչ կիմանար». Այս, նա տեսաւ, որ ծառաներն առանց իրան ոչինչ չեն կարող անել, զրա համար այս անգամ ինքն էլ նրանց հետ գնաց մանուկներին որոնելու. Նրանք շատ ման եկան, շատ կողմեր գնացին և մանուկներին մօտեցան: Թոշնատուրը հեռուից աղախնուն ծառաների հետ տեսաւ. — Ի՞նչ արեց նա... «Նա շատ վախեցաւ». — Այս, նա շատ վախեցաւ և լաց լինելով փաթաթւեց Մարօն ու ասաց. «Մարօն, չար աղախնն եկաւ, աղատիր ինձ նրա ձեռքից»: Մարօն հանգստացրեց նրան և ասաց ես քեզ սիրում եմ և քեզանից չեմ կարող բաժանել. զու գարձիր լճակ, ես էլ նրա վրայ լողացող բարդ. Այդպէս էլ եղաւ. — Ի՞նչ եղաւ. «Թոշնատուրը դարձաւ լճակ, Մարօն էլ նրա վրայ լողացող բարդ»: — Երբ աղախնը լճակը և բաղը տեսաւ, հասկացաւ որ. մանուկներն են. «Այս, նա հասկացաւ որ դրանք մանուկներն են»: — Ուրեմն ի՞նչ պէտք է անէր. «Նա պէտք է լիճը ոչնչացնէր, բաղին էլ բռնէր տուն տանէր»: Այս, նա այդպէս էլ մտածեց. — բայց ի՞նչպէս

կարող էր լիճը ոչնչացնել: Ոչ, դուք չիմացաք. նա պառկեց զրի ափին և աղահաբար ոկսեց զուրը խմել, ոոը լիճը շորացնէր և բաղին բռնէր. — Հասկացաւ բաղը նրա չար միտրը. «Եյ՛, նա հասկացաւ». — Ճիշտ է, դրա համար բաղը լողալով հասաւ աղախնուն, կտուցով նրա մազերից բռնեց և բաշելով տարաւ լճի մէջ ձգեց. — Ի՞նչ եղաւ աղախնը. «Նա խեղզւեց». — Իսկ մանուկներն ի՞նչ արին. «Նրանք ուրախացան և տուն վերադարձան». — Այս, այդպէս Մարօն աղատեց իր ընկեր Թոշնատուրին:

Անփոփել և կը կնել. Ի՞նչպէս աղախնը խեղունց: Ամ Այժմ խաղալ. — Ի՞նչ պէտք է անենք. «Մէկը պէտք է լինի աղախնը, մէկը որսորդ, մէկը Թոշնատուր, մէկը Մարօն և մէկն էլ պատմծղը»:

Խորասուզումն:

Մենք իմացանք, որ աղախնը Թոշնատուրին չէր սիրում և ուզում էր նրան տանից հեռացնել. — Դրա համար նա ի՞նչ արեց. «Նա ուզեց թոշնատուրին եռացրած չրի մէջ ձգել և մեռցնել». — Կարողացաւ աղախնը իր շար միտրը կատարել. «Ոչ, նա չկարողացաւ. — Ի՞նչու չկարողացաւ. «Որովհետև Մարօն նրան օգնեց». — Ի՞նչով օգնեց. «Նա ամենից առաջ աղախնու չար միտրը Թըռշնատուրին պատմեց և նրա հետ տանից ծածուկ փախաւ: — Երբ ծառաներն եկան նրանց բռնելու, Մարօն ի՞նչ արեց. «Նու Թոշնատուրին օգնեց». — Ի՞նչով օգնեց. Նա Թոշնատուրին դարձրեց փարզի թուփ, ինքն էլ եղաւ փարզ. — Հասկացան այդ բանը ծառաները. «Ոչ, նրանք այդ չհասկացան և տուն վերադարձան». — Երբ ծառաները երկրորդ անգամին գնացին ի՞նչ արեց Մարօն. «Մարօն այս անգամ էլ օգնեց, նու Թոշնատուրին դարձրեց եկեղեցի, ինքն էլ եղաւ զլիսի խաչը». — Հասկացան ծառաները. «Ոչ, այս անգամն էլ չհասկացան և տուն վերադարձան»: — Երբորդ անգամին, երբ աղախնը ծառաների հետ գնաց, ի՞նչով օգնեց Մարօն. «Այս անգամ նա Թոշնատուրին դարձրեց լճակ, ինքն էլ դարձաւ բարդ»:

— Հասկացաւ աղախինը այդ բանը. «Ոյն, նա հասկացաւ». — ինչ արեց. — «Նա ուզեց լճակը ոչնչացնել և բաղին էլ բռնել». — Դրահամար ինչ արեց. «Նա պառկեց լճի ափին և լճակի ջուրն էլ սկսեց խմել, որ լճակը չորացնէ և բաղին բռնէ»: — Հասաւ աղախինը իր նպատակին. «Ոչ, նա չհասաւ իր նպատակին — ինչո՞ւ. չհաս աւ. «Նա չհասաւ իր նպատակին, որովհետև բաղիկն այդ բանը հասկացաւ, լողալով եկաւ աղախինու մագերից բռնեց, քաշեց տարաւ ջրի մէջ ձգեց ու խեղղեց»: — Ինչ էր կարծում, լաւ արեց Մարօն. «Այո՞ւ, նա լաւ արեց». — Ինչո՞ւ լաւ արեց. «Որովհետև աղախինը ուզում էր իր ընկերոջը մեոցնել». — Ինչո՞ւ էր ուզում աղախինն այդպէս անել. «Որովհետև նա չար էր, նա վատ էր». — Ուրեմն լաւ եղաւ, որ չար աղախինը պատժւեցաւ. «Ոյն, լաւ եղաւ», Այսպէս ուրեմն մենք էլի տեսանք, որ չար եւ վատ գուծ կատարողը պատժւեցաւ:

— Ինչո՞ւ հաւանեցիք Մարօին. «Որովհետև նա իր ընկերոջն ամին փորձանքից ազատեց»: — Ուրեմն Մարօն որպիսի ընկեր էր. «Մարօն լաւ ընկեր էր». — Ել ինչ. «Նա սիրելի ընկեր էր». — Ել. «Նա հաւատարիմ ընկեր էր». Ո՞ր պատմութեան մէջ մենք լաւ, սիրելի և հաւատարիմ ընկերոջ տեսանք. — Գիտէք մի այդպիսի պատմութիւն: Ապա ասացէք.

Սառմ են. 1) երանի նրան, ով հաւատարիմ և լաւ ընկեր ունի. Ճիշտ է. — ինչո՞ւ.

2) Ամին բանի վերջն է զովելի.

3) Ուրիշին հոր փորողը ինքը մէջը կընկնի.

4) Գող, սիրաը դող.

Այս առաջներն ում համար յարմար են.

Գործադրութիւնը,

— Ճիշտ է, որ ասում են, մարդու նեղութեան մէջ կընանաչէ.

2) Ել երբ կարելի է մարդու շուտ ճանաչել.

3) Ի՞նչ պէտք է անէր, որ լաւ և հաւատարիմ ընկեր լինէք.

4) Ո՞վ ունի սիրելի և հաւատարիմ ընկեր.

5) Ո՞վ կարող է մեր պատմութեան յարմար հանել լուկներ ասել.

1) Էն ինչ է. Բերան չունի, խօսում է. Ոտքեր չունի, գնում է. (Չուրը)

Ապա սովորեցէք այս ոտանաւորը.

Բաղիկ-բաղիկ, կարմիր թաթիկ,

Ուր ես գնում սյղպէս արագ

Զագուկներդ հետդ առած.

Ես գնում եմ լողանալու,

Զագուկներիս մաքրելու.

Զագուկներս են մաքրւր — մաքրւր.

Ցղոց երեսնէ աղտ ու մուր.

Ապա կարդացէք այս փոքրիկ հէքիաթը.

Հէքիաթ հէքիաթ պապս

Սև քուռակը տակս,

Հեծնիմ էրթամ երեան

Գինի խմեմ գիրանամ.

Հաւերուս չալթուկ բերեմ,

Հաւերս ինձ հաւկիթ տան.

Հաւկիթը տանեմ խառատին տամ,

Խառատն ինձ շի տայ.

Ջւին տանեմ հովին տամ,

Հովին ինձ գառ տայ.

Գառը տանեմ Աստծուն տամ,

Աստւած ինձ աղբեր տայ.

Աղբեր աղբեր ջան աղբեր,

Ճափար մաղեմ, կեր աղբեր.



ՊՈՉԱՏ ԿԱՇԱՂԱԿ

Գէտք է սովորենք. ի՞նչպէս պառաւ տատիկը կաշաղակին պառում է».

— Ո՞վ կարող է կրկնել... — Այժմ ասացէք, ո՞վ է տեսել կաշաղակ... — Այդ լաւ է, որ ամեքդ էլ տեսել էք... որտեղ էք տեսել. ով կարող է ասել. ապա Արփիկ գու ասա. «Ես կաշաղակ մեր պարտէզումն եմ տեսել». — Դու էլ ասա Արմիկ. — «Ես կաշաղակ մեր բակումն եմ տեսել». «Ես էլ անտառումն եմ տեսել» և այլն. — Այժմ ով կարող է ասել, ինչ են անում կաշաղակները պարտէզներումն եք բակերում. «Կաշաղակները պարտէզներումն եք բակերում ծառից ծառ են թռչկոտում, մի տեղից միւս տեղն են դնում և ճղղնդում են». — Էլ ինչ են անում. «Բակում ինչ որ ուտելու բան զբւած է լինում, փախցնում տանում են». — Ճիշտ է. Նրանք ոչ միայն ուտելու բաներն են փախցնում տանում, այլ շատ անգամ փոքրիկ աղջկների խաղալու հուլունքները, արծաթէ, ոսկէ զարդարանքները, մինչև անգամ փոքրիկ փալուն դրամներ փախցնում տանում են. այս մասին ես ձեզ յետոյ կը կարդամ: — Կաշաղակը մեր սովորած որ թռչունին է նման. «Կաշաղակը նման է ագռաւին». »Ճիշտ է. այժմ զանք մեր պատմութեանը. ապա մի անգամ էլ կրկնեցէք, ինչ — պէտք է սովորենք...»

Լինում է չի լինում, մի տատիկ է լինում. այդ տատիկը շատ աղքատ էք. նա միայն մի այծ ունէք. ամեն օք այծը կթում էք և իր թռոնիկներին դրանով կերակրում էք. Մի օր էլ կաթը կթեց, ծառի տակ զրեց ինքը զնաց փայտ բերելու, որ կաթը տաքացնէ, կերակուր պատրաստէ:

Ծյդ բոլորը ծառի վրայից մի թռչուն տեսաւ. — որ թռչունը տեսաւ. «Ծառի վրայից կաշաղակը տեսաւ». — Այն, կաշաղակը տեսաւ և մտածեց. — Ի՞նչ մտածեց. «Կաշաղակը մտածեց, զնամ և ուտեմ». — Այն, նա այդպէս մտածեց, թռաւ ամոնի վրայ կանգնեց, մի փոքր

խմեց և մեկ էլ ամանը շուր տւեց, կաթը թափեց և պառաւի թռոնիկներին քաղցած թողեց:

Ամփոփել և կրկնել. ի՞նչպէս կաշաղակը պառաւի կաթը թափեց:

— Երբ պառաւն այս բանը տեսաւ, ի՞նչ արեց. «Երբ պառաւը այդ բանը տեսաւ, սաստիկ բարկացաւ». — Ինչո՞ւ բարկացաւ. «Որովհետեւ իր թռոնիկները քաղցած մնացին. — Դրա համար պառաւը կաշաղակին ինչ արեց. «Նա կաշաղակին խփեց». Ճիշտ է. նա բարկացած ձեռքի վայտով կաշաղակին խփեց». — Ի՞նչ եղաւ կաշաղակը. «Կաշաղակը սատակեց». — Ո՛չ, կաշաղակը չվնասւեց, փայտը նրա պոչին էք կպել. ուրեմն կաշաղակի պոչն ինչ եղաւ. «Կաշաղակի պոչը կտրաւ, վայր ընկաւ». — Այն, կաշաղակը մնաց առանց պոչի, նա դարձաւ պոչատ. Կաշաղակը տեսաւ, որ ինքը շատ փոխւելէ և առանց պոչի ընկերներն իրանց մէջ չին ընդունէ և վերան պէտք է ծիծագեն՝ մտածեց պոչը յետ ստանալ, որ ընկերների մօտ կարողանայ գնալ:

— Պոչն ստանալու համար կաշաղակն ինչ պէտք է անէք. «Պոչն ստանալու համար. կաշաղակը պէտքէ գնար պառաւի մօտ և խնդրէք. որ պոչը իրան տայ»: — Այն, դրա համար էլ նա թռաւ գնաց պառաւի մօտ և աղաշելով ասաց. — Ի՞նչ ասաց. «Նա ասաց. պառաւ, խնդրում եմ պոչս տուր». — Այն, նա շատ խնդրեց և ասաց. — «Պառաւ, պառաւ պոչս տուր, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ. որ վրաս ծիծագեն և ասեն պոչատ — մոշատ կաշաղակն եկաւ». — Ուրեմն կաշաղակը պառաւին ի՞նչպէս ասաց. ապա կրկնիլ Վարդան... ինչ էք կարծում, պառաւը կաշաղակի պոչը տւեց. «Պառաւը կաշաղակի պոչը շտւեց» — ինչո՞ւ շտւեց. «Նրա համար շտւեց, որովհետեւ կաշաղակը նրա կաթը թափել էք». — Այն, որովհետեւ կաշաղակը պառաւի կաթը թափել վնաս էք տւել, դրա համար չուզեց չար կաշաղակի պոչը տալ. — Կաշաղակի պոչը տալու համար պառաւն իր կաթն ուզեց. «Պոչը տալու համար պառաւն իր կաթն ուզեց». — Դրա համար պա-

ուաւը կաշաղակին ասաց. «Գնա՞ կաթս բեր, որ պոչդ տամ, կցես կցմցես գնաս ընկերներիդ համես. — Կաշաղակը կաթ ստանալու համար ում մօտ գնաց. «Կաշաղակը կաթ ստանալու համար գնաց կովի մօտ». — Եյ՞նա գնաց կովի մօտ և առաջւայ նման ասաց. — Ի՞նչ ասաց. «Նա ասաց. կովիկ կովիկ կաթ տուր, կաթը տանեմ պառին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ. կցմցեմ-պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս համեմ», կովը քաղցած էր, չէր ուզում իզուր տեղը կաշաղակին լաւութիւն անել, դրա համար ասաց. — Ի՞նչ ասաց. «Կովն տսաց, գնայ ինձ համար խոտ բեր, որ քեզ կաթ տամ». — Խոտ ստանալու համար, ուր գնաց կաշաղակը. «Կաշաղակը խոտ ստանալու համար, գնաց արտի մօտ». — Ի՞նչ ասաց կաշաղակը արտին. «Կաշաղակը արտին ասաց. արտ, արտ, ինձ խոտ տուր, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ-կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս համեմ» որ չասեն թէ պոչատ-մոշատ կաշաղակն եկաւ».

«Նա ասաց, գնա ինձ համար ջուր բեր, որ քեզ խոտ տամ». — Ջուր ստանալու համար, մւր գնաց կաշաղակը. «Կաշաղակը ջուր ստանալու համար գնաց ջուր բաժանողի մօտ». — Եյ՞ն, նա թռաւ գնաց ջրբաշխի մօտ և ասաց. — Ի՞նչ ասաց. «Նա ասաց. ջրբաշխ, ջրբաշխի ինձ ջուր տուր, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ-կցմցեմ, պոչս սաղացնեմ, գնամ ընկերներիս համեմ» որ չասեն թէ պոչատ-մոշատ կաշաղակն եկաւ».

մար բահ բեր». — Բահ ստանալու համար ուր գնաց կաշաղակը. «Բահ ստանալու համար կաշաղակը գնաց դարբնի մօտ և ասաց». Ի՞նչ ասաց դարբնին ասաց. «Դարբին, դարբին մի բահ տուր, բահը տանեմ ջրբաշխին. ջրբաշխը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ-կցմցեմ, պոչս սաղացնեմ, գնամ ընկերներիս համեմ» որ չասեն թէ պոչատ-մոշատ կաշաղակն եկաւ»:

Դարբինը քաղցած էր, նա միայն չոր հաց ունէր և ուզում էր ձու գտնել, հացի հետ ուտել. — Դրա համար դարբինը ինչ ասաց կաշաղակին. «Դարբինը կաշաղակին ասաց գնա՞ ինձ համար ձու բեր». — Չու ստանալու համար, կաշաղակը ում մօտ գնաց. «Չու ստանալու համար, կաշաղակը գնաց հաւի մօտ և ասաց». — Ի՞նչ ասաց. «Կաշաղակին ասաց, հաւիկ հաւիկինձ ձու տուր, ձուն տանեմ դարբինը տամ. դարբին ինձ բահ տայ, բահը տանեմ ջրբաշխին. Ջրբաշխը ինձ ջուր տայ. ջուրը տանեմ արտին տամ. արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ. կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ. պառաւն պոչս տայ, կցեմ-կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս համեմ» որ չասեն թէ պոչատ-մոշատ կաշաղակն եկաւ»:

Հաւը տեսաւ, որ կաշաղակը շատ շարշարւել և յոդ-նել է — խղճաց նրա վրայ և մի ձու տւեց. — Երբ կաշաղակը ձուն ստացաւ, ինչ արեց. «Երբ նա ձուն ստացաւ, շատ ուրախացաւ». — Եյ՞ն, նա ուրախացաւ. Իսկ ինչ ասաց բահ հաւին. «Նա բարի հաւին ասաց. շատ շնորհակալ եմ որ ինձ օգնեցիր».

— Կաշաղակը ձուն ում տարաւ. «Կաշաղակը ձուն տարաւ դարբնին տւեց». — Իսկ դարբնին ինչ տւեց. «Դարբինը կաշաղակին մի բահ տւեց». — Կաշաղակը բահը ում տարաւ. «Կաշաղակը բահը տարաւ ջրբաշխին տւեց». — Ջրբաշխը կաշաղակին ինչ տւեց. «Ջրբաշխը կաշաղակին

զուր տւեց». — Յետոյ ինչ արեց կաշաղակը. «Կաշաղակը ջուրը տարաւ արտին տւեց». — Արտը ինչ արեց. «Արտը նրան խոտ տւեց». — Կաշաղակը խոտը ում տարաւ. «Կաշաղակը խոտը տարաւ կովին տւեց. — Կովն ինչ արեց. «Կովը նրան կաթ տւեց». — Կաթն ինչ արեց. «Կաթը տարաւ պառաւին տւեց. — Պառաւն ինչ արեց. «Պառաւը նրա պոչը տւեց». — Ի՞նչ արեց կաշաղակը պոչը. «Կաշաղակը պոչը կցեց—կցմցեց, պոչը սաղացրեց, թռաւ գնաց ընկերներին հասաւ».

Ամփոփել և կրկնել. Ի՞նչ արեց կաշաղակը որ պոչը յետ ստացաւ.

Այժմ՝ ինադանք. Ի՞նչ պէտք է անենք. «Մէկը լինելու է պառաւը, մէկը կաշաղակը, մէկը կովը, մէկը ջրաբաշխը և այլն. բոլորը քանիս — մէկն էլ պատմողը».
Խորասուզումն».

— Ինչու պառաւ տատիկը կաշաղակին պատժեց. «Պառաւ տատիկը կաշաղակին պատժեց նրա համար, որովհետեւ կաշաղակը իր կաթը թափեց և թոռնիկներին քաղցած թողեց». Դրա համար պառաւը նրան ինչ արեց. «Դրա համար պառաւը փայտով խփեց, նրա պոչը կտրեց և պոչատ դարձրեց»: — Ինչու կաշաղակը ուզում էր պոչը յետ ստանալ. «Պոչը յետ էր ուզում ստանալ, որ կցէր-կըցմցէր, պոչը սաղացնէր»: — Ինչու էր ուզում պոչը սաղացնել. «Որովհետեւ առանց պոչի ընկերները նրան իրանց մէջ չէին ընդունէ»: — Էլ ինչու էր ուզում պոչը սաղացնել. «Որովհետեւ առանց պոչի ընկերները կաշաղակին պոչատ տեսնէին, ինչ կարող էին մտածել. «Ընկերները երբ կաշաղակին պոչատ տեսնէին, կարող էին մտածել, որ կաշաղակը մի վատ բան է արել, որ պատժել են».

Այն, զրա համար կաշաղակը ուզում էր պոչը յետ ստանալ, որ կցէր-կցմցէր, պոչը սաղացնէր»:

— Պոչը սաղացնելու համար կաշաղակը ում մօտ գնաց. «Պոչը սաղացնելու համար, կաշաղակը գնաց պա-

ռաւի մօտ»: — Ինչու պառաւը կաշաղակի պոչը յետ ը տւեց. «Որովհետեւ կաշաղակը իր կաթը թափել էր», — Պառաւը պոչը տալու համար ինչ ուզեց. «Պառաւը իր կաթն ուզեց»: — Կաթ ստանալու համար կաշաղակը ուր գնաց. «Կաթ ստանալու համար կաշաղակը գնաց կովի մօտ»: — Կափարեց կովը կաշաղակի խնդիրը. «Ո՛չ, կովը կաշաղակի խնդիրը չկատարեց»: — Կաշաղակը պոչն ստանալու համար յետոյ ում մօտ գնաց. «Կաշաղակը գնաց արտի մօտ»: — Յետոյ. «Յետոյ գնաց զբաշխի, դարբնի և հաւի մօտ»: — Կաշաղակը ինչու զրանց մօտ գնաց. «Որովհետեւ ոչ ոք չէր ուզում իր խնդիրը կատարել»: Այն, կաշաղակն այդ բոլորի մօտ գնաց նրա համար, որովհետեւ ոչ ոք չէր ուզում իզուր տեղը չար կաշաղակին լաւութիւն աներ. — Ո՞վ կատարեց կաշաղակի խնդիրը. «Կաշաղակի խնդիրը հաւը կատարեց»: — Ինչու հաւը կաշաղակի խնդիրը կատարեց. «Որովհետեւ հաւը բարի էր»: — Էլ ինչու. «Որովհետեւ հաւը տեսաւ, որ նա շատ չարշարւել յոգնել է, զրա համար խղճաց նրա վրայ»: Այն, բարի հաւը խղճաց նրա վրայ և նրան մի ձու տալով ազատեց այդ նեղ դրութիւնից»:

— Միը սովորած պատմութիւնների մէջ էլ նվ բարի էր և ուրիշներին օգնեց. «Անտառի մանուկի մէջ Պախրան էր և ուրիշներին օգնեց». — Ինչու. «Նա խղճաց մանկան վրայ, ծիծ բարի էր»: — Ինչու. «Նա խղճաց մանկան վրայ, ծիծ բարի էր»: — Էլ նվ բարի էր. «Պախտեց, պահեց և պահպանեց»: — Էլ նվ բարի էր. «Պախտեց, պահուի էլ բարի էր, նա մանկանը օրօրեց, նանիկ արի հորթն էլ բարի էր, նա մանկանը օրօրեց, նանիկ ասաց և մօտը նստած պահում էր»: — Եպա զու էլ ասա սաց և մօտը նստած պահում էր»: — Ինչու. «Նա Պախրան. «Թագաւորն էլ բարի էր»: — Ինչու. «Նա Պախրան միծացըցեց, լաւ ուսում տւեց և թագաւոր դարձրեց»: — Դու էլ ասա չեղինէ. «Պախրան տառը էլ բարի էր, ըստ էլ թուրքին. «Որովհն էլ բարի էր, նա էլ թուրքինից ազատեց»: — Էլ ով բարի էր. «Թուրքինից մէջ Մարօն էլ բարի էր»: — Ինչու. «Նա Թուրքին չար աղախնուց ազատեց»: — Դու էլ ասա Դուրգին. «Որովհն էլ բարի էր, նա էլ թուրքինից ազատեց»: Այն, ասածներդ ճիշտ են»:

Մեր պատմութեան մէջ կաշաղակն էլ բարի էր. « Ո՞չ,
կաշաղակը բարի չէր, նա չար էր ». — Ուրեմն ինչու կա-
շաղակը պատժւեց. « Որովհետև կաշաղակը շար էր, նա
պառաւին վնաս տւեց, նա պառաւի թոռնիկներին քաղ-
ցած թողեց ». — Ուրեմն մենք էլի տեսանք, որ չարը, ու-
րիշին վնաս տւողը պատժի արժանացաւ. Մեր սովորած
ո՞ր առածներն այս պատմութեանը յարմար են. — Ո՞վ
կարող է յարմար առածներ ասել.

- 1) Ի՞նչ ցանես էն կը հնձես.
- 2) Ի՞նչ ասես, էն կը լսես.
- Գործադրութիւն.
- 1) Ո՞վ կուզէ, որ իր գիրքը մատիտը և ոետինը մէկը
փշացնէ.
- 2) Եթէ ձեր ընկերներից մէկն այդպէս լինէր, դուք
ինչ կանէիք նրան.
- 3) Ի՞նչ տեսակ ընկերներ կուզէք ունենալ.
- 4) Ի՞նչու բարի և լաւ ընկեր կուզէք ունենալ.
- 5) Ի՞նչ պէտք է անենք, որ բարի և լաւ լինէք.
- 6) Ո՞վ կարող է մեր պատմութեան յարմար հանե-
լուկ, ոտանաւոր ասել:



ԾՈՅԼ ԸՆԿԵՐՆԵՐ

Այսօր պէտք է սովորենք. Ի՞նչպէս աքաղաղը, խոյը
եւ էշը իրանց տիրոջ տանից փախան-հեռացան,

— Ի՞նչ պէտք է սովորենք, ով կարող է կրկնել...

— Ո՞վ է տեսել աքաղաղ... Իհարկէ ամեքդ էլ տեսել
էք, թէ ինչպէս նա բակում գեղեցիկ փետուրները շարժե-
լով իր ծուղրուղուն է կանչում, հաւերին կանչում և թըշ-
նամիներից պաշտպանում է:

Երեխ գիտէք, որ նա առաւօտեան շատ վաղ, լուսա-
բացին ծուղրուղուն է կանչում... — Ի՞նչու է նա կանչում.
« Նա կանչում է, որ մարդիկ զարթեն և գործի երթան ». — Իսկ մանուկներն ինչ անեն. « Մանուկներն էլ պէտք է
զարթեն, որ ուսումնարան գնան ». Այու.

— Խոյ ով է տեսել, որտեղ էք տեսել. « Ես խոյ տե-
սել եմ մեր բակում ». « Ես էլ տեսել եմ իրար հետ կը ո-
ւեցնելիս, նրանք իրանց ոլորուն եղջիւրներով մէկ մէկու
գլուխ գլխի խփելով կուռում են ». « Ես էլ տեսել եմ, միշտ
ոշխարի հօտի առաջով գնալիս ». Այու. ասածներդ ճիշտ են.

— Էշ որտեղ էք տեսել... պարզ է, որ ամեքդ սրան
շատ լաւ ճանաշում էք. Այժմ գանք մեր պատմութեանն.՝
ապա մի անգամ էլ կրկնեցէք — ինչ պէտք է սովորենք...

— Հինում է չի լինում, մի մարդ է լինում. այդ մարդը
ունէր մի էշ, մի խոյ և մի աքաղաղ. Երեքն էլ աշխատում
էին և իրանց տիրոջ մօտ հանգիստ ապրում էին:

Մի քանի ժամանակից յետոյ երեքն էլ ծուլացան և
էլ չէին ուզում աշխատել. Մի օր էլ, էշը աշխատանքից
տուն գարձաւ և բակումը մի քանի անգամ զռաց. Աքա-
ղաղն իսկոյն հասկացաւ, որ էշը զժզոհ է, դրա համար
հարցրեց. — Ի՞նչ հարցրեց. « Նա հարցրեց, ինչ կայ, ինչու
ես զժզոհ ». — Էշն ասեց, ինչպէս զժզոհ չլինեմ, ամեն
օր պէտք է զուր բերեմ, ջրաղաց գնամ ալիւր բերեմ,
փայտ պէտք է կրեմ. Է՞հ, սա ինչ կեանք է. Էլ չեմ ու-

զում աշխատել, այսուհետեւ ուզում եմ անգործ և հանգիստ ապրել։ Աքաղաղը հաւանեց էշի ասածին, դրա համար ասաց. — Ի՞նչ ասաց, «Աքաղաղի ասաց. ինչ պէտք է անես, որ անգործ և հանգիստ ապրեա»։ — Ի՞նչ պատասխանեց էշը. «Էշը պատասխանեց, ես պէտք է այստեղից փախչեմ հեռանամ»։ — Հաւանեց աքաղաղը այս վճռին. «Այս, աքաղաղը հաւանեց»։ — Ինչու աքաղաղը հաւանեց. «Աքաղաղը հաւանեց նրա համար, որովհետեւ ինքն էլ ծուլացել էր և չէր ուզում աշխատել»։ Ճիշտ է, դրա համար էլ աքաղաղը իր դժգոհութիւնները պատմեց և ասաց, զիտես եթէ մի գիշեր բնով անցնեմ և ծուլրուդու շկանչեմ պառաւ տատը ինձ պատմում է. կարող ես երեսկայել, մի օր էլ դրացու պառաւին ասում էր, թէ մեր աքաղաղը ծուլացել է, եթէ աղդպէս շարունակէ՝ ես նրա գլուխը կը կտրեմ։ Տեսնում ես ինչ բաներ է մտածում. — Երբ էշն այս դժգոհութիւնները լսեց, ինչ ասեց. «Նա ասեց, եթէ այդպէս է, արի միասին փախչենք, հեռանանք»։ — Համաձայնեց աքաղաղը. «Այս, աքաղաղը համաձայնեց»։

Երբ էշը և աքաղաղը իրար հետ խօսում, իրանց դըժգոհութիւնները պատմում էին, մէկը նրանց լսում էր, — Ո՞վ էր նրանց լսում. «Նրանց լսում էր խոյը»։ Այս, խոյը մօտեցաւ նրանց և ասաց. — Ի՞նչ ասաց խոյը. «Խոյն ասաց, ես էլ եմ դժգոհ, ինձ էլ հետներդ տարէք», նա ասաց. «Մեր տէրը ուզում է, որ ամեն օր ես ոչխարների առաջով գնամ, նրանց պաշտպանեմ և եթէ մի օր չնամ ին պատմում են»։ — Համաձայնեցին էշն ու աքաղաղը խոյի հետ փախչել, «Այս, նրանք համաձայնեցին»։ — Այս, այդպէս երեք դժգոհ ընկերները խելք խելք տիին, մտածեցին և մի օր էլ ծածուկ տանից փախան և հեռուցան։

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս էշը, խոյը եւ աքաղաղը տանից փախան հեռացան։

Երեք դժգոհ ընկերները գնացին մի դաշտ. — Ի՞նչ արին նրանք այստեղ. «Երեք դժգոհ ընկերները ման եկան

արածեցին, ուրախ-ուրախ խօսեցին և այն»։ — Ուրեմն երեք ընկերները գոհ էին իրանց արածեց գոհ էին։ Ճիշտ է. դրա հանկերները իրանց արածեց գոհ էին։ Ճիշտ է. պէտք է ապրել մար էլ էշն ասում էր. «Այս, այսպէս պէտք է ապրել։ Այս լայն և աղատ աշխարհում. գնացել էինք իզուր տեղը այս լայն և աղատ աշխարհում էինք. այ քեզ հանգիստ կեանք»։ շարչարում և աշխատում էինք. այ քեզ հանգիստ կեանք»։ — Հաւատացցին միւս ընկերներն այդ խօսքերին. «Այս, նրանք էլ հաւատացցին»։

Եյսպէս, էշը, խոյը և աքաղաղը խօսելով, խաղալով գնացին, գնացին, հասան մի լիոնացին նեղ և քարքարոտ ճանապարհի. Նրանք պէտք է այդտեղից վերև բարձրանալում. Աքաղաղը ճանապարհից գուրս եկաւ և առանց նային. Աքաղաղը ճանապարհից գուրս եկաւ և առանց միւսներին մի բան ասելու, ժայռից ժայռ, քարից քար թռչկոտելով վեր բարձրացաւ. Էշը միւս ընկերների թռչկոտելով վեր բարձրացաւ. Նա արածելով, քարերի միջով հանգրայ ուշը շղարձրեց. Նա արածելով, քարերի միջով հանգիստ գնաց. Խոյը երբ աեսաւ, որ այդ ճանապարհը իրահամար շատ դժւար է, ներքն իջաւ և սարի ստորոտով համար շատ դժւար է, ներքն իջաւ և սարի ստորոտով գնաց. Եյսպէս երեք ընկերներից մէկը սարը բարձրացաւ, մէկը սարի շորս կողմը պտոյտ տւող ճանապարհով գնաց, իսկ միւսն էլ ստորոտով շարսնակեց։

— Ի՞նչ էք կարծում, այդպէս գնալով մօտեղան նրանք մէկ մէկու. «Եյդպէս գնալով, նրանք մէկմէկու շմօտեցան»։

— Ապա ինչ եղան. «Նրանք մէկ մէկուց հեռացան»։ — Այս, այդպէս է նրանք այդ բանի մասին շմտածեցին և բանի գնացին, այնչափ իրարուց հեռացան. Երբ մութն ընկաւ, երեքն էլ գարմացան և վախեցան. — Ինչու նրանք զարմացան. «Նրանք զարմացան, որովհետեւ իրանք մենակ էին և ընկերներից ոչ մէկն էլ չէր երեռում»։ — Իսկ ումնից վախեցան. «Նրանք վախեցան վայրի գաղաններից»։

— Ինչու. «Որովհետեւ գաղաններն իրանց կը պատառէին»։ — Պաշտպանելու համար, էշը, խոյը և աքաղաղը ի՞նչ պէտք է անէին. «Պաշտպանելու համար նրանք պէտք է միմեանց գտնէին»։ — Էլ ինչ. «Նրանք պէտք է գիշերելու միմեանց գտնէին»։ — Ի՞նչպէս պէտք է նրանք մէկմէկու դըտ-տեղ գտնէին»։

նէին... — Գիտէք, աքաղաղը հնարը զտաւ. — Ի՞նչպէս զտաւ ծոլակ. «Աքաղաղը ծուղրուղու կանչեց»... Այո՛, նա ընկերներին իմաց տալու համար մի բարձր ժայռի գլուխ թռաւ, իրաը վրայ մի քանի անգամ ծուղրուղու կանչեց և ընկերներին իմաց տւեց. էշն աքաղաղի ձայնը լոեց. նա ուզեց իմաց տալ, որ ինքը հասկացել է և դալիս է. — Ինչով էշը հասկացրեց. «Էշը բարձր ձայնով զռաց». — Խոյն էլ լսեց աքաղաղի ձայնը. «Իհարկէ, խոյն էլ լսեց». — Նա ինչով ուզեց հասկացնել, որ ինքն էլ լսել է և դալիս է. «Նա էլ բարձր ձայնով մայելով գնաց նրանց մօտ»: Այո՛, այսպէս երեք ընկերներն իրար ձայնելով, մեծ դըժւարութեամբ մէկմէկու զտան: — Գիշերը շատ ցուրտ էք. դրա համար նրանք ինչ մտածեցին. «Նրանք մտածեցին գիշերելու տեղ զտնել». — Ճիշտ է. „Խոյն ասաց. ներքեռմ ձորի մէջ այրեր կան դնանք այնտեղ”, նրանք ներքև իջան, բաւական ման եկան, վերջապէս մի այր զտան և ուրախ ուրախ ներս մտան, դուռն էլ ծածկեցին և պնդացրին: Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս խոյը, աքաղաղը եւ էշը գիշերելու տեղ զտան:

Մենք իմացանք, որ խոյը, աքաղաղը և էշը մէկմէկու զտնելու համար իրար ձայն տիին և չորս կողմը թնդացրին. — Նրանց ձայները էլ ով լսեց. «Նրանց ձայները լսեցին վայրի գաղանները». — Ճիշտ է. վայրի գաղանները երբ էշի, խոյի և աքաղաղի ձայները լսեցին, շատ ուրախացան և մտածեցին. — Ի՞նչ մտածեցին. «Նրանք մտածեցին, որ գնան էշին, խոյին և աքաղաղին բռնեն և ուտեն». Այո՛, նրանք հէնց այդպէս էլ ուզեցին անել, բայց երբ ծեր և փորձած գաղանների խօսքերը լսեցին՝ էլ չգնացին: — Ապա ասացէք, ինչ էին խօսում ծեր և փորձած գաղանները. «Նրանք ասում էին, միթէ նրանք մենակ են». — Այո՛, ծերերն ասում էին. — միթէ այսպէս ուշ գիշերով վախկոտ էշը, խոյը կամ աքաղաղը մեր սարերը մենակ կը գան. չէ, այդտեղ մի բան կայ, պէտք է զգուշ լինել: — Ո՞վ կարող էր նրանց հետ լինել, որ այդպէս էին

մտածում. «Նրանք մտածում էին, որ էշի, խոյի և աքաղաղի հետ իրանց տէրերը կարող են լինել», — էլ ով. «Հովիները կարող էին լինել. — էլ ով. «Հները կարող էին լինել. — Եյն, նրանք այդպէս մտածելով խորհուրդ էրին, վիճեցին վիճեցին, վերջը վճռեցին էշի, խոյի և աքաղաղի վրայ շարձակել: Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս գաղանները վակեցան. Այդ գիշեր արջը հարսանիք ունէր. գաղանները նըամօտ հարսանիք էին գնացեր. Ամեքն էլ ասում խօսում էին. — Ում մասին էին ասում, խօսում. «Նրանք աքաղաղի, խոյի և էշի մասին էին ասում խօսում. Այո՛, նրանք դրանց մասին էին խօսում և չիմացողներին պատմում և ասում էին, «Ափսոս, հազար ափսոս, որ մեր ձեռքից տպատլան: — Չիմացողներն ինչ էին ասում. «Նրանք ասում էին, ինչու չբռնեցիք, ինչու բաց թռղիք»: — Այո՛, այդպիսի հարցեր շատերը տւին, իսկ զիտեցողներից իւրաքանչիւրը մի տեսակ պատասխանում էր. — Ի՞նչ էք կարգանշիւրը մի տեսակ պատասխանել. Ապա դու ասա Արմենակ. «Մէկն ասում էր նրանց չէր կարելի մօտենալ, որովհետեւ տէրերը հետներն էին». — Դու էլ ասա Օնիկ. «Մէկն էլ ասում էր այնտեղ պահապան շնիր կային»... — Այո՛, բացի այդպիսի պատասխաններից. նոյնպէս ասում էին «Ի՞նչ էք ասում, ես նրանց հետ շատ հրացանաւոր մարդուկ տեսայ». — Մի ուրիշն էլ հաստատում էր, թէ «բոլոր գիւղացիք այնտեղ էին», «Նրանք հօ այնշափ լիմար չեն, որ առանց պահապանի գիշերով մեր սարերը գային», ասում էին ուրիշները և այլն:

Հարսանիքի տան մէջ ալիւրմաղ հարկաւոր եղաւ. «Դալլ աղբեր, գնաց, քո այրից ալիւրմաղ բեր, որ գաթաթիսներ, ասաց արջը. Դալլը գնաց. — Ի՞նչ էք կարծում, գայլը ո՞ր ալրը գնաց — Ճիշտ էք ասում, նա այն այրը գնաց, որտեղ մի փոքր առաջ էշը, խոյը և աքաղաղը մտել էին, Գայլը դժւարութեամբ այրի զուռը բացեց և ներս մտաւ.

— Երբ դոան ձայնը լսեցին և գայլի պսպղուն աշքերը տեսան, ինչ արին էշը, խոյը և աքաղաղը. «Նրանք սաստիկ վախեցան». — Ինչու նրանք վախեցան. «Որովհետեւ մտածում էին, գայլը կարող է իրանց պատառել նուտել: — Գայլից ազատւելու համար նրանք ինչ ուզեցան անել. «Գայլից ազատւելու համար, նրանք ուզեցան դուրս վախչել. ազատւել». — Ճիշտ է. ամենից առաջ խոյը վազեց, բայց նրա երկար եղջեւները դուանը դիպան. ինչ եղաւ դուռը. Այն. ուղիղ էք ասում. դուռը շրախկ վակւեց, ինքն էլ ներսում մնաց, էշն երբ տեսաւ, որ դուռը փակւեց և ինքն էլ չի կարող դուրս գալ, դրա համար երկիւղից քացի էր տալիս, որ ոչոք իրան շմօտենայ: Էշի քացիները մօտիկ քարերին էին կաշում և բուռ կայծեր էր թափում. Աքաղաղն էլ վախից թները թափահարելով ճղում էր, — Ի՞նչ էք կարծում, ճանաչեց գայլը խոյին, էշին և աքաղաղին. «Ո՛չ, գայլը նրանց ը ճանաչեց»: — Գայլի կարծիքով նվ կարող էր գիշերով իր այրը մտնել. «Գայլի կարծիքով միայն թշնամիները կարող էին իր այրը մտնել». — Ինչու. — Որպէսզի գայլին համար երբ նա տեսաւ, որ իր ներս մտնելուց յետոյ դուռը շրխկալով փակեցին, մէկն էլ բուռ բուռ կայծեր էր թափում, միւսն էլ երկիւղալի ձայներ է հանում նա կարծեց, որ թշնամիները ուզում են իրան բռնել և կտոր կտոր անել, դրա համար նա լեղապատառ, վնգմնգալով դէս ու դէն ընկաւ. Վերջապէս մի ծակ մտաւ, մարմինը պատառով դուրս եկաւ այնտեղից և վազելով, հարսանիքառն ընկաւ.

— Երբ գաղանները գայլին գզգուած մազերով և վիրաւոր աեսան ինչ արին. «Երբ գաղանները գայլին այդպէս տեսան, ամեն էլ իրար խառնւեցան և հարցըրին». — Ի՞նչ հարցըրին. «Նրանք հարցըրին ինչ է պատահել, նվ այդպէս արեց».

Մարսափած գայլը մէկը տասն անգամ միծացըրած

պատմեց. — Խոյի մասին ինչ պատմեց. «Խոյի մասին պատմեց, որ մի գազան դուռը վակեց, որ ես դուրս չը գամ» այն, նոյնպէս ասաց. որ այդ գազանը վրայ հասաւ, որ ինձ պատառէ. — Էշի մասին ինչ պատմեց. «Էշի մասին ասաց. կայծակ թափող մի գազան էլ կար, երբ նա ինձ տեղաւ այնպէս կրակ թափեց, որ թիշ մնաց ինձ տեղնուտեղը վառէր». — Խսկ աքաղաղի մասին ինչ պատմեց. «Սրաղաղի մասին ասաց. մէկն էլ սարսափելի ձայներով ինձ վրայ արձակւեց». — Բացի գրանից պատմեց, թէ նա առաւտաղից գոռալով հըամաններ էր տալիս և ասում, շուտ պարան բերէր, որ գայլին կախներ. Այս քոլորն երբ տեսպարան բերէր, որ գայլին կախներ. Այս քոլորն երբ մի ծակ գտնելով, դուրս փախայ եկայ:

«Գայլի պատմութիւնը ինչ արեց գազաններին. «Գայլի գայլի պատմութիւնը նրանց վախեցըց»: Այն, նրանք շատ վապատմութիւնը նրանց վախեցըց»: Այն, նրանք շատ վախեցան, մտածեցին մտածեցին և փերջն ասացին. Այժմ խեցան, մտածեցին մտածեցին և փերջն ասացին. Էշին և հասկանալի է, որ թշնամին գիտմամբ էր խոյին, էշին և հասկանալի է, որ թշնամին գիտմամբ էր խոյին, էշին և հարազաղին գիշերով այստեղ բերել, որ մեզ խարէ և վնապարաղին գիշերով այստեղ բանակարաններն էլ հիմայ վտանգի մէջ են, լաւ է սէ. մեր բանակարաններն էլ հիմայ վտանգի մէջ են, լաւ է այստեղից հեռանանք և աղատւենք».

Այսպէս մտածելով, նրանք սուս փուս հեռացան գնացին:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս գաղանները վախեցան ու փախան:

Գայլի փախչելուց յետոյ, խոյը էշը և աքաղաղը շատ զարմացան և վախեցան.

— Ինչու նրանք զարմացան. «Նրանք զարմացան, որ գայլը փախաւ, իրանը էլ աղատւան». — Խսկ ինչու վագայլը փախաւ, իրանը էլ աղատւան. Կայծնոր փորձանը կարող է պատահել». — Էլ ինչու. «Կարծէ նոր փորձանը կարող է պատահել». — Դրածում էին. թէ գայլը գնաց ընկերներին բերելու. — Դրածում էին. թէ գայլը գնաց ընկերներին բերելու. «Նրանք մտածեցին տուն համար նրանք ինչ մտածեցին. «Նրանք մտածեցին տուն վերադառնալ». — Ուրեմն նրանք հասկացան իրանց սխալը. «Այն, նրանք հասկացան իրանց սխալը», — Ի՞նչ էր նրանց

սխալը. «Նրանց սխալն այն էր, որ տանից փախան. — Ինչու նրանք տանից փախան. «Նրանք տանից փախան, որովհետև չին ուզում աշխատել». — Խոյը, էշը և աքաղաղն ինչ դժւարութիւնների պատահցին, որ իրանց սխալը հասկացան. «Նրանք տեսան, որ գիշերելու տեղ չունին». — Էլ ինչ տեսան. «Նրանք տեսան որ գազանները կարող են իրանց վնասել» — Էլ ինչ. «Նրանք տեսան, որ իրանց պաշտպանողներ չկան". Ճիշտ է, — Ո՞րտեղ կարող էին էշը, խոյը և աքաղաղը լաւ պաշտպանւել. «Ճիրոջ տանը կարող էին լաւ պաշտպանւել». — Տանը ովք էր նրանց պաշտպանում. «Տանը նրանց պաշտպանում էր իրանց տէրը». — Էլ ով. «Տան շները — հովիւնները». Լաւ. — Ինչու տէրը էշին, խոյին և աքաղաղին պաշտպանում էր. «Ճէրը պաշտպանում էր, որ իրա համար աշխատեն»: — Ուրեմն խոյը, էշը և աքաղաղը ինչ պէտք է անէին, որ տէրը նրանց պաշտպանէր. «Խոյը, էշը և աքաղաղը պէտքէ աշխատէին, որ տէրը նրանց պաշտպանէր». Այս, դրա համար նրանք լաւ մտածեցին և որոշեցին էլ շծուլանալ ու տուն վերադառնան.

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս խոյը, էշը եւ աքաղաղը տուն վերադառնան:

Այժմ խաղալ. մէկը թող լինի շունը, մէկը խոյը, մէկը աքաղաղը, մէկը գայլը, մէկն էլ պատմողը... նրասուլումն.

— Ինչու էշը, խոյը և աքաղաղը տանից փախան. «Նրանք տանից փախան, որովհետև ծուլացել էին և ուզում էին անգործ ու հանգիստ ապրել». — Կարողացան նրանք հանգիստ ապրել. «Ոչ, չկարողացան» — Ինչու չկարողացան. «Որովհետև նրանք պատառող գազաններից փախեցան. — Էլ ինչու չկարողացան. «Որովհետև նրանք բնակւելու տեղ չունէին». — Ե՞լ. «Որովհետև նրանց պաշտպանողներ չկային». — Ինչու գայլը փախեցաւ և իր այրից փախաւ. «Նա փախաւ, որովհետև կարծում էր, թէ այնտեղ թշնամիններ են մտել և ուզում են իրան վնա-

սել». — Ինչու գայլը նրանց թշնամու տեղ դրեց. „Որովհետև այրը մութն էր և գայլը նրանց չճանաչեց». — Թշնամիններ էին այնտեղ. «Ոչ, թշնամիններ չէին, այնտեղ մտել էին էշը, խոյը և աքաղաղը». — Գայլը խոյին որպիսի կենդանու տեղ դրեց. «Գայլը խոյին մի սարսափելի գազանի տեղ դրեց». — Էշին ում տեղ ընդունեց. «Էշին կայծեր թափող գազանի տեղ դրեց». — Իսկ աքաղաղին. «Աքաղաղին հրամաններ տուղ գազանի տեղ». — Ո՞վ եղաւ պատճառ, որ խոյը, էշը և աքաղաղը այդպէս խիստ փախեցան. իրանք եղան պատճառ». — Ինչու. «Որովհետև նրանք ծուլացել էին և ուզում էին անգործ և հանգիստ ապրել. — Ուրեմն մեր ծոյլ կենդանինները ինչ եղան. «Ծոյլ կենդանինները պատժեցան». — Այս, դրա համար ասում են — 1) ծոյլը պատժի է արժանիք.

— Հարսանիքատան գազաններն ինչու փախան. «Նրաք փախան նրա համար, որովհետև գայլի պատմածին հաւատացին, գախեցան և փախան. Ճիշտ է. դրա համար ասում են.

2) Ահը վեր է մահից.

Մեր պատմութեան յարմար ինչ առածներ գիտէք.

3) Գլորաւ խուփը, գտաւ պուտուկը.

— Ո՞ւմ համար յարմար է այս առածը.

4) Տասը շափիր, մէկ կտըիր.

— Ո՞վ այդպէս շաբաւ.

Ինչու ասում են. 5) Գիտունի հետ քար կտըիր, անկտի հետ վլաւ մի ուտիր.

6) Ես աղա, զուն աղա, մեր աղունը ով աղա.

Առաջ սովորել էինք. — 7) Օմեն փորձանքի մի խրատ.

Ում համար խրատ եղաւ:

Վարժեցնելու հարցեր.

Մեր պատմութեան մէջ ովք էր ծոյլ.

Հաւանեցիք ծոյլ ընկերներին.

Ինչու հաւանեցիք.

Ծնողները ուսուցիչներն ու ընկերները, ծոյլ մանուկ-

ներին ինչ են անում.

ճիշտ է, որ ասում են ծոյլը պատժի է արժանի.
Գիտէք այդպիսի պատմութիւններ. ով կարող է
պատմել.

Ի՞նչ պէտք է անէք, որ ծոյլ չինէք.
Ում համար է ասած այս առածը — Հաց զնիմ հա-
սիր, բան զնիմ փախիր.

Իսկ ում համար է ասած այս առածը — ուստի զնի
բանը ով կանէ, ես ու գու.

Հացը ով ուտէ, ես ու գու.
Ով կարող է ծոյլերի համար մի ոտանաւոր ատել.

1) Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին, ծիտն է
ծառին, հաւն է թառին. աշխատաւոր, վերկաց բանի, ծոյլ
տղայի քունը տանի:

2) Բանն ինչ կանիմ, կեղառտ է. բամբակը կորիզնոտ է.
մաստակ պիտի, որ ծամեմ, կտերը տիտիկ անիմ, անց-
նողին մտիկ անիմ, ուտեմ, խմեմ, մթեի քնիմ:

Ապա սովորեցէք այս փորբիկ ոտանաւորը.

Դու ինձ ասա, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միջուքիդ մատաղ.
Ինչու ես շուտ արթեանում,
Բարձր բարձր երդ ասում,
Քաղցր քունս խանգարում:



ՈՒՐԱԽ ԶՈՒՀԱԿԸ

Այս անգամ պէտք է պատմեմ ուրախ ջուհակի պատ-
մութիւնը.

— Ով կարող է կրկնել...

Ում ենք ասում զուհակ. «Ճուհակ այն մարդուն ենք
ասում, որ պատրաստում է տհսակ տհսակ կտաւներ, երես-
սրփիչներ, զլխի ցամքոցներ և այլն». — Ճուհակն այդ
բաները որտեղ է պատրաստում. «Ճուհակն այդ բաները
իր արհեստանոցում է պատրաստում»: — Գիտէք նրա ար-
հեստանոցին ուրիշ խօսքով ինչ են ասում... — Ի՞նչպէս
են ասում գարբնի արհեստանոցին, «Դարբնի արհեստա-
նոցին գարբնոց են ասում». — Իսկ զուհակի արհեստա-
նոցին. «Զ-ի արհեստանոցին զուհականոց*») են ասում.
— Ով է տեսել ջ-նոց — Իհարկէ, ամեքս էլ միասին տե-
սանք: Այժմ ով կարող է ասել, ինչով է գործում ջ-ը. «Զ-ը
գործում է մաքուքով». — Ի՞նչպէս է ջ-ը մաքուքով
գործում. «Նա ձւածն սուր մաքուքի վրայ թել է
փաթաթում, ապա սոտքերը սեղմելով զսպանակների
վրայ, ոստայնի թելերի արանքը լաց է անում, յետոյ մա-
քուքը դրա արանքով ներս ու դուրս է անում. սրանից
յետոյ նա մեծ սանրը ձեռքով քաշում է, թելերն իրար
մօտեցնելով ամրացնում և գործում է»: — Բացի վարպե-
տից, էլ ով կայ ջ-ոցում. „Բացի վարպետից, այնտեղ կան

*) ՄԱՆՈՒԹՈՒԻԹԻՒՆ. Անպայման պէտք է մանուկներին վա-
րուք տանել ջուհականոց, նրա բոլոր գործիքները, աշխատա-
ռուները ցոյց տալ և բացատրել. Նրանք պէտք է տեսնեն, թէ
կտաւն ինչպէս են գործում, իւրաքանչիւր պաշտօնեայ ինչ գործ
է կատարում և այլն: Առհասարակ սրա նման դէպքերում, ան-
համեշեշտ է կենդանի կերպով ամեն ինչ ցոյց տալ՝ ապա նոր
սովորեցնել. հակառակ դէպքում, ուսուցչի տւած վերացական բա-
ցարութիւնները և գ-աւկեցները նպատակի չեն կարող հաս-
նել և շատ բաներ մանուկների համար մութ և անհասկանալի
կը ննան,

ուրիշ ծառայողներ – վարպետի օգնականներ և աշակերտներ». — Ի՞նչ են անում այդ ծառայողները. «Ելզ ծառայողները վարպետին օգնում են»։ — Նրանք վարպետին բնչով են օգնում. «Մէկը մարտուրի վրայ թել է փաթաթում, մէկը հինք է հինում, մէկը հինածը ոստայնի վրայ է անց կացնում, մէկը սանրի մէջն է կապում և կարգի է բերում, մի քանիսն էլ գործում են և այլն»։ Ճիշտ է. այդ բոլորը մեր տեսած ջոցում կար. այժմ զանք մնու պատմութեանը. ապա մի անգամ էլ կրկնեցէք թէ ի՞նչ ենք սովորելու։

Ի՞նում է չի լինում, մի ջուհակ է լինում. այդ Զ-ը իր կնոջ և որդիների հետ շատ ուրախ և լաւ ապրում էր. Նրա տանից երգի և ուրախութեան ձայները չեին կտրւում. — Ինչու ջն այդպէս ուրախ էր. «Զ-ն այդպէս ուրախ էր, որովհետեւ նրա գործերը շատ լաւ էին առաջ գնում», — ել ինչու. «Որովհետեւ ջը ոչ մի բանի հարկաւորութիւն չունէր. — ել ինչու. Ապա ասացէք, եթէ մէկը հարուստ է և ոչ մի բանի կարիք չունի, բայց ինքը կամ կինը տկար է. այդպիսի մարդն էլ ուրախ կը լինի. »Ոչ, եթէ մէկը տկար է, նա չի կարող ուրախ լինել. — Ուրեմն էլ ի՞նչ պատճառ կար, որ ջը ուրախ էր. «Զ-ը ուրախ էր, որովհետեւ ինքն էլ, կինն էլ և որդիներն էլ առողջ էին»։ Այս, թէ ջը հարուստ չէր, բայց նա փողի կարիք չունէր, բոլորն էլ առողջ էին և աշխատում էին. բացի դրանից ջն իր կնոջը, որդիներին շատ սիրում էր, կինն ու որդիներն էլ իրան էին սիրում. Այս, հինգ այս պատճառով նրանք բոլորը միշտ ուրախ և գւարթ էին։

Ապա մի անգամ էլ կրկնեցէք, ինչու ջի ընտանիքը ուրախ էր. Մեր տեսած ջոցում շատ ծառայողներ կային, իսկ այս ջը ոչ մի ծառայող չունէր. — Ապա ի՞նչպէս էր նա իր գործերը կատարում. — Ոչ, նա քիշ գործ չունէր. մենք իմացանք, որ նրա գործերը շատ լաւ էին. — Ի՞նչ էք կարծում, ով էր նրան օգնում. «Նրան օգնում էր կինը»։ — Միայն կինն էր օգնում. «Որդիներն էլ էին օգնում»։ Ճիշտ է, կինն էլ, որդիներն էլ այդ արհեստը գիտէին և

միշտ հայրիկին օգնում էին. Իմացանք, որ ջի տանից երդի և ուրախութեան ձայներն անպակաս էին. զրա համար նրանց տան մօտից անց ու գարձ անողները զարմացած ասում էին. — Ի՞նչ էին ասում. «Նրանք ասում էին, այս տանեցիշ ինչ ուրախ մարդիկ են. — Ո՞վ էր ջի մօտ երգում. «Զ-ի մօտ երգում էին որդիները»։ — Այս, որդիների հետ մայրն էլ, հայրն էլ երգում էին. Զ-ի որդիներն երբ ազատ էին լինում, միշտ հայրիկի մօտն էին. — Ինչու նրանք հայրիկի մօտն էին. «Նրանք հայրիկի մօտն էին, որ նրան օգնէին»։ այդպէս է. բացի գրանից հայրիկն ու մայրիկը նրանց համար սիրուն սիրուն հէքիաթներ էին պատմում, առակներ ասում, հանելուկներ առաջարկում. — Մանուկներն ի՞նչ էին անում. «Մանուկներն էլ լսում էին, հայրիկին նորից պատմում էին, հանելուկները գտնում էին»։ այդպէս է. Այսպէս ջը մի կողմից որդիների հետ խօսում ծիծաղում, և պատմում էր, միւս կողմից մարդուկը ձգելով՝ կտաւը գործում յառաջ էր տանում։

Գիտէք. ջը միախ իր որդիների համար շեր երգում. նա երգելով գովում էր նոյնպէս իր արհեստը. — Ինչու էր գովում. «որովհետեւ նա արհեստով փող էր աշխատում և իր ընտանիքին պահում էր»։ — Զ-ն իրան արհեստ սովորեցնողին էլ գովում էր, ուրեմն ում էր գովում. նա գովում էր իր հօրը և իր պապին.՝ Ճիշտ է. նա գովում էր նոյնպէս իր գործիքները. Ինչու էր գովում. «որովհետեւ գործիքներով էր աշխատում»։ — Այս, տսեմ թէ նա նա իր մաքուկին ինչպէս էր գովում.

Դէն թոիր մաքուկ,

Խաղ արա արագ

Թելերի միջում,

Հիւսիր նուրը կտաւ.

Ամփոփել և կրկնել. — Ի՞նչպէս ուրախ ապրում էր ջուհակը.

Զ-ի տան մօտ ապրում էր նրա վաճառական եղբայրը. նու շուտ շուտ զնում էր ուրիշ բաղադրեր

և կարճ ժամանակում մեծ հարստութիւն ձեռք բերեց. Ամենքն էլ զարմանում և ասում էին թէ չ-ի եղբայրը իր աշխատանքով չի հարստացել, այլ ուրիշ ճանապարհներով է բոլորը ձեռք բերել; — Բացի աշխատելուց էլ ուրիշ ինչ ճանապարհներով կարող էր հարստանալ. «Նա կարող էր ուրիշներին խարիսխ, զբկելով հարստանալ». — Էլ ի՞նչ միջոցներով կարող էր. — «Նա կարող էր զողանալով, ուրիշներին թալանելով էլ հարստանալ». Այս, ամենքն էլ ասում էին, որ չ-ի եղբայրը այդպիսի ճանապարհներով էր հարստացել — դրա համար չ-ը նրան չէր սիրում:

Մէկ անգամ չ-ի կինը մտաւ չ-ոց և մարգուն առաց.

«Այ մարդ, զու մի զլուխ քո մտքուկն ևս զցում. մի քիչ զբսի աշխարհին նայիր, մի վեր կաց, տես եղբայրդ բիւներով հարստութիւն է բերել. Զ-ը նայեց կնոջը, ժպտաց և ուրախ ուրախ երգելով ասաց.

Արեփ շողբը երթկից թառու

Ու մեր կեանքիցը մի օր էլ տարաւ.

Այդպէս կըթոշի մեր կեանքը կարճիկ

Ոսկին ու փառքը, շարժեն մի ժպիտ.

Այս երգով չ-ը ինչ էր ուզում կնոջը հասկացնել. «Այդ երգով չ-ը կնոջը ուզում էր հասկացնել. թէ մեր կեանքը կարճ է, արեփ շողքի նման շուտով կըթոշի». — Էլ ինչ էր ուզում հասկացնել. «Նա ասում էր, որ ոսկին ու արծաթը մի ժպիտ շարժեն.»

Ուրեմն չ-ի համար ինչ բանն էր յաւ հարստութիւնը՝ թէ ուրախութիւնը. «Նրա համար ուրախութիւնն էր յաւ.» — դրա համար նա ինչ երգեց — ապա կըկնիր Յակոբ «Նա երգեց. ոսկին ու արծաթը շարժեն մի ժպիտ»:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպիս չ-ի եղբայրը հարստացաւ.

Մի օր էլ չ-ը եղբայրների հետ ուրախ երգում և գործում էր. յանկարծ մի կարաւան զընդալով լուսամուտի մօտով անցաւ և եղբօր դրան առաջը կանգնեց. Չ-ը դրա վրայ ուշք շղարձրեց և իր ուրախութիւնը շա-

քունակեց. մէկ էլ յանկարծ կինը ներս մտաւ և զարմացած առաց. «Մի վեր կաց, վեր կաց տես եղբայրդ ինչ է բերել... մի ահազին կարաւան ոսկի, արծաթ, ապրեշում... վեր կաց տես, ծճի է ծով. այդ հարստութեանը տեղ չի լինի»:

— Զուրհակն էլ զարմացաւ. «Ո՞չ չ-ը չպարմացաւ», այո՛, նա չպարմացաւ նա էլի ժպտաց և առաջւայ նման Քրդելով կնոյն ասաց.

Մուկն անդամ չի մնայ ազատ,

Մի օր էլ յանկարծ կրնկնի թակարդ.

Ազատութիւնն է թանգ ամեն բանից,

Բեռն ու կարաւանը, շարժեն մի ժպիտ:

— Հեշտութեամբ է մուկը թակարդ բնկնում. «Ո՞չ, մուկը հեշտութեամբ թակարդ չի բնկնում» — ինչո՞ւ. «Շովինիուն նա զգուշ է, նա չի ուզում բռնւել»:

Մուկն ամեն անդամում ազատ չի մնայ.

Մի օր էլ յանկարծ, կրնկնի թակարդ. Չ-ը սրանով ինչ էր ուզում ասել. «Պրանով չ-ը ուզում էր ասել, որ մուկը թէն զգուշ է, բայց նա էլ ամեն անդամ չի կարող աղատիլ, մի օր էլ թակարդ կրնկնիա»: — Զ-ը այս օրինակը ում համար էր ասում. — «Ի՞ր եղբօր համար էր ասում»:

— Դրանով չ-ը կնոջը ինչ էր ուզում հասկացնել. «Չ-ը դրանով կնոջն ուզում էր հասկացնել, թէ եղբօր հարստութեան վրայ շպէտք է զարմանալ»: — Ի՞նչո՞ւ. «Որովհետեւ մի օր էլ նրա արածները կըբացւին նա էլ թակարդ կրնկնի և կըպատճի. — Ի՞նչ բանն էր չ-ը թանգ համարում — «Չ-ն ապատութիւնն էր ամեն բանից թանգ համարում» ճիշտ է»:

Ամփոփել և կրկնել. Ի՞նչպէս չ-ի եղբայրը հարստութիւն ընթաց:

Միւս առաւօտեան չ-ի կինը վախեցած ներս մտաւ և ամուսնուն ասաց. «Այս ըուպէխս ոստիկաններն եկան, եղբօրդ բերած հարստութիւնն էլ, իրան էլ կապեցին ու առարնեա»:

— Ռոտիկանները նրապիսի մարդկանց են բանում. «Ռոտիկանները բռնում են գողերին, աւազակներին»։ — Էլ ո՞մ Շոստիկանները բռնում են մարդասպաններին, խարդախներին, խարեբաններին»։

— Ինչո՞ւ այդ տեսակ մարդկանց բռնում է պատժում են.

— «Արովհետև այդ տեսակ մարդիկ ուրիշներին վնասում են, նրանց ունեցածը խլում են, մարդիկ են սպանում» ճիշտ է.

— Զ-ի եղբայրն ինչ պէտք է արած լինէր, որ ոստիկանները բռնեցին, ապրանքներն էլ տարան. «Զ-ի եղբայրն այդ հարստութիւնը, ապրանքը ուրիշին խարելով բերել էր»։ — Է-լ ինչ կարող էր արած լինել. — «Գուցէ նա նա թալանել էր»։ — Եյ՞, դրա համար էլ ոստիկանները նրան բռնեցին, որ սպատին, ապրանքն էլ տարան՝ որ տէրերին յետ դարձնեն. Զ-ն երր լսեց որ եղբօրը բռնել են, այս անգամ տիսրեց և էնոցն երգելով ասաց.

Զնդալով կանցնի կարաւանը սարէն
Ամեն մի թելին մի տէր կայ կշտին.
Ո՞վ էր տեսել որ բըտինը չթափած,
Ոսկի, արծաթի, փառքի տէր դառնալ.

— Այս խօսքերով զ-ն ամենից առաջ ինչ էր ուզում տաել. «Նա այդ խօսքերով ուզում էր ասել, որ ամեն ինչ, մինչև անգամ մի թելն էլ տէր ունի»։ — Զ-ի կարծիքով մարդիկ ինչ բանով կարող են փող, ունեցածը ձեռք բերել. «Զ-ի կարծիքով մարդիկ աշխատանքով, քրտինք թափելով կարող են ձեռք բերել»։ — Կան մտրդիկ որոնք առանց քրտինը թափելու, առանց աշխատելու փող, հարստութիւն, ունեցւածը են ձեռք բերում. «Եյ՞, կրօնաբանիկ, որոնք փող, հարստութիւն առանց աշխատանքի, է այդ կերպ ձեռք բերել»։ — «Եյդ կերպ կարող են ձեռք բերել»։ — «Եյդ կերպ կարող է այդ կերպ առաք բերել զողերը, խարեբանները, մարդասպանները»։ — Այդպիսի մարդկանց ինչ ենք ասում. «Ծյրպիսի մարդկանց ա-

առւմ ննք վատ մարգիկ, շատ մարգիկ»։ Էլ ինչ. «Վնասակար մարդիկ, անպատիւ մարդիկ և այն»։ — Դրա համար մենք ոյդ վնասակար, անպիտան և շար մարդկանց ինչ ենք անել տալիս. «Մենք այդպիսի մարդկանց բռնել ենք տալիս, պատժել ենք տալիս» — Էլ ինչ. «աքսորել ենք տալիս»։ Այս, այդ տեսակ մարդկանց պատժում ենք, քանզարգել ենք տալիս, ազատութիւնից զրկում և այն»։

— Հաւանեց ջուլհակը իր եղբօր արածին. — ինարկէ հնաւանեց. դրա համար նա երգելով կնոցն առեց.

Թոփր իմ մաքուկ

Թոփ առ ու խաղայ,

Թելերի միջում

Հիւսիր նուրբ կտաւ.

Սղատութիւնն է վեր ամեն բանից,

Գանձերն ու ոսկին

Չարժեն մի ժպիտ:

— Զ-ը նր խօսքերովն էր աշխատանք գովում. «զ-ն այս խօսքերովն էր աշխատանք գովում.

Թոփր իմ մաքուկ

Թոփ առ որ խաղայ

Թելերի միջում

Հիւսիր նուրբ կտաւ.

— Ո՞ր խօսքերովն էր ազատութիւն երգում. — «Այս խօսքերսն էր երգում. ազատութիւնն է վեր ամեն բանից» խօսք ուրախութիւնը որ խօսքերով. «Գանձերն ու ոսկին չարժեն մի ժպիտ».

Գիտէք ջուլհակն իւր կիանքի մէջ երբէք չծուլացաւ. նա միշտ աշխատում, քրտինք էր թափում և այդ բաներն իր կնոցն ու որդիներին էր սովորեցնում.

Ամփոփել և կրկնել - Ե՞նչպէս Զ-ի եղբայրը պատժեց, Այժմ խաղալ. ինչ պէտք է անենք — այն, մէկը զ-ը, մէկը կինը, միքանիսը որդիները ..

Խորասուզում:

— Ինչո՞ւ զ-ը ոչ մի բանի հարկաւորութիւն չունեցաւ.

«Արովհնեան նա աշխատում էր և իր լորր կարեքները հոգում էր.

— Զ-ը իր կեանքով որդիներին բնչպիսի օրինակ տւեց. «Զ-ն աշխատութեան օրինակ տւեց».— Էաւ, արեց զ-ը, որ այդպիսի օրինակ տւեց. «Այս, նա լաւ արեց».— Ինչո՞ւ լաւ արեց— „որպէսզի որդիները մեծանալիս աշխատին և իրանց աշխատանքով ապրեն”.— Դրա համար զ-ը նրանց փոքր հասակից ինչ էր սովորեցնում. «Դրա համար զ-ը նրանց աշխատեցնել էր սովորեցնում».— Մեր սովորած պատմութիւնների մէջ էլ ով էր աշխատասէր. «Անտառի մտնուկի», մէջ, Պախրատուրն աշխատասէր էր», — Ինչո՞ւ նա ցոյց տւեց իր աշխատատիրութիւնը, „Նա թաղաւորի պալատում աշխատեց, լաւ ուսում առաւ, դրա համար թաղաւորը և ժողովուրդը նրան սիրեցին”.

— Աշխատասէր զ-ն ինչպիսի կեանք էր վարում իր կեոց և որդիների հետ. «Աշխատասէր զ-ն իր կեոց և որդիների հետ. հանգիստ, ուրախ և ազատ կեանք էր վարում»; — Ի՞նչ յարմար առածներ գիտէր.

- 1) Աշխատանքը լեռներ կը հասասարեցնէ,
- 2) Հաց ու պանիր, կեր ու բանիր.
- 3) Բանն ով անէ, ես ու զու.

Հացն ով ուտէ, ես ու զու.

Իմացանք, որ զ-ը հանգիստ և ազատ կեանքի մասին էր մտածում.— Զ-ի եղբայրն էլ այդպէս էր մտածում. «Ոչ, զ-ի եղբայրն այդպէս չէր մտածում».— Ի՞նչ էր նա մտածում. «Նա մտածում էր հարստանալու մասին»; — Նա էլ զ-ի նման աշխատանքով. քրախնք թափելով էր ուզում ապրել և հարստանալ. «Ոչ նա աշխատանքով, քրտինք թափելով չէր ուզում հարստանալ».— ապա ինչպէս էր ուզում. «Նա սւզում էր ուրիշներին խաշ և զողանալով և թալանելով հարստանալ.— Զ-ի եղբայրը հասաւ իր նպատակին. «Այս, թէի նա իր նպատակին հասաւ, բայց շուտով դրանից գրկւեցաւ».— Ինչո՞ւ դրկւեցաւ. «Որովհնուի

նրա վրայ գանդատեցին, ոստիկանները նրան բռնեցին պատժեցին հարստութիւնն էլ առան տէրերին յետ դարձրին».— ուրեմն նորից տեսանք որ շարը վատը պատժի արժանի եղաւ. Ուրեմն զ-ի եղբայրը շուտով հարստաց շուտով էլ ինչ եղաւ. „Նա ինչպէս շուտով հարստակ շուտով էլ ինչ յարցաւ, այնպէս էլ շուտ գրկւեցաւ” — Դրա համար ինչ յարցաւ, այնպէս էլ շուտ գրկւեցաւ.— Դրա համար ինչ յարցաւ, այնպէս էլ շուտ գրկւեցաւ.

Քամու թերածը քամին կը տանի:

Գողծաղոթթիւն.

Սյս պատմութեան մէջ ձեզ ով լաւ օրինակ տւեց.

Ինչո՞ւ ջուրհակը կինը և որդիները.

Կան մարդիկ, որոնք չեն աշխատում.

Ո՞րպիսի մարդիկ չեն աշխատում.

Ելդպիսի մարդկանց ինչ են անում.

Ինչո՞ւ են պատժում.

Ինչ էր կարծում կենդանիներն էլ աշխատում են.

Ո՞վ կարող է մի օրինակ տսել.

Ուսուցիչները, ծնողները և բարեկամները ո՞րպիսի աշակերտներին են սիրում.

Դուք որպիսի ընկերներին էր սիրում.

Ապա լսեցէք, ծոյլ ճեպուի պատմութիւնը կարդամ.

Մեր պատմութեան յարմար ինչ հանելուկներ գիտէք.



ԱՂԻԵՍՆ ՈՒ ԱԳՈԱԼԸ

Այսօր պէտք է սովորենք. ի՞նչպէս աղւէսը կկովն խարսմ է, ագռավին բռնում է:

Ո՞վ կարող է կրկնել.

Աղւէսը մեզ ծանօթ է. որ պատմութեան մէջ տեսանք. «Եղբատն ու օձը պատմութեան մէջ տեսանք». — Այստեղ աղւէսն ինչ արեց. «Այստեղ աղւէսն աղքատի համար կապոցով ոսկի բերեց». Այս, այսօր մենք աղւէսի ուրիշ յատկութեան մասին կըսովորենք:

Լինում է շի լինում, մի կկռ է լինում. այդ կկռն անտառում մի բարձր ծառի վրայ բռն է շինում. այնտեղ նա երկու ձու է ածում, վրան թուխս նստում և երկու ձագ ունենում: Մայրը ձագերի համար որդեր, թըրթուրներ, մժեղներ էր բերում, կերակրում. Մայրը թները բացած արեկի տաքութիւնից նրանց հով էր անում, անձրնից պահում պաշտպանում էր. Մայրը ձագերի համար միշտ երգ էր երգում կու կու ասում, որ ձագերը ուրախանան. մի խօսքով, կկռն իր ձագերին շատ սիրում էր և նրանց տեսնելիս միշտ ուրախանում էր:

Այդ անտառում ապրում էր մի աղւէս. մի օր աղւէսը շատ քաղցած էր. զէս ու դէն ընկաւ, շատ ման եկաւ, ուտելու ոշինչ չտաւ, յանկալծ ծառի վրայ կկռին տեսաւ: Աղւէսը մի չար բան մտածեց. — ինչ մտածեց. «Նա մտածեց կկռին խարել». — Այս, նա մտածեց կկռին խարել. զրա համար մօտեցաւ ծառին և բարկացած ասաց — «Դու չփտես, որ այս անտառը ինձ է պատկանում, քեզ ո՞վ իրաւոնք տւեց այստեղ բռն շինել. զրա համար պէտք է վարձ տաս կամ բռնդես հեռանաս», կը կուն վախեցաւ և մոլորւեցաւ, — ինչու կկռն վախեցաւ և մոլորւեցաւ. «Կկռն վախեցաւ և մոլորւեցաւ որովհետեւ ձագերը փոքր էին» — էլ ինչու Ռուրէն. «որովհետեւ կկռն ձագերին չէր կարող բնից հեռացնել». — այդպէս է. — կը կուն աղւէսին ինչ պատասխանեց — «Նա աղւէսին պա-

տասխանեց — ձագերս փոքր են, այժմ չեմ կարող հեռանալ». — Այս, կկռն խնդրեց և ասաց. սիրելի աղւէս, ձագերս տես շատ փոքր են, մի փոքր համբերիր ձագերս մեծանան, այն ժամանակ կըհնուանանք», Քաղցած աղւէսն երբ ձագերի անուն լսեց, ուրախացաւ. — ինչու ուրախացաւ, «Նա ուրախացաւ, որովհետեւ մտածեց. թէ կարող է կկռին խարել, ձագերին ուտել»: — ճիշտ է. աղւէսը այդպէս էլ մտածեց. զրա համար ասաց. «որ այդպէս այդպէս է, ես քեզ խղճում եմ, կարող ես բունդ շքանդել, միայն իմ վարձի փոխարէն ձագերիդ մէկը վայր գցիր, որ թոյլ տամ այդտեղ ապրելու».

— Հաւատաց կկռն աղւէսի խօսքերին, «Այս, նա հաւատաց և ձագն աղւէսին տւեց»: — Այս, միամիտ կկռն աղւէսի խօսքերին հաւատաց և ինքն իրան մտածեց. եթէ այս մէկ ձագս տամ, գոնէ միւսին կազատեմ:

Ամփոփել և կրկնել — ի՞նչպէս աղւէսը կկռն խարեց: Աղւէսի բերանը համ առաւ, այս լաւ է, ասաց ինքն իրան, կարելի է այդ միամիտ կկռին խարել և միւս ձագին էլ ուտել. այսպէս ասաց ու միւս օրը զնաց ծառի մօտ և առաջաւայ նման ասաց. — ինչ ասաց. «Նա ասաց մի ձագդ էլ տուր, որ թողնեմ այդտեղ ապրելու, եթէ ոչ բունդ քանդիր հեռացիր»: — Համաձայնեց կկռն. «Ոչ այս անգամ նա չհամաձայնեց». — ինչու չհամաձայնեց. «Որովհետեւ մի ձագ էր» մնացել, եթէ նա էլ աղւէսին տար, իրան էլ չէր մնայ». — Այս, զրա համար կկռն աղւէսին աղաչեց և ասաց. «Միայն մի ձագ ունիմ էն էլ ինչպէս քեզ տամ, խնդրում եմ, թող այս մէկն էլ ինձ մնայ». — լսեց աղւէսը կկռի խնդիրը. «Ոչ նա չլսեց». Այս, աղւէսը ոչ միայն չըլսեց, այլ բարկացած ասաց, «Եթէ ձագդ չտաս, ծառը կըկտրեմ, բռնդ կըքանդեմ, ձագդ էլ կուտեմ»: — ի՞նչ արեց կկռն. «Կկռն շատ վախեցաւ»: — ճիշտ է կկռն շատ վախեցաւ և սրտի ցաւից կու կու կանչելով լալիս և ասում էր — «Ես ինչպէս իմ միակ ձագս տամ, ես ինչպէս կարող իմ առանց ձագի ապրել»: Այսպէս նա վայ վու

կանչելով թռաւ զնաց ազռաւի մօտ իր ցաւերն ասելու[—]՝ ինչու կկուն զնաց ազռաւի մօտ. «Կկուն զնաց ազռաւի մօտ որ իր ցաւերը պատմէ» — էլ ինչու. «որ նըանից օգնութիւն խնդրէ»: — Այս, նա շատ անդամ լսել էր, որ ազռաւները խելօք են, ազռաւները հնարադէտ են — զբա համար զնաց նրա մօտ, լալազին ձայնով խնդրեց և ասաց. — ինչ ասաց կկուն. «Կկուն ասաց, սիրելի ազռաւ օգնիր ինձ, աղէսի ձեռքից ազատիր». Ազռաւը զարմացած հարցըց — ինչ հարցըց. «Ազռաւը հարցըց, ի՞նչ կայ, աղէսը բեզ ի՞նչ է արել, որ նըանից ազատիմ»: — էլ ինչ ասաց — «Աստց պատմիր տեսնեմ». Կկուն պատմեց. — ի՞նչ պատմեց, «Նա ասաց ծառի վրայ բուն շինեցի, երկու ձու ածեցի, երկու ձագ ունեցայ». — յետոյ ինչ պատմեց. «յետոյ ասաց - աղէսոն եկաւ ասաց. «այս անտառը ինձ է պատկանում, այդ ծառի վրայ ինչու ես բուն շինել — կամ պէտք է բունդ բանդես հեռանաս, կամ ձագիդ մէկը ինձ պէտք է տաս. ես էլ միւս ձագիս ազատելու համար մէկը նրան տէի: Եյօր էլ աղէսը նորից եկել է և ասում է. միւս ձագդ էլ տուր, եթէ ոչ ծառը կըկտրեմ, բունդ կըրանդեմ և ձագիդ էլ կուտեմ»:

Ազռաւը զարմացաւ կկուի միամտութեան վրայ և ծիծաղելով ասաց. — ի՞նչ ասաց — «Նա ասաց աղէսը քեզ խարել է» — էլ ինչ ասաց. «Նա ասաց աղէսը ծառ չի կարող կտրել»: — Այս, ազռաւը կկուին այզպէսնանդստացրեց և ասաց. «Եթէ աղէսը մէկ էլ գայ, վրան բարկացիր, որ քեզ խարել է»:

Կկուն սիրտ առաւ, շնորհակալութիւն յայտնելով՝ թռաւ զնաց ձագի մօտ:

Քիչ յետոյ, աղէսը նորից եկաւ և բարկացած, առաջ ւայ նման ասաց. — ի՞նչ ասաց. «Նա ասաց կամ ձագդ տուր, կամ բունդ բանդիր հեռացիր»: — ի՞նչ պատասխանեց կկուն — «Կկուն ասաց. կորիր այստեղից անպիտան աղէս», — էլ ինչ ասաց — «Դու ինձ խարեցիր ձագիս առար, այցըմ էլ եկել ես միւսն ես ուզում տանել, էլ չես կարող

ինձ խարել»: Այգայէս է — աղէսը զարմացաւ, նա ուզեց կկուին վախեցնել և ասաց. «Եպասիր դու կկու, հիմայ կկուին վախեցնել և ասաց. «Եպասիր դու կկու, հիմայ ես ծառի կըկտրեմ, այն ժամանակ կըտեսնես թէ ըեկ ինչ կանհեմ». բայց անտառում որոտեղից կարող էր կացին կամ սղոց գտնել. աղէսը մտածեց և հնարը գտաւ: Նա ծառի մօտից հեռացաւ, բիշ յետոյ մի երկար վայտ ու սին զրած, մի ուրիշ աղէսոի հետ եկաւ ծառի մօտ և սին զրած, բարձր աղէսի բունը քանդինք, ձագն էլ աւագէտք է կարենք, որ կկուի բունը քանդինք, ձագն էլ աւագէտք է կարենք, որ կկուի բունը քանդինք, ձագն էլ աւագէտք է կարենք. նրանք իրանց բերած վայտը ծառի վրայ դրին նենք. նրանք իրանց բերած վայտը ծառի վրայ դրին նենք. կկուն այս բոլոըը տեսաւ և լսեց. — ի՞նչ արեց կկուն. «Կկուն շատ վախեցաւ», — Այս, նա շատ վախեցաւ, նորից թռաւ զնաց ազռաւի մօտ և ասաց. — ի՞նչ ասաց. «Նա թռաւ զնացնեցաւ, կկուի սիրելի զրացի, օգնիր ինձ աղէսը ծառը կտրում է»: — Հաւատաց ազռաւը — «Ո՞չ, ազռաւը չհաւատաց», — ճիշտ է ազռաւը չհաւատաց և որչափ ուզեց կկուին հանգստացնել որ աղէս, ասածներին՝ չհաւատայ, չկարողացաւ համոզել: Կկուն ազռաւին շատ խնդրեց, ազաշեց, որ ազռաւը օգնէ, աղէսից ազատէ, Վերջապէս ազռաւն ասաց. որպէս կաւատաս, որ աղէսը խարում է, եկ միւսին զնանք և ես այդ բանը քեզ ցոյց կտամ: Նրանք սին զնանք ու այդ բանը քեզ ցոյց կտամ: Երբ ազռաւն աղէսի խորամանկութիւնը տեղացին, Երբ ազռաւն աղէսի խորամանկութիւնը տեղացին, Երբ աղէսը ծիծաղելով ասաց. «Դրացի կկու, շասեցի թէ աղէսը խարում է. տես՝ նրանք վայտով են ուզում ծառը կտրել, միթէ կարելի է վայտով ծառ կտրել: Մի հաւակտրել, միթէ կարելի է վայտով ծառ կտրել:

Սղէսը երբ տեսաւ, որ ազռաւը կկուին ամեն ինչ հասկացրել է, սաստիկ բարկացած ազռաւին ասաց — ի՞նչ ապահարել է, սաստիկ բարկացած ազռաւ, և քեզ կըպատժիմ».

ասաց. «Նա ասաց սպասիր ազռաւ, և քեզ կըպատժիմ».

Այս այզպէս ասաց և ծառի մօտից հեռացաւ:

Ամփոփել և կըկնել. ինչպէս ազռաւը կկուին օգնեց.

Աղէսը մորութշ դուց ազռաւին րոնել և ուտել. զրա

Համար տմին օր նրա յիտելից ծածուկ հետևում էր. որ էլ արտի միջ ազաւին բռնեց և ասաց. — ի՞նչ ասաց շաաց. դու շթողեցիր, որ ես կկուի ձագին ուտէի, այժմ քեզ բռնել եմ տես թէ ինչ կանեմա. Ազուալը տեսաւ, որ բանը վատ է, աղւէսն իրան պէտք է ուտէ. նա էլի փորձեց մի հնար գտնել, աղւէսի ձեռքից ազաւելք նա ազաշելով ասաց. «Աղւէս, գիտեմ որ ինձ պէտք է ուտես, բան շունեմ ասելու. միայն մի խնդիր ունիմ, կատարիր խնդիրս, յետոյ ինչ ուզում ես արա, քո հայրն էլ իմ հօրը կերաւ, ասաց ազուալը, միայն նա ուտելուց առաջ հօրս շարչարեց. ես քեզանից խնդրում եմ, որ դու ինձ այդպէս շանես. այլ միանդամից ուտես: Աղւէսը երբ այս լսեց, մտածեց ինքն էլ հօր նման անել, միայն նա շգիտէր թէ հայրն ի՞նչպէս էր արել. — Աղւէսը ումնից կարող էր այդ բանն իմանալ. «Աղւէսն այդ բանը ազուալից կարող էր իմանալ». — Այս, զրա համար էլ հարցրեց. — ի՞նչ հարցրեց. «Նա հարցրեց, իմ հայրը քո հօրն ի՞նչ արեց». «Բո հայրը բարձրացաւ այդ բարձր ժայռի զլուխը, ասաց ազուալը և այնտեղից իմ հօրը քարերի վրայ ներքե զլուխը. շարչարեց՝ յետոյ կերաւ: Աղւէսը հաւանեց հօր խելքին, ազուալին բերանն առած, բարձրացաւ մօտիկ ժայռի զլուխը և այնտեղից ազուալին ներքե շը ես չայկ, ազուալը քարերի վրայ շընկաւ. «Ազուալը թռաւ աղաւեց»: Այս, Ռուբէնը ճիշտ ասաց. երբ աղւէսը ազուալին ներքե շպրտեց վայր շընկնելու համար, ազուալը թերբը թափահարելով բաց արեց և ուրախ ուրախ թռաւ,

Բայց զիտէք մի ուրիշ բան էլ աղւէսին պատահեց. — ի՞նչ պատահեց. — Այդ շիմացաք. երբ ազուալը թերբը թափահարելով թռաւ, աղւէսը շփոթեց, նա վեր թռաւ և ոտքը սայթակեց. — ուրեմն ի՞նչ եղաւ աղւէսը. «Աղւէսը ժայռից վայր շնկաւ. — Այս, նա թերմբալով քարերի վրայ ներքե զլուխը, զարդ ու փշուր եղաւ. այսպէս աղւէսն

ինքն իրան պատժեց:

Ամփափիել և կրկնել, ի՞նչպէս աղւէսն ինքն իրան պատժեց:

Եյժմ խաղալ. — մէկը կկու, մէկն աղւէս. մէկն ապուաւ, մէկը պատմող և այլն:

Խորասուզում.

— Աղւէսը շատ ման եկու և ուտեօւ ոչինչ չգտաւ. — Երբ նա զկուին ծառի վրայ տեսաւ, ի՞նչ ուզեց անել. «Երբ նա կկուին ծառի վրայ տեսաւ, ուզեց նրան խարել». ի՞նչ խօսքերով ուզեց խարել. «Նա ասաց, չգիտեմ, որ այս անտառն ինձ է պատկանում, ինչու առանց հարցելու այդ ծառի վրայ բուն ես շինել. կամ վարձ պէտք է տաս, կամ պէտք է բունդ քանդես հեռանաս. — Երբ աղւէսն իմացաւ, որ կկուն ձագեր ունի, ի՞նչ ասաց. «Երբ իմացաւ որ կկուն ձագեր ունի՝ ասաց. որ այդպէս է, ես բեզ խղճում եմ, միայն իմ վարձի համար ձագերից մէկը տուք: որ թսդնեմ այդտեղ ապրելու. — Հաւատաց կկուն աղւէսին. «Այս, նա հաւատաց և միւս ձագին ազաւելու համար այդ մէկը տւեց». — Դրանով աղւէսը կկուին ի՞նչ արեց. «Աղւէսը կկուին խարեց». — Լաւ արեց աղւէսը. «Ոչ, աղւէսը լաւ շարեց, նա վատ բան կատարեց». — ի՞նչու վատ բան արեց. «որովհետեւ նա կկուին խարեց ձագին առաւ». — Դրանով աղւէսը կկուին ի՞նչ արեց. «Դրանով աղւէսը կկուին շատ տխրեցրեց». — Հասկացաւ կկուն աղւէսի խորամանկութիւնը, որ երկրորդ ձագը շաւեց. «Ոչ, նա այդ շնչակացաւ». — ապա ի՞նչպէս եղաւ, որ ձագը շտւեց. «Չտւեց նրա համար, որովհետեւ մի ձագն էր մասցել, իսկ զրանից չէր ուզում զրկել». — ի՞նչպէս ազաւեց կկուն ձագին. «Երբ տեսաւ, որ աղւէսը իր խնդիրը չի կատարում, թռաւ զնաց հարեան ազուալի մօտ և նրանից զնութիւն խնդրեց». — ի՞նչու աղուալի մօտ զնաց ... «Ռովհնեաւ շատ անդամ լսել էր, որ ազուալները իսելօք են», — Ազուալը ինչու կկուին օզնեց, ապա Ծրամ առա. «Նա ասաց աղւէսը ծտա չի կարող կարել». — դաւ էլ տառ Ծր-

մին. «Նա ասաց ազւէսը քեզ խարել է, էլ մի հաւատար».— էլ ինչ ասաց. «Նա ասաց, երբ ազւէսն միւս անդամ գայ՝ բարկացիք և ասա. կորիք այստեղից անպիտան աղւէս և այլն. — երբ ազւէսը նորից եկաւ. կլուն ի՞նչ արեց. «Երբ ազւէսը նորից եկաւ, կուն այնպէս արեց, ինչպէս ազուան ասել էր».— Սւրեմն կուն ի՞նչ ասաց ազւէսին, ով կարող է մի անդամ էլ կրկնել. «Կուն ասաց. զու ինձ խարեցիք, ձագիս առարար, զու ծառ չես կարող կտրել, կորիք, այստեղից հեռացիք, անպիտան ազւէս»: — Հեռացաւ ազւէսը. «Ո՛չ, նա չհեռացաւ».— Ապա ի՞նչ արեց. «Նա ուզեց կուն նորից խարել».— Քրա համար ազւէսն ի՞նչ արեց. «Քրա համար նա մի երկար փայտ ուսին դրած, մի ուրիշ ազւէսի հետ եկաւ ծառի մօտ և բարձր ձայնով ասաց. «Այս, այս ծառը պէտք է կտրենք, որ կուի բունքը քանդենք և ձագին ուտենք».— Էլ ինչ արեց ազւէսը. «Նրանք երկուսով բերած փայտը սղոցի նման ծառին քսեցին, որպէս թէ կտրում են».— Երբ այս ամենը կուն տեսաւ և լսեց ի՞նչ արեց. «Երբ այդ ամենը կուն տեսաւ և լսեց, սաստիկ փախեցաւ».— Քրա համար նա ի՞նչ արեց. «Նա նորից թռաւ ազուաւի մօտ և օգնութիւն խնդրեց».— ի՞նչ ասեց ազուաւը նրան. «Ազուաւը նրան ասաց, մի վախենար, զրացի, ազւէսը ծառ չի կարող կտրել».— Էլ ի՞նչ ասաց. «Դնա քեզ համար հանգիստ նստիթ, թող ազւէսը չարշարի չարշարի գնայ».— կուն ազուաւի ասածի պէս արեց. «Ոչ, նա այդպէս չարեց, նա ազուաւին այնշափ խնդրեց, որ տգուաւը նրա հետ գնաց, ազւէսի խորամանկութիւնը ցոյց տւեց և կուն հանգստացրեց. — Ազւէսն ի՞նչ արեց. «Ազւէսը ազուաւի վրայ սաստիկ բարկացաւ».— Ինչու բարկացաւ. «Որովհետեւ ազուաւը իր խորամանկութիւնը կուն հասկացրեց և շթողեց, որ կուն միւս ձագն էլ տայ».— Ուժ արածին հաւանեցիք, «Ազուաւի արածին հաւանեցինք».— ինչու ազուաւի արածին հաւանեցիք. «Որովհետեւ ազուաւը կուն ձագին ազուաւեց, կուն էլ հանգստացրեց»: — Ազւէսին ին-

շու շհաւանեցիք. «Աղւէսին շհաւանեցիք, որովհետև նա կիուին ուզեց խարել, և ձագը խլել», — Աղւէսն ագռաւին ի՞նչ արեց. «Աղւէսն ագռաւի յետևից այնչափ ժամանակ ծածուկ ման եկաւ, մինչև որ նրան բռնեց և ուզեց պատմել»: — Հասաւ աղւէսն իր նպատակին շհասաւ. «Ոչ, նա շհասաւ»: — Ինչու աղւէսն իր նպատակին շհասաւ. «Որովհետև ագռաւը նրա ձեռքից ազատւեց»: — Ագռաւն ի՞նչպէս ազատւեց. «Երբ աղւէսն ագռաւին ժայռի դլխից ներքև շպըստեց, ագռաւը թևերը թափահարելով թռաւ. աղւէսը զրանից շփոթւեց, նրա ոտքը սալիժակեց և թրմբալով քարերի վրայ ներքե վլորեց»: Արժանի՛ էր աղւէսն այդ պատմին. «Եյ՛, աղւէսն այդ պատմին արժանի էր»: — Եպատմին. «Այ՛, աղւէսն առաջին անգամ կկուին պատմին արժանի էր. «Աղւէսն առաջին անգամ կկուին խարեց, ձագը խլեց և նրան շատ տխրեցըեց»: — յետնկ. յարեց, ձագը խլեց և նրան շատ տխրեցըեց»: — յետնկ. յարեց, ձագը խլեց և միւս ձագին էլ ուտեոյ ուզեց կկուին նորից խարել և միւս ձագին էլ ուտել»: — Ամեն անգամ աղւէսն ի՞նչպիսի գործ կատարեց. «Ամեն անգամ աղւէսն վատ-չար գործ կատարեց»: Այ՛, այսպէս մենք էլի տհանք, որ չար և վատ գործ կատարողը պատմի արժանի եղաւ:

Մենք իմացանք, որ ազւէսն առաջին անգամ մտած ծեց, հնար գտաւ և կկուին խարելով, ձաղին կերպաւ, երկրորդ անգամ ուրիշ միջոց գտաւ և կկուին վախեցրեց, թէ ծառը կտրում է, երբորդ անգամ էլ կարողացաւ ագռաւին բռնել, որ նըան ուտէ: Ուրեմն տեսանք, որ ազւէսը գանգան միջոցներ գտնելով՝ կարողացաւ իր նպատակին հասնել: Եյս ամենից յետոյ մենք ազւէսին ո՞րպիսի կենդանի կարող ենք ասել: «Այդ բոլորից յետոյ մենք կարող ենք ասել, որ ազւէսը մտածող կենդանի է»: — Էլ ինչ կարող ենք ասել Արշակ, «Մենք կարող ենք ասել, որ ազւէսը հնարագէտ է»: — Էլ ինչ — «Ազւէսը խորամանկ է»: — Եյն, ազւէսը խելօք և խորամանկ կենդանի է: — Խորամանկ ազւէսն ի՞նչ եղաւ: «Խորամանկ ազւէսը պատժւեց»:

— Դրա համար ի՞նչ յարմար առակներ գիտէք:

- 1) Ուրիշն հոր փորողն ինքը մէջը կընկնի
- 2) Խորամանկ աղէսն երկու ստքով թակարդ կընկնի
- 3) Դայլի անունն է դուքս եկել, աղէսն աշխարհը քանդեց.

4) Երեսից հայելի տակից ածելի:

— Մեր սովորած պատմութիւնների մէջ, էլ ով ուրիշի համար հոր փորեց և ինքը մէջն ընկաւ «Թոշնատուրի մէջ շար աղախինը ուզեց թոշնատուրին սպանել, բայց ինքը խեղդւեց». ճիշտ է, Ազռաւը կկուին հասկացրեց աղէսի խորամանկութիւնը, ագռաւը հնար կտաւ աղէսի ձեռքից ազատւեց, և աղէսին էլ պատճեց—ուրեմն ագռաւն հրպիսի թոշուն է: «Ազռաւը խելօք, և հնարագէտ թոշուն է».— Այս, դրա համար էլ ասում են. Աշխարհը խելքով են կերել:

— Մեր սովորած պատմութիւնների մէջ էլ ով այդպէս խելքով գործ կատարեց, «Զանկլօ Պանկլօ ուլիկների պատմութեան մէջ այծն այդպէս արեց»—ի՞նչ արեց նա. «Նա սէր ու մածուն զարբնին ընծայ տարաւ, պոզերը դանակի նման լաւ սըել տւեց, չար գալին պատճեց և ձագերին ազատւեց,

Մեր պատմութեան յարմար ի՞նչ առածներ գիտէք.

Ամեն բանի վերջն է զովելի:

Բանն արա, յետոյ պարծեցիք:

Գործադրութիւն:

Այս պատմութեան մէջ ում կուզէք նմանիլ.

Ինչու ուզում էք ագռաւին նմանիլ.

Ի՞նչ օգուտ տւեց ագռաւը.

Ի՞նչ պէտք է անէք, որ ագռաւին կարողանաք նըմանիլ.

Ինչու չէք ուզում աղէսին նմանիլ.

Միրում էք այն աշակերտին, որ իր ընկերին չի օգուտ, ուրիշներին վնասում է, չարշարում է.

Տեղանից ով է ուրիշներին օգնել.

Ապա Միսակ պատմիր, դու ի՞նչ ես արել, զու էլ պատմիր Զաւէն և այլն:

Ո՞վ կարող է մեր պատմութեան յարմար հանելուկներ տանել.

Ճիշտ է որ ասում են. Մաւդ կայ արժէ հազար մարդ, կայ հազար մարդ՝ շարժէ մէկ մարդ:

Ապա լսեցէք, ես ձեզ կարգամ հնարագէտ ագռաւի մասին մի փոքրիկ պատմութիւն:



ԱՂՔԱՏՆ ՈՒ ՕՉԸ

Այսօր պէտք է սովորենք. ինչպէս աղքատը օժին, աղէսին եւ թագաւորի գանձապահին ազատեց.

Ո՞վ կարող է կրկնել...

Լինում է չի լինում մի ծեր մարդ և լինում. այդ մարդն այնշափ թուլացել էր, որ չէր կարող կանոնաւոր աշխատել և իր կնոջն ու որդիներին կերակրել. նա անտառ էր գնում և օրական հազիւ հազ մի բեռ ցախ էր բերում. նա ցախը ծախում էր և շատ զժւարութեամբ միայն չոր հացի փող էր աշխատում. երբ վատ եղանակ էր լինում, նա չէր կարող տանից գուրս զալ և այդպիսի օրերում, որդիները բազցած էին մնում. մի խօսքով ծերը շատ պղատ էր. Մի օր այդ աղքատը փողոցով անցնելիս տեսաւ, որ մի խումբ մանուկներ վայտերը ձեռքերին մի ինչ որ փաքչիկ կենդանու հիտ խաղում էին և դէս ու դէս էին վազվում:

— Մանուկներն ինչ կենդանու հիտ էին խաղում. «Մանուկները խաղում էին օձի հետ»: — Այս, մանուկները վայտերով օձին այս ու այն կողմն էին քաշըշում, վերև էին ձգում և ուրախանում էին. օձն էլ լեզուն դուրս ձըգած աղաչում, խնդրում էր, որ իրան բաց թողնեն, չարշարելուց աղատեն. Մանուկներն այս բանը չէին հասկանում և իրանց գլաշճութիւնը շարունակում էին: Աղքատը խղճաց օձի վրայ, մօտեցաւ մանուկներին և խնդրելով ասաց. — Ի՞նչ ասաց. «Նա ասաց, սիրելի մանուկներ օձը մեղք է, մի շարշարէք». — Էլ ինչ ասաց. «Նա ասաց բաց թողէք օձին». — Այս, աղքատը նոյնպէս ասաց — օձը թէն չի կարող խօսել, իր ցաւերն ասել, բայց նա մեղք է. ո՞վ է իմանում, գուցէ հիմա դրա ձագերը անտէր և անօգնական իրանց մօրն են սպասում, բաց թողէք սիրելի մանուկներ, բաց թողէք — լսեցին մանուկները աղքատին. Այս, նրանք լսեցին. ճիշտ է մանուկները լսեցին և հեռացան: Աղքատը օձին տարաւ մի կողմ և աղպատ բաց թողից

Մէկ անդամ աղքատը դաշտից տուն էր վերադառնում. մէկ էլ յանկարծ խոր փոսից մի կենդանու խղճալի ձայն լսեց. աղքատը հետաքրքրւեց, մօտեցաւ փոսին և ում տեսաւ «Աղքատը տեսաւ մի աղէսի»: — Եյ՛, նա այնտեղ տեսաւ մի աղէս. նա չարշարում, վեր վէր էր թռչկոտում, բայց փոսից չէր կարող դուրս գալ. աղքատը սրա վրայ էլ խղճաց և ինչ արեց «Աղքատն աղէսին փոսից զուրս բերեց, աղատեց»: ճիշտ է, նա այդպէս էլ արեց: Մի երեկոյ, աղքատն անտառից ցախ էր բերում. նա շտապում էր տուն հաօնել, որովհետեւ տանը վառելու փայտ չկար, կին ու որդիներն իրան էին սպասում: Մէկ էլ յանկարծ ծառերի միջից մի մարդու ձայն լսեց «օգնեցէք, օգնեցէք, զայլն ինձ պատառեց» ինչ արեց աղքատը — «Աղքատն իր կացինն առած գնաց օգնելու»: — Այս, նա գնաց օգնեց և մարդուն աղատեց: Ո՞վ էր այդ մարդը. «Այդ մարդը թագաւորի գանձապահն էր». Եյ՛, երբ գանձապահն աղքատի խեղճ զբութիւնն իմացաւ, խոստացաւ նրան օգնել, աղքատութիւնից աղատել:

Ամփոփել և կրկնել - ի՞նչպէս աղքատը օժին, աղէսին եւ թագաւորի գանձապահին աղատեց:

Այդ երեկոյեան աղքատի որդիները հօրն էին սպասում. մէկ էլ զուռը բացւեց, մի կենդանի բերանում մեծ կապոց բռնած՝ ներս մտաւ: Մանուկները կարծեցին թէ զայլ է, վախեցան և մօր հետ դուրս վախան: Կենդանին էլ բերանի կապոցն այնտեղ թնդեց, ինքն էլ ծածուկ հեռացաւ. — Ի՞նչ կենդանի էր այնտեղ ներս մտնողը «Այնտեղ ներս մտնողը զայլ էր» Ո՞չ, մանուկները մթութեան մէջ լաւ չէին տեսել, ներս մտնողը զայլ չէր ապա ինչ կենդանի էր — «Այնտեղ ներս մտնողն աղէս էր» — ճիշտ է Սրամ, այնտեղներս մտնողն աղէս էր. — Ո՞ր աղէսն էր. — Այս, Գատեղներս մտնողն աղէս էր. — Այս աղքատներս մտնողն աղքատի աղատած աղպիկն էլ զտաւ, այնտեղներս մտնողն աղքատի աղատած աղպիկն էր: Գիտէք, նա կապոցն աղքատի համար էր բերել էսն էր: Գիտէք, նա կապոցն աղքատի համար էր բերել Մի քիշ յետոյ աղքատն էլ եկաւ, նա իր կնոջն ու որդին էր լսեցին որպես տեսաւ. «Նա իր որդիներին և կնոջը տան ներին որպես տեսաւ»:

դռանը կանգնած տեսաւ». Այս, նա ամեն ինչ իմացաւ, ներս մտաւ, շուտ ման եկաւ և ոչ մի կենդանի շգմաւ—բայց նա մի բան գտաւ.—ինչ գտաւ. «Նա աղէսի բերած կապոցը գտաւ»—այդպէս է: Նա շուտ շուտ կապոցը բացեց և զարմացած կանգնեց—կինն էլ ուրախութիւնից չգիտէր թէ ինչ անէ. — ի՞նչ տեսան նրանք, որ այդպէս զարմացան. «Նրանք այստեղ փող տեսան».—Այս, կապոցի մէջ մեծ մեծ թանկագին ոսկիներ տեսան դրա համար նրանք շատ ուրախացան:

— Հասկացաւ աղքատը թէ ով էր բերել այդ հարստութիւնը. «Այս, նա հասկացաւ, որ իր աղատած աղէսն է բերել այդ հարստութիւնը».— ճիշտ է, զրա համար է նա ինքն իրան ասաց «Ճշմարիտ է, որ ասում են՝ արած լաւութիւնը չի կորչի!»

Ամփոփել և կրկնել. ի՞նչպէս աղքատը հարստացաւ.

Աղքատն այժմ հարստած էր.— նա ինչ պէտք է անէր. «Նա պէտք է իր տան բոլոր կարիքները հոգար և կարզի բերէր».— Այս, նա էլ այդպէս մտածեց. բայց ամենից առաջ մի ոսկի վեր առաւ, գնայ որ կերակուր բերէ. զիտէր խանութներում այդ ոսկին ոչ ոք շմանրացրեց նրանք այդպիսի ոսկի չէին տեսել: — Ով կարող էր աղքատի ոսկին մանրացնել— «Աղքատի ոսկին թագաւորի գանձապահնը կարող էր մանրացնել».— ճիշտ է, զրա համար էլ նա զնաց թագաւորի գանձապահի մօտ: Դանձապահը երբ աղքատի ոսկին տեսաւ, զարմացաւ և հարցրեց— ո՞րտեղից քեզ այս ոսկին, թագաւորի գանձարանումն էլ այսպիսի թանկագին ոսկի չկայ, շուտ ասա՛, ո՞րտեղից ես վերցրել: — ի՞նչ պատասխանեց աղքատը. «Աղքատն ասաց աղէսն է բերել».— Այս. թէև աղքատն այդպէս ասաց. բայց գանձապահը նրան չհաւատաց. ինչպէս կարող է աղէսը ոսկի բերել ասաց նա և բարկացու աղքատի վրայ, հրամայեց, որ ամեն ինչ ուղիղ պատմէ. եթէ ոչ կըպատմէ: Աղքատը խնդրեց. աղաչեց: որ իրան չպատմէ, ինքը սուտ չի ասում, բայց գանձապահը նրան չսեց և թագաւորի

հրամանով ոսկին առաւ աղքատին էլ բանդարկեց:

Ամփոփել և կրկնել— ի՞նչպէս գանձապահն աղքատին քանդարկեց:

Օձն իմացաւ, որ թագաւորն իրան աղատող աղքատին բանդարկել է նա ուզեց աղքատին օգնել և բանդից աղատել: — Ի՞նչով օձն օգնեց աղքատին.— Ո՞չ, ձեր ասածներից ոչ մէկն էլ չէ. նա զիշերով սողալով գնաց թագաւորի ննջարանը, բարձրացաւ օրօրոցը և քնած մանկան վիզը փաթաթւեց ու սեղմեց: — ի՞նչ արեց մանուկը. «Մանուկը լաց նղաւ».— այո. — մանկան ձայնը ում արթնացընց «Մանկան ձայնը հօրն ու մօրն արթնացընց».— ճիշտ է. — Ո՞վ մօտեցաւ մանկան օրօրոցին. «Մանկան օրօրոցին մօտեցաւ մայրը». ինչու մայրը մօտեցաւ. «Նա մօտեցաւ, որ մանկանը ծիծ տայ և ձայնը կտրէ».— ճիշտ է, նա մօտեցաւ օրօրոցին, բայց յանկարծ սարսափած զուալով յետ փախաւ. ինչու նա յետ փախաւ. «Նա յետ փախաւ որովհետեւ երեխի զին փաթաթւած օձին տեսաւ».— թագաւորն էլ երբ օձին տեսաւ՝ նա էլ սարսափեց: նրանցից մէկը հէնց որ օրօրոցին էր մօտենում, օձը ֆշշալով ուզում էր մանկանը կծել, իսկ երբ հեռանում էր չէր կծում: Մանուկը բարձր և խղճալի ձայնով լալիս էր: — Ո՞վ եկաւ թագաւորին օգնութեան. «Թագաւորի պալատում գտնւած մարդիկ եկան օգնութեան».— Այս, բոլորն էլ եկան— կարողացան մանկանն աղատել. «Ոչ ոք չկարողացաւ մանկանն աղատել»:

— Վերջապէս թագաւորն ասաց. «Կանչէր բոլոր բազացիներին, թող նրանք դան փորձեն, զուցէ որդուսկեանքն աղատեն». Ամենքն եկան— կարողացան թագաւորի մանկանն օգնել: «Ոչ նրանք չկարողացան օգնել»: «Կանչեցէր բոլոր բանդարկեալներին, ասաց թագաւորը, թող ամենքն էլ փորձեն». բոլոր բանդարկեալներն եկան— ով կարողացաւ օգնել. «Աղքատը կարողացաւ օգնել»: — Այս, հէնց որ աղքատը մօտեցաւ մանկան օրօրոցին, մանուկը ձայնը կտրեց: — ի՞նչ պատահեց, որ մանուկը կտրեց:

ձտյնը կտղեց. «Որովհետեւ օձն աղքատին ճանաշեց և մանկան վիզն էլ չսեղմեց».—ճիշտ է, օձը մանկան վիզը բաց թողեց և սողալով գնաց աղքատի ոտների մօտ կըծկւած նստեց. Երբ այս ամենը տեսան, ի՞նչ—ասացին ներկայ գտնւողները. «Ներկայ գտնւողները բոլորը զարմացան»—ինչու զարմացան. —«Նրան զարմացան որովհետեւ ասում էին, ի՞նչ կայ, որ օձն աղքատին այդպէս սիրում է»։ Դրա համար նրանից ի՞նչ էին ուզում իմանալ. «Նրանք ուզում էին զրա պատճառն իմանալ»։ Այս, թագաւորն էլ ուզեց այդ բանն իմանալ, գրա համար դառնալով աղքատին, հարցընց. —ի՞նչ հարցընց. «Նա հարցընց. ի՞նչու օձն քեզ այդշափ սիրում է. պատմիր տեսնենք»։ —Այս, նա ասաց զու որդուս կիանքն տղատեցիր, պատմիր տեսնենք ի՞նչու օձը քեզ այդշափ սիրում է։ Աղքատը պատմեց. —ի՞նչ պատմեց—«Նա պատմեց որ ի՞նքը աղւէսին, օձին և թագաւորի գանձապահին աղատել է»—յետոյ ում մասին պատմեց, Արշակ. «Յետոյ պատմեց աղւէսի մասին»։ —Աղւէսի մասին ի՞նչ պատմեց. «Նա պատմեց, որ աղւէսն իրան կապոցով ոսկի բերեց, որովհետեւ խանութներում շաբողացան մանբացնել, զրա համար տարաւ թագաւորի գանձապահին. գանձապահը շմանրացը և չհաւատաց, թէ այդ ոսկին աղւէսիցն է ստացել, զրա համար իրան պատժել տւեց»։ Այս, յետոյ աղքատը դարձաւ թագաւորին և ասաց. թագաւոր, եթէ այս բարի օձը չլինէր և ինձ օգնութեան չհամնէր, ով գիտէ, որշափ ժամանակ պէտք է անմեղ տեղը բանդում շարշարէի։ Ամենքն էլ զարմացան, նրանք զովեցին աղւէսին, օձին և աղքատին։ —Նրանք թագաւորի գանձապահին էլ գովեցին. «Ոչ, նրանք թագաւորի գանձապահին չգովեցին»։ —Սպա ի՞նչ արին նրան. —«Ամենքն էլ նրա վրայ բարկացան և շարացան»։ —ի՞նչու այդպէս արին. «Որովհնտեւ նա աղքատի լաւութիւնը մոռացաւ և նրան իզուր տեղը պատժել տւեց»։ Այս, զրա համար թագաւորն էլ բարկացաւ նրա վրայ և ասաց. «Աղւէսը, օձը իրանց լաւութիւն ա-

նող աղքատին շմոռացան և նրա երախտիքի տակից զուրս եկան. զու նրանցից վատ ես. զու քո տւած խօսքը մոռացար և աղքատին իզուր տեղը պատժել տւիր և որովհնտեւ զու այդ աստիճան անպիտան մարդ ես. զու պատժի ես արժանի, իսկ աղքատը վարձատըութեան։ —Հաւանեցին մարզիկ թագաւորի վճուին. «Այս, ամենքն էլ թագաւորի վճուին հաւանեցին».

Աղքատն ազատեցաւ, մեծ վարձատըութիւն ստացաւ և ուրախ ուրախ տուն վերադարձաւ.

Ամփոփել ե կրկնել. ի՞նչպէս աղքատը բանդից ազատեց:

Այժմ խաղալ. մէկն աղքատ, մէկն աղւէս, մէկն օձ, մէկը թագաւոր, մէկն էլ պատմող, յորդասուզումն։

Ի՞նչու աղքատն օձին աղատեց. «Որովհնտեւ նա տեսաւ, որ երեխաները նրան շարչարում էին և նա կարող էր վնասւել՝ աղքատը խղճաց, զրա համաց աղատեց»։

—ի՞նչ կըլինէր օձին, եթէ աղքատը նրան շազատէր. «Եթէ աղքատը շազատէր, զուցէ մանուկները նրան սպանէին»։ Էլ ում աղատեց աղքատը. «Աղքատն աղատեց աղւէսին» ի՞նչու աղատեց. «Որովհնտեւ նա փոսի մէջ շարչարում էր, աղքատը նրա վրայ էլ խղճաց և աղատեց»։

—Եթէ աղքատը շազատէր ի՞նչ կըլինէր աղւէսին. «Եթէ աղքատը նրան շազատէր, աղւէսը փոսից չէր կարող զուրս զալ և քաղցածութիւնից կըմեռնէր»։ Էլ ում աղատեց աղքատը. «Աղքատն աղատեց թագաւորի գանձապահին»—ում ձեռքից նրան աղատեց. «Աղքատը գանձապահին դայլի ձեռքից աղատեց»։ Եթէ աղքատը գանձապահին շազատէր, ի՞նչ կըլինէր «Եթէ աղքատը շազատէր, գայլը գանձապահին պատառ պատառ կանէր».

—Հաւանեցիք աղքատի արածներին. «Այս, մենք հաւանեցինք աղքատի արածներին»։ —ի՞նչու հաւանեցիք աղքատի արածներին, «Որովհնտեւ նա աղատեց օձին, աղւէսին և թագաւորի գանձապահին»։ ի՞նչպիսի դործ

կատարեց աղքատը. «Աղքատը լաւ գործ կատարեց» — էլ. «Աղքատը օգտակար գործ կատարեց, բարի գործ կատարեց»: — Եյդպիսի օգտակար բարի գործ կատարողին ինչ ենք ասում. «Եյդպիսի օգտակար բարի գործ կատարողին ասում ենք լաւ մարդ — բարի մարդ»: — Մեր պատմութեան մէջ էլ ով լաւ գործ կատարեց. «Մեր պատմութեան մէջ աղէսն էլ լաւ գործ կատարեց». — ի՞նչո՞ւ. «Որովհետեւ նա աղքատի արած լաւութիւնը շմոռացաւ, նրա համար ոսկի բերեց և լաւութեան տակից դուրս եկաւ»: — ի՞նչ են ասում նրանց, որոնք իրանց արած լաւութիւնը չեն մոռանում. «Եյդպիսիներին ասում ենք լաւութիւնը շմոռացող»: Այո, լաւութիւնը շմոռացող, կամ երախտագէտ. ուրեմն ով երախտագէտ էր. «Օգէսն երախտագէտ էր»:

Այս պատմութեան մէջ էլ ով երախտագէտ էր. «Այս պատմութեան մէջ օձն էլ երախտագէտ էր». — ի՞նչո՞ւ օձն երախտագէտ էր. «Որովհետեւ նա էլ աղքատի արած լաւութիւնը շմոռացաւ, աղքատին բանդից ազատեց և հարստութեան տէր դաշճրեց»:

Ուրեմն լաւ բան է երախտագէտ լինելը: «Այո, երախտագէտ լինելը լաւ բան է», — ի՞նչո՞ւ լաւ բան է. «Որովհետեւ երախտագէտ մարդը լաւ օգտակար գործ է կատարում»: ճիշտ է.

Մեր սովորած պատմութիւնների մէջ էլ ով երախտագէտ էր. «Մեր սովորած պատմութիւնների մէջ Պախրատուրը երախտագէտ էր. — ի՞նչո՞վ նա ցոյց տւեց իր երախտագիտութիւնը. նա մօրը ազատեց թշնամիների ձեռքից, թագաւորին էլ օգնեց. երկիրը կառավարեց և գըանով էլ երախտագէտ եղաւ. Թագաւորի գանձապահն էլ երախտագէտ էր. «Ոչ, նա երախտագէտ չէր»: — Ապա ի՞նչ էր. «Նա երախտիքը մոռացաւ»: — Այո, նա երախտամոռ եղաւ, — Լաւ գործ կատարեց այդ երախտամոռ մարդը. «Ո՛չ, այդ երախտամոռ մարդը վատ գործ կատարեց». Այո, նա վատ, վնասակար գործ կատարեց. — ի՞նչո՞ւ վնասակար գործ կատարեց. «Որովհետեւ իրան կեանըն ազա-

տող աղքատին ոչ միայն չօկնեց, այլև պատժել տւեց»: Մեր սովորած պատմութիւնների մէջ էլ ով երախտամոռ եղաւ. «Մեր սովորած պատմութիւնների մէջ Աղախինը երախտամոռ եղաւ». — ի՞նչ վնասակար բան արեց նա. «Նա իր տիրոջ լաւութեան տեղ, նրա սիրած թռչնատուրին ուզեց մեռցնել, բայց ինքը պատժեց». Այո, գանձապահը երախտամոռ եղաւ, վատ գործ կատարեց և պատժեց, աղախինը երախտամոռ եղաւ. վատ գործ կատարեց էլի պատժեց. Այսպիսով մենք էլի տեսանք, որ չար, վատ — վնասակար գործ կատարող Պախրատուրը, աղքատը վարձատընցան և մարդիկ նրանց սիրեցին.

Մեր պատմութեան յարմար ի՞նչ առածներ գիտէր.

1) Կատուին խաղ է, մկան մահ է.

2) Ապրել կայ երկաթ է, ապրել կայ աղջկամատն գրադարան

3) Բանն արա, յետոյ պարձենցիր Հ. Յ. Շ. Պ. Ռ. Ա. Շունչիչնա բնութագիր Գործադրութիւն.

Այս պատմութեան մէջ ում հաւանական է ապահովագործութեան համար, օձին և ՅԱԿԱՎԱՆԻ ԱՆԴԱՆ

կամ է, եզր մէկը երախտագէտ է.

ի՞նչո՞ւ լաւ է.

ի՞նչ պէտք է անէք, որ դուք էլ երախտագէտ լինէք.

Չեզանից ով երախտագէտ է եղել.

Ո՞վ կարող է պատմել.

Սպա սովորեցէք երախտագէտ մանկան այս ոտանաւորը.

Նս ունիմ մի սրտիկ.

Փոքրիկ սիրտ, բարի սիրտ.

Կըծքիս մէջ նա ասում է.

Տիկ, տիկ, տիկ.

Քեզ սիրում եմ բարի հայրիկ.

Քեզ սիրում եմ ջան մայրիկ,

Մեր պատմութեան յարմար ի՞նչ հանելուկներ գիտէք:

Ց Ա Ն Կ

1. Երկու խօսք (յառաջաբանի տեղ)	5
2. Ընտառի մանուկը (հէքիաթ և Աղայեանի)	13
3. Զանկըլօ-Պանկլօ (ժողովրդական Հայկունու կենդանական վէպից)	29
4. Թռչնատուը	37
5. Պոշատ կաշաղտկ (ժողովրդական-Շերէնց-Պանայ Սագից)	46
6. Ծոյլ ընկերներ (ժողովրդական Հայկունու կենդ. վէպ.)	53
7. Ուրախ ջուհակը (ժողովրդական - Սաղալեան)	63
8. Աղւէսն ու աղռաւը (ժողովրդական. Հայկ. կենդ. վէպ.)	72
9. Աղքատն ու օձը (ժողովրդ. Հայկ. կենդ. վէպ.)	82

ՀՀ Ազգային գրադարան



NL0240671

44 127